ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԻՔԱՅԵԼ ԱՐՄԵՆԻ ՄԱԼԽԱՍՅԱՆ

ԱՐՄԵՆ ՆՎԵՐԻ ԽԱՉԻԿՅԱՆ

ՄԱՆՈՒԿ ԱՐՄԵՆԻ ՄԱԼԽԱՍՅԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԱՆՑՄԱՆ ԱՐԴԻ ՓՈՒԼԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2023

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

МИКАЭЛ МАЛХАСЯН, АРМЕН ХАЧИКЯН
МАНУК МАЛХАСЯН

MIKAYEL MALKHASYAN, ARMEN KHACHIKYAN
MANUK MALKHASYAN

ТЕКУЩИЙ ЭТАП ДЕМОГРАФИЧЕСКОГО ПЕРЕХОДА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

THE CURRENT STAGE OF THE DEMOGRAPHIC TRANSITION IN THE REPUBLIC OF ARMENIA

ЕРЕВАН – YEREVAN
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ – YSU PRESS
2023

ՀՏԴ 314
ԳՄԴ 60.7
Մ 163

Տպագրվում է
ԵՊՀ պատմության ֆակուլտետի
գիտական խորհրդի երաշխավորությամբ

Գիտական խմբագիրներ՝ պ.գ.դ., պրոֆ. Էդիկ Մինասյան
պ.գ.թ., դոց. Գեղամ Բադալյան

Գրախոսներ՝ ք.գ.դ., պրոֆ. Արթուր Աթանեսյան
տ.գ.թ., դոց. Կառլեն Խաչատրյան

Խմբագիր՝ Լենա Ասրյան

Մալխասյան Միքայել, Խաչիկյան Արմեն, Մալխասյան Մանուկ

Մ 163 Ժողովրդագրական անցման արդի փուլը Հայաստանի Հանրապետությունում / Մ. Մալխասյան, Ա. Խաչիկյան, Մ. Մալխասյան.– Եր.: ԵՊՀ հրատարակչություն, 2023. - 160 էջ + 16 էջ ներդիր:

Մենագրության մեջ համալիր ուսումնասիրությամբ ներկայացված է ժողովրդագրական անցման արդի փուլը ՀՀ-ում՝ կանգ առնելով առանձնահատկությունների, միտումների և դրանք պայմանավորող առանցքային իրադարձությունների վրա: Վեր են հանված ժողովրդագրական քաղաքականության, պատմաժողովրդագրական միտումների, 2020 թ. պատերազմի, կորոնավիրուսային համավարակի և այլ գործոնների ազդեցությունը ժողովրդագրական գործընթացների վրա, ներկայացված է ծնելիության և մահացության գործակիցների շարժընթացը, մասամբ՝ նաև միգրացիայի և բնակչության տարաբնակեցման համակարգի ազդեցությունը ժողովրդագրական իրավիճակի վրա: Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ 21T-6A273 ծածկագրով «Ժողովրդագրական անցման ներկա փուլը ՀՀ-ում» գիտական նախագծի շրջանակում:

Գիրքը կարող է օգտակար լինել ժամանակակից և պատմական ժողովրդագրության հետազոտողների, պատմաբանների, սոցիոլոգների, ուսանողների և ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 314
ԳՄԴ 60.7

DOI: https://doi.org/10.46991/YSUPH/9785808426467

ISBN 978-5-8084-2646-7

© Մալխասյան Միքայել, 2023
© Խաչիկյան Արմեն, 2023
© Մալխասյան Մանուկ, 2023
© ԵՊՀ հրատարակչություն, 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն *(Միքայել Մալխասյան)*……5

Գլուխ Ա. Ժողովրդագրական անցման արդի փուլի համաշխարհային միտումները *(Միքայել Մալխասյան)*……12

Գլուխ Բ. Ժողովրդագրական անցման արդի փուլը Հայաստանի Հանրապետությունում (2020 թ. պատերազմի և COVID-19 համավարակի ազդեցության նախնական գնահատմամբ) *(Միքայել Մալխասյան, Արմեն Խաչիկյան)*……32

Գլուխ Գ. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դերն ընտանիքի ինստիտուտի արժևորման հարցում և պետություն-եկեղեցի համագործակցության հնարավորությունները պետական ժողովրդագրական քաղաքականության շրջանակում *(Տ. Աբրահամ (Մանուկ) քհն. Մալխասյան)*……137

Եզրակացություն *(Միքայել Մալխասյան, Արմեն Խաչիկյան, Տ. Աբրահամ քհն. Մալխասյան)*……145

Текущий этап демографического перехода в Республике Армения (Резюме)……151

The Current Stage of the Demographic Transition in the Republic of Armenia (Summary)……152

Օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկ……153

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժողովրդագրական ներկա իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում[1] բնորոշվում է ժողովրդագրական անցման տեսության հիմնադրույթների՝ Արևմտյան աշխարհի համար բնութագրական իրողություններով:

1970-1980-ական թթ. Արևմուտքի արդյունաբերացված պետություններն սկսում են մուտք գործել հետարդյունաբերական հասարակության ժամանակաշրջան, որը բնորոշվում է տեխնոլոգիական նորարարությունների միջոցով արդյունաբերության արտադրողականության շարունակական աճով և տնտեսության մեջ ծառայությունների ոլորտի գերակայությամբ: Միաժամանակ նկատելի են դառնում ավանդական արժեքային համակարգերի մշակութաբանական կերպափոխումներ՝ «մշակութային հեղափոխություն», որը 1980-ական թթ. երկրորդ կեսից համակում է նաև սոցիալիստական ճամբարի երկրների մեծ մասին: Հասարակական այս փոփոխություններին համընթաց նկատվում է բնակչության բնական աճի աստիճանական նվազում, և նախորդ դարի վերջին քառորդին եվրոպական մոտ 20 պետություններում գրանցվում է բնակչության թվաքանակի բնական նվազում, երբ մահացությունը գերազանցում

---

[1] *Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ-ի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6A273 ծածկագրով «Ժողովրդագրական անցման ներկա փուլը Հայաստանի Հանրապետությունում (2020 թ. Արցախյան պատերազմի և COVID-19 համավարակի ազդեցության գնահատմամբ)» գիտական նախագծի շրջանակներում:*

է ծնելիությանը, մի երևույթ, որը մասնագետներն անվանում են «բնակչության ձմեռ» կամ դեպոպուլյացիա[2]:

Բնակչության թվի նվազում եվրոպական երկրներում մինչև 20-րդ դարի վերջին քառորդը նկատվել է մի քանի առանձին դիպվածներով՝ «Սև մահ» (ժանտախտի համաեվրոպական համաճարակ, 14-րդ դար, հատկապես՝ 1346-1353 թթ., մահացած մարդկանց թվաքանակը՝ շուրջ 25 մլն)[3], 30-ամյա պատերազմ (1618-1648 թթ., առնվազն 8 մլն)[4], Առաջին աշխարհամարտ (1914-1918 թթ., ավելի քան 10 մլն)[5], Քաղաքացիական պատերազմ Ռուսաստանում (1917-1922 թթ., մինչև 12 մլն)[6], սով ԽՍՀՄ-ում (1932-1933 թթ., մոտ 7.5 մլն)[7], Երկրորդ աշխարհամարտ (1939-1945 թթ., 45-50 մլն)[8] և այլն, սակայն դրանց պատճառները դրվագային են՝ պատերազմներ, հիվանդություններ ու սով, մինչդեռ դրանք զգալիորեն տարբերվում են 20-րդ դարի վերջին եվրոպական երկրների ժողովրդագրական ճգնաժամի պատճառներից ու բնույթից:

---

[2] Տե՛ս **Вишневский А.,** Демографическая история и демографическая теория, Москва, 2019, էջ 184-186: Տե՛ս նաև **Ливи Бачи М.,** Демографическая история Европы, пер. с итальянского А. Миролюбовой, Санкт-Петербург, 2010 (итал. изд. – Рим-Бари, 1998); «Население России в XX веке. Исторические очерки», т. 3, кн. 3: 1991-2000 гг., Москва, 2012; **Մալխասյան Մ.,** Ժողովրդագրական ճմեռը եվրոպական պետություններում արդի ժամանակաշրջանում (20-րդ դ. վերջ - 2011 թ.), «Պատմություն և մշակույթ», 2012, թիվ Գ, էջ 202-209:

[3] **Alchon S.A.,** A Pest in the Land: New World Epidemics in a Global Perspective, Albuquerque, 2003, p. 21.

[4] **Willson P.,** The Thirty Years War: Europe's Tragedy, London, 2009, p. 787.

[5] **Kitchen M.,** Europe between the Wars, New York, 2000, p. 22.

[6] **Эрлихман В.,** Потери народонаселения в XX веке, Москва, 2004, с. 67.

[7] **Андреев Е., Дарский Л., Харькова Т.,** Демографическая история России: 1927-1959, Москва, 1998, с. 81.

[8] Թիվն արտացոլում է միայն եվրոպական երկրների կորուստները (տե՛ս **Winter J. M.,** Demography of the War, Oxford, 2002, էջ 290):

ժողովրդագրական անցման արդի փուլում, որ տարբեր ուսումնասիրողների կողմից անվանվում է ժողովրդագրական անցման հինգերորդ փուլ (4 փողային մոդելում՝ չորրորդ)[9] կամ էլ ժողովրդագրական երկրորդ անցում, լավագույն դեպքում պահպանվում է բնակչության պարզ վերարտադրությունը, իսկ վատագույն դեպքում բնակչության թիվը սկսում է նվազել: ՀՀ-ը ներկայումս գտնվում է ժողովրդագրական անցման այս փուլի հորձանուտում:

Խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանում ժողովրդագրական անցման գործընթացների ուսումնասիրությամբ զգալի աշխատանք է կատարել տ.գ.դ., պրոֆ. Վլադիմիր Խոջաբեկյանը[10], ում հրատարակած գրքերում մանրամասն նկարագրված են ՀՀ բնակչության՝ որպես ժողովրդագրական համալիրում կատարվող կերպափոխումները վիճակագրական լայն հենքով: ՀՀ ժողովրդագրական իրավիճակի և գործընթացների վերաբերյալ տարբեր հոդվածներ են հրատարակել սոցիոլոգիայի, տնտեսագիտության և պատմագիտության ոլորտների ներկայացուցիչներ, սակայն ժողովրդագրական անցման արդի փուլն այնքան արագ է վերա-

---

[9] Տե՛ս **Մանուկյան Ս.,** ժողովրդագրական անցման փուլերը Հայաստանում, «Օրբելի» վերլուծական կենտրոն, պաշտոնական կայք. https://orbeli.am/hy/post/238/2019-06-19/%D4%BA%D5%B8%D5%B2%D5%B8%D5%BE%D6%80%D5%A4%D5%A1%D5%A3-%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6+%D5%A1%D5%B6%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6+%D6%83%D5%B8%D6%82%D5%AC%D5%A5%D6%80%D5%A8+%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4, հասանելի էր՝ 11/08/2023:

[10] Տե՛ս **Խոջաբեկյան Վ.,** Հայկական ՍՍՀ բնակչությունը և աշխատանքային ռեսուրսների վերարտադրության արդի պրոբլեմները, Երևան, 1976; *նույնի*՝ Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դ. շեմին, Երևան, 2002; *նույնի*՝ Regularities of the Demographic Processes in Armenia in the 19th and 20th Centuries and at the Threshold of the 21st Century, Yerevan, 2004:

փոխվում, որ նորագույն ուսումնասիրությունների անհրաժեշտության կարիքը միշտ զգացվում է:

Սույն մենագրության նպատակն է ուսումնասիրել ժողովրդագրական անցման արդի փուլի հիմնական բնութագիրը ՀՀ-ում՝ COVID-19 համավարակի և 2020 թ. Արցախյան պատերազմի ժողովրդագրական հետևանքների նախնական գնահատմամբ: Սա կարևոր է ոչ միայն ժողովրդագրական անցման ներկա փուլը բնութագրելու, այլև ապագա միտումները կանխատեսելու համար:

Նշված նպատակին հասնելու համար խնդիր ենք դրել ներկայացնել և վերլուծել բնական աճը բնութագրող տվյալները՝ ծնելիության և մահացության ցուցանիշները, դրանց վրա ազդող տարաբնույթ գործոնները: Կարևոր նշանակություն է տրվել ամուսնությունների և ամուսնալուծությունների հարաբերակցության ներկայացմանը՝ որպես ծնելիության վրա ուղղակիորեն ազդող գործոնի վերլուծության նախապայման: Նույն կերպ մահացության վերլուծության տեսանկյունից կարևորվել է պատճառների հարաբերակցության և դրա փոփոխության ներկայացումը: Առանձնակի նկատի են առնվել COVID-19 համավարակի և 2020 թ. Արցախյան պատերազմի ժողովրդագրական հետևանքները: Միևնույն ժամանակ նշենք, որ կատարված ուսումնասիրությունը չի սպառում ոլորտին առնչվող բոլոր հարցերը, ընդհակառակը՝ լրացուցիչ դաշտ է բացում ՀՀ ժողովրդագրական իրավիճակի վերաբերյալ նոր ուսումնասիրությունների համար: Բացի այդ՝ ժողովրդագրական անցման արդի փուլը շարունակվում է, նրան բնորոշ տարբեր առանձնահատկություններ մերթընդմերթ փոփոխվում կամ կերպափոխվում են, հետևաբար

շրջափուլը շարունակական անընդհատ ուսումնասիրության կարիք է զգում, և այդ իսկ պատճառով սույն կոլեկտիվ մենագրությունը լրամշակվելու և վերահրատարակվելու անհրաժեշտության առաջ է կանգնելու մոտ ապագայում:

Ուսումնասիրության համար օգտագործվել են բնակչության թվաքանակի և շարժընթացի վերաբերյալ ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական տվյալները: Որպես աղբյուր օգտագործվել են նաև Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ)՝ ՀՀ բնակչության թվաքանակի և աճի վերաբերյալ կանխատեսումները, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) և այլ պետությունների վիճակագրական հրապարակումները և ժողովրդագրական քաղաքականության վերաբերյալ փաստաթղթերը: Այդուհանդերձ, պաշտոնական վիճակագրության որոշ տվյալներ տարակուսանք ենք առաջացնում, հետևաբար ներկայացրել ենք դրանց վերաբերյալ մեր հաշվարկները և մեկնաբանությունը: Թեև համացանցում և փորձագիտական հանրույթում շատ են տարաբնույթ հաշվարկներ COVID-19 համավարակի և 2020 թ. Արցախյան պատերազմի ժողովրդագրական հետևանքների վերաբերյալ, այդուհանդերձ ձեռնպահ ենք մնացել դրանք մեր աշխատանքում կիրառելուց: Առանձին դեպքերում այս առնչությամբ ներկայացրել ենք մեր կարծիքը:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ ՀՀ-ում 2000-ական թվականներից սկսվել են մշակվել և իրագործվել ժողովրդագրական քաղաքականության տարբեր ուղղություններով միջոցառումներ, որոնք տարբեր տարիների լրացվել և ավելի ընդգրկուն են դարձել՝ որոշ չափով դրական ներգործություն են ունենալով ժողովրդա-

գրական իրավիճակի բարելավման հարցում, օրինակ՝ մշակվել են ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման տարեկան պետական ծրագրեր՝ համապատասխան միջոցառումների ցանկերով, սահմանվել են երեխայի ծննդյան, միանվագ դրամական աջակցության, կանխավճարի ապահովագրության, երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության ծրագրեր և այլն: Միևնույն ժամանակ դժվար է հստակ գնահատական տալ այդ ծրագրերի արդյունավետությանը, որովհետև դրա համար անհրաժեշտ է դրանց արդյունավետության գնահատման համալիր հետազոտություն, որը մեր ուսումնասիրության խնդիրներից դուրս է:

Առաջնորդվելով ժողովրդագրական մակրոանալիզի և պատմահամեմատական քննության մեթոդներով՝ վերլուծել և ներկայացրել ենք ժողովրդագրական ներկա իրավիճակը բնութագրող հիմնական տվյալները և դրանց ազդեցությունը ՀՀ բնակչության թվաքանակի աճի կամ նվազման միտումների վրա՝ չանդրադառնալով մասնավոր դեպքերի՝ առանձին ընտանիքների և անձանց վերաբերող տվյալների ուսումնասիրությանը: Հաճախ կիրառվել է պատմահամեմատական մեթոդը՝ նախորդ տարիների ցուցանիշների և հարևան պետությունների տվյալների հետ համեմատությունների վերլուծության ներկայացմամբ: Ի վերջո, հանգել ենք եզրակացության, որ արդի գործընթացները ժողովրդագրական ճգնաժամի համատեքստում են, առանձին ամիսների վերաճում են ժողովրդագրական «ձմեռվա»՝ բնակչության բնական նվազման, և երկարաժամկետ տեսանկյունից կարող են տանել բնակչության սեղմված վերատադրության, երբ ծնունդների թիվը, ցավոք, կարող է

կայուն կերպով զիջել մահվան դեպքերին:

Ընդհանուր առմամբ՝ սույն մենագրությունը ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ. Միքայել Մալխասյանի, ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի ասպիրանտ Արմեն Խաչիկյանի և Սբ. Հովհաննես համալսարանի (St. Johns University, NY, USA) պրոֆեսոր, ա.գ.դ. Տ. Աբրահամ (Մանուկ) քահանա Մալխասյանի գիտական քառամյա համագործակցության[11] հանրագումարն է: Հետազոտական խումբը շնորհակալություն է հայտնում տարբեր ոլորտների բոլոր այն մասնագետներին, ովքեր իրենց խորհուրդներով նպաստել են ուսումնասիրության կայացմանը:

[11] Խնդրո առարկա թեմայի շուրջ երեք մասնագետներից յուրաքանչյուրը սեփական նեղմասնագիտական տեսնակյունից հանդես են եկել գիտական զեկուցումներով և գիտահանրամատչելի ելույթներով, ինչպես նաև հրատարակել են գիտական հոդվածներ: Տե՛ս **Մալխասյան Մ., Խաչիկյան Ա.,** Հայաստանի Հանրապետության բնակչության բնական աճի արդի վիճակը. միտումներ և մարտահրավերներ, «Հայաստանի սոցիալ-ժողովրդագրական վիճակի բարելավման խնդիրներն ու ռազմավարությունը», Երևան, 2019, էջ 1-17; **Մալխասյան Մ., Խաչիկյան Ա., Տ. Աբրահամ քհն. Մալխասյան,** Հայաստանի Հանրապետության բնակչության բնական աճը ժողովրդագրական անցման արդի փուլի համատեքստում. միտումներ և մարտահրավերներ, «Հայագիտության հարցեր», 2021, թիվ 1, էջ 131-154; **Մալխասյան Մ.,** Ժողովրդագրական ներկա իրավիճակը ՀՀ-ում (COVID-19 համավարակի և 2020 թ. Արցախյան պատերազմի ժողովրդագրական հետևանքների պայմաններում), «Գիտական Արցախ», 2022, թիվ 2 (13), էջ 62-77; **Խաչիկյան Ա.,** Ժողովրդագրական մարտահրավերները ՀՀ և Արցախի պաշտպանական հնարավորությունների համատեքստում, «Գիտական Արցախ», 2022, թիվ 3 (14), էջ 20-34: Հրատարակման փուլում են ևս երկու հոդվածներ:

Գլուխ Ա

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԱՆՑՄԱՆ ԱՐԴԻ ՓՈՒԼԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

20-րդ դարի վերջին քառորդին եվրոպական մոտ 20 պետություններում գրանցվել է բնակչության սեղմված վերարտադրություն, այսինքն՝ բնակչության թվի բնական նվազում, երբ մահացությունը գերազանցում է ծնելիությանը: 21-րդ դարի առաջին քառորդում գործընթացն ավելի է ինտենսիվացել, սակայն դա պայմանավորված է ոչ միայն վերարտադրողական վարքագծի փոփոխության վրա ավանդաբար ազդող առողջապահական, տնտեսական և կոմունալ-բնակարանային պայմաններով, այլև ավանդական ինստիտուտների և նորմերի վերանայմամբ ու վերարժևորմամբ, այսինքն՝ հասարակական վերափոխումներով:

Հայաստանյան հասարակական քննարկումների օրակարգում հաճախ է հայտնվում Եվրոպական Միության և Ռուսաստանի Դաշնության բնակչության թվաքանակի նվազման թեման՝ իսլամ դավանողների տեսակարար կշռի աճի և դրա հետևանքով հասարակական կերպափոխումների վերաբերյալ շեշտադրումներով: Սակայն հազվադեպ են քննարկվում ԱՄՆ-ում ժողովրդագրական ճգնաժամի միտումների, սպիտակամորթների տեսակարար կշռի նվազման և դրա հասարակական-քաղաքական ու մշակութաբանական հետևանքները, որոնք անուղղակիորեն ազդում են ոչ միայն եվրոպական երկրների, այլև ՀՀ համապատասխան ոլորտներում զարգացման միտումների վրա: Վերջերս հայ ընթերցողի դատին է

ներկայացվել ԱՄՆ-ի Հանրապետական կուսակցության ականավոր ներկայացուցիչ, ամերիկյան պահպանողականության գաղափարախոս Փեթրիք Բյուքենենի[12] ամենահետաքրքիր աշխատություններից մեկի՝ «Արևմուտքի վախճանը» երկասիրության հայերեն թարգմանությունը: Մենագրության առանցքը Արևմուտքի ժողովրդագրական ճգնաժամն է՝ դրանից բխող կործանարար հետևանքներով: Խնդիրը նրա ուշադրության կենտրոնում է հայտնվել այն ժամանակ, երբ նա զբաղեցրել է ԱՄՆ-ի նախագահներ Ռիչարդ Նիքսոնի (1969-1974 թթ.), Ջերալդ Ֆորդի (1974-1977 թթ.) և Ռոնալդ Ռեյգանի (1981-1989 թթ.) խորհրդականի պաշտոնը[13]: Այդ փորձառության հիման վրա 1992 թ. Հանրապետական կուսակցության համագումարում նա հանդես է եկել «Մշակութային պատերազմ» խորագրով զեկուցմամբ, որտեղ ներկայացրել է մշակութաբանական վերարժևորումների խնդիրը՝ բարձրաձայնելով արժեհամակարգային դիմախեղման և դրա ուղղակի ազդեցությամբ հարուցված ժողովրդագրական ճգնաժամի մասին: Այն բացասական միտումները, որ նա մատնանշում էր, քաղաքական տարբեր գործիչների և մեդիայի զգալի մասի կողմից քամահրական արձագանքի արժանացան, իսկ երբ 2002 թ. հրատարակվեց նրա «Արևմուտքի վախճանը» մենագրությունը, նույնիսկ ժողովրդագրության, սոցիոլոգիայի և քաղաքագիտության ոլորտների շատ մասնագետներ թերահավատորեն վերաբերվեցին աշխատությանը: Այդուհանդերձ, նրա կանխատեսումների զգալի մասն արդեն իսկ իրականություն է

[12] Հայալեզու գրականության մեջ նաև տարածված է գործչի անվան «Պատրիկ Բյուքենան» տառադարձումը:
[13] Կենսագրության մասին առավել մանրամասն կարող եք կարդալ գործչի պաշտոնական կայքում՝ https://buchanan.org/blog/biography, հասանելի էր՝ 12/08/2023:

դարձել: Բացառություն կարելի է համարել Ռուսաստանի բնակչության թվաքանակի աճի վերաբերյալ կանխատեսումները, որոնք իրականություն չեն դարձել ներգաղթի բարձր ցուցանիշների, ծնելիության խրախուսման պետական քաղաքականության և կյանքի միջին տևողության աճի շնորհիվ: Ստորև քննարկենք ԱՄՆ-ի ժողովրդագրական իրավիճակը ցույց տվող վիճակագրական վերջին ցուցանիշները:

2020 թ. ապրիլի 1-ին ԱՄՆ-ում անցկացվել է համապետական 24-րդ մարդահամարը, որի արդյունքները մեկամյա մշակումից հետո հրապարակվել են 2021 թ. ապրիլի 26-ին: Բնակչության թվաքանակը 10 տարում աճել է 7.4%-ով, մինչդեռ նախորդ տասնամյակում՝ 9.7%-ով: Ընդ որում՝ Արևմտյան Վիրջինիա, Իլինոյիս և Միսիսիպի նահանգների բնակչության թիվը նվազել է, իսկ նախորդ տասնամյակում՝ 2000-2010 թթ., բացասական էր միայն Միչիգանի ցուցանիշը[14]: Մարդահամարի տվյալներին հաջորդող տարիներին՝ 2020, 2021 և 2022 թթ., ԱՄՆ-ում գրանցվել են համապատասխանաբար 3.383.729, 3.464.321 և 3.273.705 մահվան դեպքեր, իսկ բնական աճը նույն տարիներին կազմել է +229.918 (+0.07%), +200.061 (+0.06%) և +394.053 (+0.12%)[15]: Սրանք ԱՄՆ-ի պատմության մեջ

[14] 2010 և 2020 թթ. մարդահամարների վիճակագրական աղյուսակները և պաշտոնական պարզաբանումները տե՛ս՝
https://web.archive.org/web/20210426194109/https://www.census.gov/data/tables/2020/dec/2020-apportionment-data.html, հասանելի էր՝ 12/08/2023:
https://web.archive.org/web/20101224044247/http://2010.census.gov/news/releases/operations/cb10-cn93.html, հասանելի էր՝ 12/08/2023:

[15] Տե՛ս “The birth rate ticked up in 2022. Can the reversal last?” by Alex Fitzpatrick, Kavya Beheraj, Based on Current Final Natality Data Released by CDC, Retrieved on October 4, 2023, https://www.axios.com/2023/10/04/birth-rate-fertility-rate-decline-data-statistics-graph-2022, հասանելի էր՝ 05/10/2023:

ռեկորդային ամենավատ ցուցանիշներն են: Համեմատության համար՝ 1990 թ. ԱՄՆ-ի բնակչության բնական աճը կազմել է +2.009.749, իսկ 2017 թ.՝ +1.041.997 մարդ[16]: Նվազման միտումն այս տվյալները դիտարկելիս ակնհայտ է դառնում:

Երբ 2021 թ. օգոստոսի 12-ին հրապարակվեցին նաև բնակչության կազմին վերաբերող տվյալները, շատ հետաքրքիր պատկերի ականատես դարձանք: Ոչ-լատինամերիկյան ծագմամբ սպիտակամորթների (non-Hispanic White) տեսակարար կշիռը կազմել է ռեկորդային ցածր՝ 57.8%[17], մինչդեռ 30 տարի առաջ՝ 1990 թ., նրանք բնակչության 75.6%-ն էին[18]: Արդեն 1990-ական թթ. սպիտամորթների շրջանում կանանց պտղաբերության գործակիցը զիջում էր բնակչության վերարտադրության համար անհրաժեշտ նվազագույն գործակցին, այնուհետև 2000-ական թթ. ապահովել է ընդամենը տարեկան միջինը 0.12% բնական աճ, իսկ 2010-ական թթ. նրանց բաժին է ընկել ԱՄՆ-ում գրանցվող ծնունդների միայն կեսը[19], և

---

[16] ԱՄՆ-ի բնակչության բնական աճին առնչվող ցուցանիշների տվյալները մանրամասն տե՛ս Առողջության վիճակագրության ազգային կենտրոնի կայքում՝ https://www.cdc.gov/nchs/data_access/vitalstatsonline.htm, հասանելի էր՝ 12/08/2023:

[17] Պաշտոնական վիճակագրությունը տե՛ս՝ https://www.census.gov/library/visualizations/interactive/race-and-ethnicity-in-the-united-state-2010-and-2020-census.html, հասանելի էր՝ 12/08/2023: Վիճակագրության մեթոդաբանության և տվյալների մեկնաբանման համար տե՛ս նաև՝ "What The New Census Data Shows About Race Depends On How You Look At It", National Public Radio, Retrieved on August 13, 2021, https://www.npr.org/2021/08/13/1014710483/2020-census-data-us-race-ethnicity-diversity, հասանելի էր՝ 12/08/2023:

[18] Պաշտոնական վիճակագրությունը տե՛ս՝ https://web.archive.org/web/20141114183703/http://www.census.gov/population/www/documentation/twps0056/tab01.pdf, հասանելի էր՝ 12/08/2023:

[19] Non-white births outnumber white births for the first time in US, The Telegraph, Retrieved on May 17, 2012, https://web.archive.org/web/20120518033441/http://www.telegraph.co.uk/news/worldnew

ընդհանուր թվաքանակն էլ պակասել է ավելի քան 5 միլիոնով: Լատինամերիկյան և իսպանական ծագմամբ ամերիկացիները (Hispanic and Latino Americans) 2020 թ. 65.3 մլն են՝ բնակչության 19.5%-ը, մինչդեռ 1990 թ. ընդամենը 9%-ն էին: Նրանք արդեն գերազանցում են ոչ-լատինամերիկյան ծագմամբ սպիտակամորթներին Նյու Մեքսիկո (47.7%) և Կալիֆոռնիա (39.4%) նահանգներում, իսկ Տեխասում (39.3%) ընդամենը 0.4%-ով էին զիջում, ինչը միգրացիայի և բնական աճի բարձր տեմպերի հետևանքով արդեն գերազանցվել է 2021-2022 թթ.: Հատկանշական է, որ 10 տարում առնվազն կիսով չափ ավելացել է նրանց թվաքանակը Հյուսիսային Դաքոթայում (+148.1%), Հարավային Դաքոթայում (+75,1%), Վերմոնտում (+68.4%), Լուիզիանայում (+67.5%), Թենեսիում (+65.2%), Նյու Հեմփշիրում (+62%), Մոնտանայում (+58.2%), Մեյնում (+57.1%), Քենթուքիում (+56.5%), Արևմտյան Վիրջինիայում (+56.4%) և Մերիլենդում (+55.1%)[20]: Նրանց աճի միջին գործակիցը գերազանցել է սպիտակամորթներին և սևամորթներին նահանգների մեծագույն մասում:

Նահանգների բնակչության թվաքանակի և ռասայական կազմի փոփոխությունը բերում է նաև քաղաքական համակարգի վերափոխումների, օրինակ՝ ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատում և նախագահական ընտրությունների համար նախատեսված Ընտրիչների կոլեգիայում նրանց ունեցած տեղերի թվի

---

s/9271573/Non-white-births-outnumber-white-births-for-the-first-time-in-US.html, հասանելի էր՝ 12/08/2023:

[20] Պաշտոնական վիճակագրությունը տե՛ս՝ https://www.census.gov/library/visualizations/interactive/race-and-ethnicity-in-the-united-state-2010-and-2020-census.html, հասանելի էր՝ 12/08/2023:

փոփոխության: Այսպես՝ Արևմտյան Վիրջինիան, Իլինոյիսը, Կալիֆոռնիան, Միչիգանը, Նյու Յորքը, Փենսիլվանիան, Օհայոն կորցնում են մեկական տեղ Կոնգրեսի ստորին պալատում, իսկ Տեխասը ձեռք է բերում միանգամից երկու, Կոլորադոն, Հյուսիսային Կարոլինան, Մոնտանան, Օրեգոնը, Ֆլորիդան՝ մեկական տեղ: Կոնգրեսականների տեղերով համալրվող Կոլորադոյում, Հյուսիսային Կարոլինայում, Մոնտանայում, Օրեգոնում և Ֆլորիդայում լատինամերիկյան ու իսպանական (իսպանախոս) ծագմամբ մարդկանց թվաքանակի աճը կազմել է համապատասխանաբար +21.6, +39.8, +58.2, +30.8 և +34.9 %: Այսօրինակ փոփոխություններն ազդում են առհասարակ տարբեր օղակների ընտրությունների արդյունքների վրա, և առաջիկայում այս հիմքով ներքաղաքական ուղեգծի փոփոխությունների նախահիմքեր կարող են ստեղծել առնվազն համայնքային ու առավելագույնը համապետական (հանրապետականներ-դեմոկրատներ) մրցակցության դաշտում: Սա այն է, ինչի մասին դեռ 20 տարի առաջ կանխատեսում էր Փ. Բյուքենենը: Նրա համոզմամբ՝ «արևմտյան մարդու» ամենամեծ խնդիրը, որ աստիճանաբար արևմտյան քաղաքակրթության ինքնաոչնչացման գործընթացի է վերածվել, երեխաներ ունենալու ցանկության նվազումն է, որն արտահայտվում է ծնելիության մակարդակի անկմամբ և հանգեցնում է բնակչության նվազման: Հիմք ընդունելով քաղաքակրթությունների տարբեր տեսությունները և հատկապես ժողովրդագրական անցման փուլի ընդհանուր օրինաչափությունները՝ դժվար է հաշվի չառնել նաև Փ. Բյուքենենի այն տեսակետը, որ արևմտյան քաղաքակրթության մեջ է դիտարկում նաև Ռուսաստանին և Ճա-

պոնիային՝ պնդելով, որ ժողովրդագրական տեսանկյունից 21-րդ դարի միգրացիոն հոսքերի և քաղաքակրթությունների բախման մեծ թատերաբերում Ռուսաստանը դառնալու է Արևմուտքի արևելյան սահմանագիծը, քանի որ, ի տարբերություն ԱՄՆ-ի, սեփական տարածքով ուղիղ սահմանակցում է իսլամական և չինական քաղաքակրթություններին: Հենց այս նկատառումից ելնելով՝ նա կարծիք է հայտնում, որ Ռուսաստանն արևմտյան աշխարհում պետք է դիտարկվի որպես ամենամարդաշատ երկրի՝ Չինաստանի հետ անմիջապես «սահմանապահ գոտի»: Միևնույն ժամանակ նա ջանք չի խնայում՝ ընթերցողին համոզելու, որ ամերիկյան պետությունը և արևմտյան քաղաքակրթությունը գերակա են իրենց պատմական առաքելությամբ: Հետևելով քաղաքակրթությունների դասակարգման տեսաբանների (Ա. Թոյնբի, Ժ. Լը Գոֆ, Ս. Հանթինգթոն և ուրիշներ) մոտեցմանը՝ նա պնդում է, որ արևմտյան աշխարհն իր ինքնության ձևավորման, մշակութային զարգացման և քաղաքակրթական նվաճումների համար պարտական է քրիստոնեությանը, իսկ նրանից օտարումն անխուսափելիորեն հանգեցնում է Արևմուտքի քաղաքակրթական թուլացմանը, դիմադրողականության նվազմանը և ինքնության անկմանը, ինչն անխուսափելիորեն ազդում է այդ քաղաքակրթության մասնիկը հանդիսացող բոլոր պետությունների բնակչության վերարտադրողական վարքագծի դրսևորման վրա: Նշված երևույթների ընկալման տարբերությունները նա նույնիսկ նկատում է միմյանց անմիջապես հաջորդող սերունդների մեջ՝ համարելով, որ քաղաքական քարոզչության միջոցով այն վերածվել է ժողովրդագրական ֆենոմենի: Հենց այս տե-

սանկյունից է նա մեկնաբանում 20-րդ դարում արևմտյան աշխարհի սերունդների քաղաքացիական նախաձեռնությունների, հասարակական վարքի և քաղաքական որոշումների տրամաբանությունը: Ըստ այդմ՝ ամերիկյան և գրեթե նույնությամբ՝ եվրոպական հասարակության սերունդները 20-րդ դարի սկզբից մինչև մեր օրերը դասակարգվում և խմբավորվում են հետևյալ կերպ՝ Կորուսյալ (1883-1900 թթ.)[21], Մեծագույն (1901-1927 թթ.), Լռակյաց (1928-1945 թթ.), Ժողովրդագրական պայթյունի («բեյբի-բումերներ», 1945-1964 թթ.), Իքս (1965-1984 թթ.), Իգրեկ («միլենիալներ», 1985-1996 թթ.), Զեթ («զումերներ», 1997-2012 թթ.), Ալֆա (2013-2020-ական թթ.)[22]: Եթե առաջին երկու սերունդների անվանումները և բնորոշումը կապված են երկու աշխարհամարտերը վերապրելու հանգամանքով, ապա երրորդը, պատանեկության շրջանում մարդկության պատմության մեջ ամենամեծ պատերազմը տեսնելով, նախընտրում էր խուսափել քաղաքացիական դիրքորոշում արտահայտելուց, իսկ չորրորդը հետպատերազմական շրջանում ծնելիության զգալի աճի արդյունք էր, դաստիարակվում էր Սառը պատերազմի գաղափարական առաջնային ազդեցությամբ, ինչպես նաև գտնվում էր մշակութային հեղափոխության կամ «հակամշակույթ»-ի հորձանուտում: Իքս-սերունդը հակամշակույթի և պահպանողականության զուգահեռ գոյությամբ անցումային հասարակություն էր, որտեղ ամուսնա-

[21] Փակագծերում նշված են տվյալ սերնդի ներկայացուցիչների ծննդյան տարեթվերը:
[22] Տե՛ս **Chaney D., Touzani M., Ben Slimane K.,** Marketing to the (New) Generations: Summary and Perspectives, Journal of Strategic Marketing, 2017, 25:3, pp. 179-189, DOI: 10.1080/0965254X.2017.1291173: Տե՛ս նաև Masnick G., Defining the Generations Redux, Retrieved on February 16, 2017, https://www.jchs.harvard.edu/blog/defining-the-generations-redux, հասանելի էր՝ 15/08/2023:

կան միջին տարիքը, կանանց աշխատանքային ներգրավվածությունը և ամուսնալուծությունների մակարդակն աճում էին, իսկ «միլենիալներն» արդեն տեղեկատվական դարաշրջանի սերունդն են, երբ ծնունդներն ավելի քիչ էին, քան երբևէ եղել են պատմության մեջ: «Զումերներն» առաջինն են ծնվել ու մեծացել համացանցի պայմաններում և հաճախ առաջնորդվում են աշխարհաքաղաքացու գաղափարներով, իսկ «ալֆա» սերնդի ներկայացուցիչներն առաջինն են, որ ամբողջությամբ ծնվել են 21-րդ դարում և փաստացի զուգահեռ գտնվում են նաև վիրտուալ իրականության մեջ՝ սոցիալական ցանցեր, առցանց դասեր և այլն:

Աղյուսակ 1. 20-21-րդ դարերի սերունդների դասակարգման հիմնական բնորոշումները

	Պայմանական անվանումը	Ծննդյան տարեթվեր	Գլխավոր բնորոշումը
1	Կորուսյալ	1883-1900	Առաջին և Երկրորդ աշխարհամարտերի վերապրում:
2	Մեծագույն	1901-1927	Երկրորդ աշխարհամարտի վերապրում:
3	Լռակյաց	1928-1945	Պատանեկության շրջանում Երկրորդ աշխարհամարտի վերապրում և այդ պատճառով քաղաքացիական դիրքորոշում արտահայտելուց խուսափում:
4	«Բեյբի-բումերներ»	1945-1964	Ժողովրդագրական պայթյուն. հետպատերազմական շրջանում ծնելիության զգալի աճի արդյունք, Սառը պատերազմի գաղափարական ազդեցությամբ դաստիարակություն, մշակութային հեղափոխության մեջ ներգրավում:
5	Իքս	1965-1984	Մշակութային հեղափոխության և պահպանողականության զուգահեռ գոյությամբ անցումային հասարակություն, որտեղ ամուսնական միջին տա-

			ոիքը, կանանց աշխատանքային ներգրավվածությունը և ամուսնալուծությունների մակարդակն աճում էին:
6	Իգրեկ («միլենիալներ»)	1985-1996	Տեղեկատվական դարաշրջանի սերունդ, որում ծնունդներն ավելի քիչ էին, քան երբևէ պատմության մեջ:
7	Զեթ («զումերներ»)	1997-2012	Առաջինն են ծնվել և մեծացել համացանցի պայմաններում և հաճախ առաջնորդվում են աշխարհաքաղաքացու գաղափարներով:
8	Ալֆա	2013-2020-ական թթ.	Առաջինն են, որ ամբողջությամբ ծնվել են 21-րդ դարում և զուգահեռ գտնվում են նաև վիրտուալ իրականության մեջ՝ սոցցանցեր, առցանց դասեր ևն:

Վերջին սերունդների բնորոշումները ցույց են տալիս, որ հասարակության՝ շատ երեխաներ ունենալու պահանջմունքը նվազել է: Ի դեպ, սա ոչ միայն «արևմտյան մարդուն» բնորոշ միտում է, այլև բնութագրական է ողջ աշխարհին՝ բացառությամբ Անդրսահարյան Աֆրիկայի: Բավական է նշել, որ ժողովրդագրական պայթյունի ժամանակաշրջանում գտնվող 1961 թ. համեմատ՝ 2021 թ. ծնելիության համաշխարհային մակարդակը կրկնակի ցածր է, և եթե մինչև 21-րդ դարը գոնե ծնունդների բացարձակ ցուցանիշն աճում էր, ապա 2021 թ., 2011 թ. հետ համեմատ, գրանցվել են 6%-ով քիչ ծնունդներ: Հաշվի առնելով տարբեր երկրներում «ժողովրդագրական ձմեռվա» պատճառների առանձնահատկությունները՝ դրանք ստորև դասակարգել ենք որոշակի խմբերի.

ա. Արևմտաեվրոպական պետություններ՝ Ավստրիա, Գերմանիա, Դանիա, Իտալիա, Լյուքսեմբուրգ, Հունաստան, Միացյալ Թագավորություն, Շվեդիա, Պորտուգալիա և այլն:

20-րդ դարում Առաջին և Երկրորդ աշխարհամարտերը պատճառ են դարձել եվրոպական պետությունների մեծ մասում բնակչության բացասական բնական շարժի[23], իսկ խաղաղության պայմաններում սովորաբար ծնելիության գործակիցը բարձր էր մահացության գործակցից: Սակայն 1907, 1911, 1919, 1929 և 1935-1938 թթ. Ֆրանսիայում առաջին անգամ նկատվել է մի գործընթաց, երբ խաղաղ կամ միայն գաղութներում տեղի ունեցող ընդհարումների պայմաններում արձանագրվում է բնակչության բացասական բնական շարժ: Այնուհանդերձ, սա տևական բնույթ չի կրել, և միայն 1970-ական թթ. եվրոպական մի քանի երկրների համակել է «ժողովրդագրական ձմեռը»: Առաջինն այս երևույթը նկատվում է Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում, որտեղ 1972 թվականից մինչ օրս բնակչության բնական շարժը բացասական է՝ -0.1-0.3%: Այնուհետև Գերմանիային հետևեցին Լյուքսեմբուրգը, Ավստրիան և Դանիան:

Արևմտյան Եվրոպայում բնակչության թվի նվազումը պայմանավորված է ծնելիության չափազանց ցածր մակարդակով, օրինակ՝ 2010 թ. գրանցվել է միջինը 10.9 ծնունդ 1000 բնակչի կամ 1.6 երեխա 1 կնոջ հաշվով, ընդ որում՝ Գերմանիայում վերջին ցուցանիշը 1.36 էր, իսկ Պորտուգալիայում՝ 1.32[24]: Ծնելիության ցածր մակարդակն իր հերթին պայմանավորված է Արևմտյան Եվրոպայի պետություններում ուրբանիզացման չափազանց բարձր մակարդակով (60-98%), կանանց կրթվածության մակարդակով և հասարակական զգալի ներգրավմամբ, երիտասարդության սոցիալ-հոգեբանական

[23] Բնական շարժը որևէ տարածքում մեկ տարում ծնվածների և մահացածների թվաքանակների տարբերությունն է:
[24] Latest figures on the demographic challenges in the EU: Demography report 2010, Eurostat, p. 1.

տրամադրվածությամբ, սեկուլյարիզացման (աշխարհականացման) աստիճանով[25] և այլ սոցիո-մշակութային ու տնտեսական գործոններով[26]: Փաստորեն, բարեկեցության մակարդակը որոշիչ դրական հանգամանք չէ ծնելիության մակարդակի բարձրացման համար:

Աղյուսակ 2. «Ժողովրդագրական ձմեռ» արձանագրած արևմտաեվրոպական պետությունները

Տեղը	Պետությունը	Բնակչության բացասական բնական շարժի տարիները	Բնական շարժը (%)	
			2021 թ.	2022 թ.
1	Ավստրիա	1919, 1935-1938, 1975-1980, 1983, 1985-1986, 1999, 2003, 2009, 2012-2013, 2020-2022	-0.07	-0.12
2	Բելգիա	2020, 2022	+0.05	-0.03
3	Գերմանիա	1972-2022	-0.27	-0.39
4	Դանիա	1981-1988, 2022	+0.11	-0.01
5	Իսպանիա	2015-2022	-0.24	-0.29
6	Իտալիա	1993-2003, 2005, 2007-2022	-0.52	-0.54
7	Լյուքսեմբուրգ	1973-1978	+0.34	+0.31

[25] 2000-ական թթ. մի քանի երկրներում հասարակության վերակրոնականացման գործընթացը դարձել է ծնելիության մակարդակի՝ փոքր-ինչ բարձրացման խթան, օրինակ՝ Ավստրիայում 2000 թ. ավանդական կաթոլիկ ընտանիքներում կնոջ պտղաբերության գործակիցն (1.32) ավելի բարձր էր, քան բողոքական (1.21) և աթեիստ (0.86) ընտանիքներում (տե՛ս **Westoff Ch., Frejka T.,** Religiousness and Fertility among European Muslims, Population and Development Review, 2007, 33(4), pp. 785-809. http://www.jstor.org/stable/25487622): Մոսկվայի պետական համալսարանի սոցիոլոգիայի ֆակուլտետի ընտանիքի սոցիոլոգիայի ամբիոնը «Կրոն, ընտանիք, երեխաներ» խորագրով հետազոտության շրջանակում հարցում է իրականացրել, որով պարզ է դարձել՝ կնոջ պտղաբերության գործակիցն ավանդական ուղղափառ քրիստոնեական ընտանիքում 1.62 է, իսկ աթեիստ ընտանիքում՝ 1.36 (տե՛ս **Синельников А.,** Семейная жизнь и религиозность, «Демографические исследования» (сборник научных статей), Москва, 2009, էջ 214-215):

[26] Տե՛ս **Коротаев А., Халтурина Д., Божевольнов Ю.,** Законы истории: Вековые циклы и тысячелетние тренды. Демография, экономика, войны, 3-е изд., Москва, 2010, էջ 40-44:

8	Հունաստան	1996, 1998-2003, 2011-2022	-0.55	-0.6
9	Միացյալ Թագ.	1976, 2020	+0.04	+0.02
10	Շվեդիա	1997-2001	+0.22	+0.1
11	Պորտուգալիա	2007, 2009-2022	-0.44	-0.39
12	Սան Մարինո	2017-2022	-0.3	-0.17
13	Ֆրանսիա	1907, 1911, 1919, 1929, 1935-1938	+0.09	+0.06
14	Ֆինլանդիա	2016-2022	-0.15	-0.32

Ժողովրդագրական քաղաքականությունը սոցիալ-հոգեբանական ուղղությամբ աշխատացնելու շնորհիվ Արևմտյան Եվրոպայի պետությունների մեծ մասը 2007-2011 թթ. արձանագրել է ծնելիության մակարդակի որոշակի աճ՝ դուրս բերելով նրանց ծայրահեղ ցածր (<1.3 երեխա 1 կնոջ հաշվով) մակարդակից: Այդուհանդերձ, ծերացող եվրոպացիները չեն կարող այժմ ապահովել իրենց սերնդափոխության «եվրոպականությունը», քանի որ աճի մի զգալի մասը պայմանավորված է ներգաղթյալ բնակչության շրջանում ծնելիության բարձր մակարդակով: Երիտասարդ (15-35 տարեկան) աշխատուժի մշտական ներգաղթը Արևմտյան Եվրոպա ապահովում է նոր սերունդ տալու որոշակի չափաբաժին: Այսպես՝ 2010 թ. Լյուքսեմբուրգում ծնունդով օտարերկրացիները կազմում էին բնակչության 38%-ը, Լիխտենշտայնում՝ 33%-ը, Շվեյցարիայում՝ 22%-ը, Ֆրանսիայում՝ 19%-ը, Ավստրիայում՝ 15.2%-ը, Շվեդիայում՝ 14.3%-ը: Ընդամենը 10 տարում՝ 2020 թ., Շվեդիայում ցուցանիշը դարձել է 19.7%[27], իսկ առկա միտումների պահպանման դեպքում 2065 թ.

[27] Պաշտոնական վիճակագրությունը տե՛ս https://www.scb.se/en/finding-statistics/statistics-by-subject-area/population/population-composition/population-statistics/, հասանելի էր՝ 17/08/2023:

կլինի 51%[28]: 2021 թ. Շվեդիայում լույս աշխարհ եկած երեխաների 29.6%-ը, իսկ 2022 թ.՝ արդեն 30%-ը ծնունդով Շվեդիայից չեն[29], և սա այն դեպքում, երբ հաշվի չի առնվում մայրերի ծնողների երբեմնի քաղաքացիության հարցը: Արևմտյան Եվրոպայի երկրներում ծնելիության ցուցանիշների մի զգալի մասը պայմանավորված է միգրացիոն քաղաքականության արդյունքում երկրում հայտնված ներգաղթյալների վերարտադրողական վարքագծով, որի շնորհիվ դեռևս 1970-1980-ական թթ. Լյուքսեմբուրգը, Ավստրիան և Դանիան հաղթահարեցին «ժողովրդագրական ձմեռը»: Այդուհանդերձ, անգամ այդ պարագայում Ավստրիան և Դանիան 2022 թ. վերստին հայտնվել են սեղմված վերարտադրության օջախում, որովհետև գաղտնիք չէ, որ ներգաղթյալները տարիների ընթացքում յուրացնում են տեղական կյանքի սկզբունքների զգալի մասը և մասամբ ընդօրինակում վերարտադրողական վարքագծի դրսևորումները:

բ. 2004, 2007 և 2013 թթ. Եվրոպական Միությանն անդամագրված արևելաեվրոպական պետություններ՝ Բուլղարիա, Էստոնիա, Լատվիա, Լեհաստան, Լիտվա, Խորվաթիա, Հունգարիա, Չեխիա, Ռումինիա, Սլովակիա, Սլովենիա (տե՛ս աղյուսակ 3):

Արևելաեվրոպական պետություններում բնակչության թվի նվազումը պայմանավորված է ծնելիության չափազանց ցածր մա-

---

[28] Տե՛ս **Tarvainen K.,** Population projections for Sweden, Norway, Denmark, and Finland, 2015-2065. Bulletin of Geography. Socio-economic Series, 2018, № 39, էջ 147-160:

[29] Տե՛ս Children per woman by country of birth 1970-2022 and projection 2023-2070, Statistics Sweden, Last updated 2023-04-18. https://www.scb.se/en/finding-statistics/statistics-by-subject-area/population/population-projections/population-projections/pong/tables-and-graphs/children-per-woman-by-country-of-birth-19702022-and-projection-20232070/, հասանելի էր՝ 17/08/2023:

կարդակով, օրինակ՝ 2010 թ. 1000 բնակչի հաշվով միջինը 10.6 ծնունդ կամ 1 կնոջը՝ 1.5 երեխա, ընդ որում՝ Հունգարիայում վերջին ցուցանիշը 1.32 էր, իսկ Լատվիայում՝ 1.31[30]: Ծնելիության ցածր մակարդակն իր հերթին կրկին պայմանավորված է Արևելյան Եվրոպայի երկրներում ուրբանիզացման բարձր մակարդակով (60-70%), կանանց կրթվածության մակարդակով և հանրային ներգրավվածությամբ, հասարակության սոցիալ-հոգեբանական վիճակով և այլ սոցիո-մշակութային ու տնտեսական գործոններով:

Աղյուսակ 3. «Ժողովրդագրական ձմեռ» արձանագրած արևելաեվրոպական պետությունները

Տեղը	Պետությունը	Բնակչության բացասական բնական շարժի տարիները	Բնական շարժը (%)	
			2021 թ.	2022 թ.
1	Ալբանիա	2021	-0.12	+0.02
2	Բելառուս	1993-2022	-1.01	-0.59
3	Բոսնիա և Հերց.	2005, 2007, 2009-2022	-0.67	-0.42
4	Բուլղարիա	1913, 1990-2022	-1.39	-0.96
5	Էստոնիա	1919-1920, 1929, 1946, 1991-2009, 2011-2022	-0.4	-0.42
6	Լատվիա	1920, 1946, 1991-2022	-0.91	-0.79
7	Լեհաստան	2002-2005, 2013-2022	-0.5	-0.38
8	Լիտվա	1919, 1994-2022	-0.87	-0.73
9	Խորվաթիա	1991-1995, 1998-2022	-0.68	-0.6
10	Հայաստան	2020	+0.08	+0.33
11	Հս. Մակեդոնիա	2019-2022	-0.54	-0.24
12	Հունգարիա	1981-2022	-0.64	-0.5
13	Մոլդովա	1947, 1998-2013, 2017-2022	-0.62	-0.36
14	Չեխիա	1994-2005, 2013, 2015,	-0.27	-0.19

[30] Demography report 2010, p. 2.

		2019-2022		
15	Չեռնոգորիա	2020-2022	-0.34	-0.01
16	Ռումինիա	1992-2022	-0.74	-0.46
17	ՌԴ	1933, 1992-2012, 2016-2022	-0.72	-0.41
18	Սերբիա	1992-2022	-1.09	-0.7
19	Սլովակիա	2001-2003, 2020-2022	-0.31	-0.13
20	Սլովենիա	1993, 1997-2005, 2017-2022	-0.2	-0.23
21	Վրաստան	1993, 2000-2007, 2020-2022	-0.38	-0.18
22	Ուկրաինա	1933, 1991-2022	-1.08	-0.98

Արևելյան Եվրոպայում բնակչության բացասական բնական շարժի պատճառները, ընդհանրություններով հանդերձ, նաև որոշակիորեն տարբերվում են Արևմտյան Եվրոպայից: Այստեղ բարեկեցության մակարդակը որոշիչ դրական հանգամանք է հանդիսանում ծնելիության մակարդակի բարձրացման համար, և պատահական չէ, որ 2000-ական թթ. բարեկեցության մակարդակի աճն ազդել է կնոջ պտղաբերության ցուցանիշի վրա՝ 1.25-ից աճելով մոտ 1.5 երեխայի 1 կնոջ հաշվով: Բացասական դեր է խաղում այն, որ երիտասարդ արական բնակչության մի մասը սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմանների պատճառով արտագաղթել է նախորդ երկու տասնամյակներում, հետևաբար ամուսնությունների ցուցանիշը կրճատվել է: Բացի այդ՝ Արևելյան Եվրոպայում մահացության մակարդակն Արևմտյան Եվրոպայի ցուցանիշից բարձր է: Ի տարբերություն Արևմտյան Եվրոպայի՝ օտար պետություններում ծնվածները բնակչության համեմատաբար փոքր մասն են միայն կազմում (2010 թ. դրությամբ՝ Հունգարիա՝ 4.4%, Չեխիա՝ 3.8%,

Սլովակիա՝ 1.2%), սակայն ԵՄ-ին անդամակցելուց հետո ցուցանիշն աճում է: Դրան վերջին տարիներին նպաստում են նաև սիրիական և ուկրաինական ճգնաժամերը:

գ. Նախկին Հարավսլավիայի՝ ԵՄ անդամ չհանդիսացող պետություններ՝ Սերբիա, Բոսնիա և Հերցեգովինա, Հյուսիսային Մակեդոնիա, Չեռնոգորիա: Այս խմբին բնորոշ են արևելաեվրոպական մյուս պետությունների դեպոպուլյացիայի պատճառները, սակայն ուրբանիզացման մակարդակը համեմատաբար ցածր է՝ մոտ 60%, մահացությունն Արևելյան Եվրոպայի մյուս երկրներից բարձր է, իսկ երիտասարդ տղամարդ բնակչության մի մասը 1990-ական թթ. հարավսլավական պատերազմների արդյունքում առաջացած քաղաքական և սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմանների պատճառով արտագաղթել է, այսինքն՝ զավակ ունենալու ունակ արական բնակչության մի մասի արտագաղթի, ինչպես նաև պատերազմական կորուստների (Սերբիայում, Խորվաթիայում և Բոսնիայում) հետևանքով, վերոնշյալ պետություններում սեռերի միջև քանակական հավասարակշռությունը խախտվել է՝ հանգեցնելով ամուսնությունների կրճատման: Բացասական դեր է խաղում նաև հետպատերազմական բարոյահոգեբանական անկումը, ինչն արտահայտվում է ամուսնաընտանեկան հարաբերությունների ձևավորման գործընթացում և բնակչության վերարտադրողական վարքագծում: Օտար պետություններում ծնվածները բնակչության չնչին մասն են (2010 թ. դրությամբ՝ Չեռնոգորիա՝ 3%, մնացածը՝ 1%-ից քիչ):

դ. ԱՊՀ եվրոպական մասի և ԵՄ արևելյան գործընկերության պետություններ՝ Բելառուս, ՀՀ, Մոլդովա, ՌԴ, Վրաստան, Ուկրաինա: Պետությունների այս խմբին բնորոշ են թե՛ արևելաեվրոպական մյուս պետությունների և թե՛ արևմտաեվրոպական երկրների դեպոպուլյացիայի պատճառները, սակայն առկա են հետևյալ տարբերությունները. ուրբանիզացման մակարդակը բարձր է՝ շուրջ 70%, տղամարդիկ կազմում են բնակչության միայն 45-47%-ը[31], իսկ մահացության մակարդակը նկատելիորեն գերազանցում է եվրոպական մյուս երկրների նույն ցուցանիշը, ինչը պայմանավորված է սոցիալ-տնտեսական և սոցիալ-հոգեբանական իրավիճակով: Օտար պետություններում ծնվածները բնակչության ոչ այնքան մեծ մասն են կազմում (2010 թ. դրությամբ՝ Ուկրաինա՝ 14.7%, ՌԴ՝ մոտ 10%, մնացածը՝ 1%-ից քիչ): Սոցիալական ինստիտուտների վերաձևման ակտիվ գործընթաց է ընթանում, որը պայմանավորված է ԽՍՀՄ փլուզումից հետո առաջացած սոցիո-մշակութային, տնտեսական և միանգամայն նոր հասարակական կարգով: Տարածքային հակամարտությունների շուրջ անկայուն օջախները ևս բացասական դեր են խաղում:

Ի դեպ, այս շարքում ՀՀ բնակչության բնական աճի մակարդակի զգալի նվազումն անկախության տարիներին չի վրիպել նաև Փ. Բյուքենենի ուշադրությունից: Նա Հայաստանի մասին գրում է իր աշխատության մեջ որպես ժողովրդագրական աղետի պատճառով մահացող պետության:

[31] Տե՛ս «Практикум по статистике населения и демографии», Москва, 2011, էջ 67:

Այսպիսով՝ ծերացած բնակչություն ունեցող եվրոպական երկրները հասարակական լրջագույն վերափոխումների արդյունքում հայտնվել են այնպիսի մի իրավիճակում, երբ «եվրոպական պոպուլյացիայի» հետագա գոյությունը, երկարաժամկետ տեսանկյունից, վտանգված է: Եվրամիության անդամ պետություններում արդեն, կանխատեսմանը համաձայն[32], 2014 թվականից սկսած 1 մլն մարդ ավելի է կենսաթոշակային տարիքի անցնում, քան համալրում աշխատանքային ռեսուրսները: 2010 թ. հունվարի 1-ից 2011 թ. հունվարի 1-ը «ժողովրդագրական ձմեռը» բացարձակ ցուցանիշներով շարունակվել է եվրոպական 17, իսկ 2011 թ. հունվարի 1-ից 2012 թ. հունվարի 1-ը՝ 18 պետություններում: Ընդհանուր առմամբ՝ ԵՄ բոլոր անդամների բնակչության ընդհանուր բնական շարժը 2012 թվականից բացասական է՝ 2021 թ. հասնելով սոսկալի -1.208.880, իսկ 2022 թ.՝ -1.263.010 մարդ ցուցանիշին (-0,28%)[33]: Հաշվի առնելով այն փաստը, որ ԵՄ բնակչության թվաքանակի աճը տարիներ շարունակ մինչև 70%-ով պայմանավորված է եղել ներգաղթով[34], հասկանալի է դառնում, որ հասարակության նոր բաղադրիչի էթնոմշակութային ինտեգրացիայի այսօրվա տեմպերի պահպանման դեպքում տասնամյակներ անց օտար էթնիկ տարրը կարող է լուրջ դերակատարություն ունենալ Եվրոպայի սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքի որոշումների կայացման գործում:

---

[32] Demography report 2010, p. 2.
[33] Պաշտոնական վիճակագրությունն առավել մանրամասն տե՛ս՝ https://ec.europa.eu/eurostat/data/database, հասանելի էր՝ 18/08/2023:
[34] Demography report 2010, p. 40.

Ե. Արևելյան և Հարավային Ասիայի պետություններ՝ Ճապոնիա (2005 թ. և 2007-2022 թթ., այդ թվում՝ 2021 թ.՝ -0.51%, իսկ 2022 թ.՝ -0.64%), Հարավային Կորեա (2020-2022 թթ., այդ թվում՝ 2021 թ.՝ -0.11%, իսկ 2022 թ.՝ -0.24%), Չինաստան (2022 թ.՝ -0.06%) և Թայիլանդ (2021 թ.՝ -0.03%, իսկ 2022 թ.՝ -0.14%): Չինաստանի բնակչության բնական աճը խիստ դանդաղել էր դեռևս 2021 թ.՝ ընդամենը +0.034%[35]: Բնական աճի նվազման միտում նկատվում է Արևելյան և Հարավային Ասիայի մյուս երկրներում ևս, նույնիսկ՝ Հնդկաստանում, որտեղ արդեն երրորդ տարին անընդմեջ (2020-2022 թթ.) կնոջ պտղաբերության գործակիցը ցածր է անհրաժեշտ նվազագույն մակարդակից:

Այսպիսով՝ բնակչության բնական աճի արդի ցուցանիշները բնորոշվում են ոչ այնքան հուսադրող միտումներով, և ապագա տարիներին կտրուկ դրական փոփոխություն չի սպասվում, ինչն արձանագրված է նաև ՄԱԿ կողմից 2022 թ. հրապարակված հերթական զեկույցում, որին կանդրադառնանք ՀՀ մասին խոսելիս:

[35] China's population records slight growth in 2021 as birth rate sinks further, NewsOnAir, Retrieved on January 17, 2022, https://newsonair.com/2022/01/17/chinas-population-records-slight-growth-in-2021-as-birth-rate-sinks-further/, հասանելի էր՝ 17/08/2023:

ԳԼՈՒԽ Բ

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԱՆՑՄԱՆ ԱՐԴԻ ՓՈՒԼԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (2020 թ. պատերազմի և COVID-19 համավարակի ազդեցության նախնական գնահատմամբ)

Ժողովրդագրական անցման արդի փուլին բնորոշ իրավիճակի ընդհանուր բնութագիրը ՀՀ-ում: ՀՀ բնակչության բնական աճի մակարդակն անկախության տարիներին զգալիորեն նվազել է, ինչը չի վրիպել հետազոտողների աչքից: Վերջին տարիներին ՀՀ ժողովրդագրական իրավիճակի վերաբերյալ քննարկումները երբեմն դուրս են եկել գիտական բանավեճի դաշտից և քաղաքականացված երանգավորում ստացել: Անգամ պետական այրերի մակարդակով հնչել են հայտարարություններ՝ իբր մինչև 2050 թ. ՀՀ բնակչության թվաքանակը կտրուկ աճ է գրանցելու՝ հասնելով հինգ մլն[36]: Իսկ ինչպիսի՞ն է ժողովրդագրական գործընթացների վերաբերյալ գնահատականը մասնագիտական շրջանակներում:

2019 թ. հունիսի 17-ին ՄԱԿ տնտեսական և սոցիալական գործերի վարչության բնակչության բաժանմունքը հրատարակել է «World Population Prospects 2019» փաստաթղթերի ժողովածուն[37], որում ներկայացված են ՄԱԿ անդամ երկրների ժողովրդագրական հիմնական ցուցանիշները և դրանց կանխատեսվող շարժընթացը

---

[36] Տե՛ս օրինակ՝ https://armenpress.am/arm/news/1028298.html (Հատված ՀՀ վարչապետի կողմից 21.09.2020 թ. ներկայացված մինչև 2050 թ. ՀՀ ռազմավարության տեսլականից), հասանելի էր՝ 18.08.2023:

[37] Տե՛ս «World Population Prospects 2019: Release Note». United Nations, Department of Economic and Social Affairs, Population Division (2019): https://population.un.org-/wpp/Publications/Files/WPP2019_Release-Note.pdf, հասանելի էր՝ 19.08.2023:

մինչև դարավերջ[38]: Ըստ այդմ՝ ՀՀ մշտական բնակչության[39] թվաքանակը 2050 թ. լինելու է 2.816 մլն, իսկ դարավերջին՝ 2.039 մլն[40]: Այս կանխատեսման հիմքում ընկած է ՀՀ-ում անցկացված բոլոր մարդահամարների, ծնունդների ու մահերի և միգրացիայի մնացորդի տվյալների վերլուծությունը:

ՄԱԿ կանխատեսումը հրապարակելու ժամանակահատվածի՝ 2019 թ. իրավիճակի համեմատ հնարավոր փոփոխությունը պատկերացնելու համար նշենք, որ, ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների, ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2019 թ. հուլիսի 1-ի դրությամբ (2011 թ. մարդահամարի հիմքով վարվող ընթացիկ հաշվառմամբ) 2.9616 մլն էր[41]: 2021 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակը նույն հաշվարկային հիմքով 2.9641 մլն էր[42], և չնչին աճը պայմանավորված է կորոնավիրուսային համավարակի պատճառով միգրացիոն սահմանափակումներով: Այս թվերը բնակչության թվաքանակի կտրուկ աճի հնարա-

---

[38] Տե՛ս «World Population Prospects 2019: Data Booklet». United Nations, Department of Economic and Social Affairs, Population Division (2019): https://population.un.org/wpp-/Publications/Files/WPP2019_DataBooklet.pdf, հասանելի էր՝ 19.08.2023:

[39] Մշտական բնակչության մեջ նշվում են նաև ժամանակավոր բացակայողները: Մշտական բնակչության հաշվարկի համար միգրացիայի տվյալները վերագնահատվում են նախորդ տարվա՝ տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության ամփոփ տվյալներով՝ հաշվի առնելով, որ հաշվառման գործընթացը կախված է քաղաքացիների կամքից: Վերագնահատված ցուցանիշներում ներգաղթյալ են հաշվվում բնակություն հաստատելու նպատակով ՀՀ ժամանածները, արտագաղթած՝ արտերկրում բնակվելու մեկնածները: Միգրացիայի մնացորդը հաշվարկվում է այդ ցուցանիշների տարբերությամբ:

[40] Տե՛ս նույն տեղում, էջ 16:

[41] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2019 թ. հուլիսի 1-ի դրությամբ. վիճակագրական տեղեկագիր», Երևան, 2019, էջ 3:

[42] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-դեկտեմբերին. տեղեկատվական ամսական զեկույց», ՀՀ վիճակագրական կոմիտե, Երևան, 2021, էջ 148: Այսուհետ ՀՀ ՎԿ զեկույցները սեղմ են հղվելու:

վորության մասին խոսելու որևէ հնարավորություն չեն տալիս, մանավանդ եթե նկատի ենք ունենում, որ ՀՀ մշտական բնակչության թվաքանակը դեռևս 2015 թ. նվազել է երեք միլիոնի հոգեբանական շեմից, և ներկայումս, փաստորեն, հետհաշվարկ է արվում առաջին անգամ 1978 թ. գրանցված երեք միլիոն ցուցանիշից:

Թեպետ ՀՀ հանրային դիսկուրսում առավել ընդունված է բնակչության թվաքանակի աճի կամ նվազման վրա ազդող հիմնական գործոն համարել միգրացիան, սակայն հատկանշական է, որ գիտական դիսկուրսում, այդ թվում՝ վերը նշված կանխատեսման պարագայում, ավելի մեծ նշանակություն ունի բնական աճի, այսինքն՝ ծնելիության և մահացության ցուցանիշների տարբերության շարունակական նվազումը: Այս երևույթի կարևորությունը հասկանալու համար մենք հաշվարկել ենք միգրացիոն ակտիվ հոսքերի ժամանակահատվածում՝ 1989-2019 թթ., ՀՀ բնակչության բնական հավելաճի՝ բոլոր տարիների հանրագումարը, որը կազմում է 612.745 մարդ: Հետևաբար պետք է հաշվի առնել, որ ՀՀ միգրացիոն բացասական հավելաճը բնակչության ընդհանուր շարժի հաշվարկում մասամբ ծածկվել է դրական այդ ցուցանիշով:

Ընդհանուր առմամբ՝ ժողովրդագրական անցման արդի փուլը, ինչպես նշել ենք սույն կոլեկտիվ մենագրության նախորդ գլխում, բնորոշվում է բնական աճի համաշխարհային նվազմամբ և աստիճանաբար ավելի ու ավելի շատ երկրներում ընտանեկան պլանավորման մեջ երեխաների փոքր թվաքանակի նախատեսմամբ[43]: Այս միտումներն ավելի քան երկու տասնյակ երկրներում արդեն իսկ

[43] Առավել մանրամասն տե՛ս **Bricker D., Ibbitson J.,** Empty Planet: The Shock of Global Population Decline, New York, Crown, 2019:

հանգեցրել են բնակչության դեպոպուլյացիայի՝ սեղմված վերարտադրության, այսինքն՝ ավելի շատ մարդ մահանում է, քան ծնվում (օրինակ՝ Բելառուս, Գերմանիա, Էստոնիա, Լատվիա, Լիտվա, Հարավային Կորեա, Հունգարիա, Ճապոնիա, ՌԴ, Սերբիա, Ուկրաինա և այլն)[44]: Այս համատեքստում պատահական չէ, որ, օրինակ՝ դեռևս 2007 թ. ՌԴ-ում ընդունված՝ մինչև 2025 թ. ժողովրդագրական զարգացման հայեցակարգի անկյունաքարային դրույթներից է ՌԴ էթնոսների վերարտադրության հիմքը միգրացիոն ներհոսքերի փոխարեն դարձնել բնական աճը[45]:

Վերադառնալով ՄԱԿ կանխատեսմանը՝ պետք է նշենք, որ նման հաշվարկները հիմնված են իրավիճակի և միտումների վրա, ուստի դրանք կարող են մեծապես փոխվել ժողովրդագրական տարբեր ցուցանիշների որոշակի տեղաշարժերի արդյունքում: Պատահական չէ, որ նմանատիպ նախորդ զեկույցում, որ հրապարակվել է 2017 թ., ՀՀ բնակչության թվի կանխատեսումը 2050 թ. համար եղել է 2.7 մլն, իսկ դարավերջին՝ 1.849 մլն[46]: Այստեղ տարբերության պատճառը 2017 և 2019 թթ. հրապարակումների հաշվարկային հիմքում բնական աճի՝ համապատասխանաբար 2010-2015 և 2015-2020 թթ. և միգրացիայի մնացորդի (2005-2015 և 2010-2020 թթ.) ցուցանիշներն են: Ըստ այդմ՝ հնգամյա ժամանակահատվածում ծնելիության տարեկան միջին գործակիցը 1.5%-ից նվազել է

---

[44] Տե՛ս նույն տեղում: Տե՛ս նաև **Ливи Бачи М.**, նշվ. աշխ.:

[45] Տե՛ս «Указ Президента Российской Федерации от 09.10.2007 г. № 1351. Об утверждении Концепции демографической политики Российской Федерации на период до 2025 года». http://kremlin.ru/acts/bank/26299, հասանելի էր՝ 19.08.2023:

[46] Տե՛ս «World Population Prospects: The 2017 Revision, Data Booklet». ST/ESA/SER.A/401. United Nations, Department of Economic and Social Affairs, Population Division (2017), էջ 14:

1.4%-ի, իսկ միգրացիայի տարեկան բացասական մնացորդը կրճատվել է ավելի քան երեք անգամ[47], հետևաբար կանխատեսումը փոքր-ինչ բարելավվել է: Հաշվի առնելով կանխատեսումների ժամանակահատվածի երկարությամբ պայմանավորված ճշգրտության հավանականության նվազումը և մեր տարածաշրջանում ժողովրդագրական գործընթացների վրա ազդող իրողությունների փոփոխականության անկանխատեսելիությունը՝ մենք մինչև դարավերջ հաշվարկներ կատարելը նպատակահարմար չենք համարում: Փոխարենը մեզ համար առաջնային են բնական աճին առնչվող մտահոգիչ երևույթների և մոտակա տարիների ընթացքում հնարավոր մարտահրավերների ներկայացումը: Նման մոտեցումը մեզ համար սկզբունքային է եղել նաև մեր նախորդ ուսումնասիրություններում և արդարացրել է իրեն, երբ նկատի ենք առնում ՄԱԿ կողմից 2022 թ. հրապարակված նոր զեկույցը, որտեղ նոր կանխատեսման հիմքում արձանագրված են 2020 թ. աղետալի իրադարձությունների ժողովրդագրական հետևանքները: Նոր զեկույցին կանդրադառնանք սույն գլխի վերջում, իսկ այժմ ներկայացնենք կնոջ պտղաբերության գործակցի կարևորությունը ժողովրդագրության մեջ, քանի որ այն կանխորոշում է ծնելիության մակարդակի միտումները:

Երկարաժամկետ տեսանկյունից կարևոր է, որ կնոջ պտղաբերության ընդհանուր գործակիցը, այսինքն՝ սերունդ պարգևելու ունակ տարիքային շեմում գտնվող մեկ կնոջը բաժին ընկնող երեխաների թիվը բնակչության պարզ վերարտադրության համար անհրաժեշտ մակարդակից մեծ լինի: Ժողովրդագրական գրականու-

[47] Տե՛ս «World Population Prospects 2019: Data Booklet», էջ 16: Հմմտ. «World Population Prospects: The 2017 Revision, Data Booklet», էջ 14:

թյան մեջ տարբեր տեսակետներ կան այս գործակցի նվազագույն շեմի մասին: ՀՀ-ում կատարված ուսումնասիրությունների մեծ մասում որպես համաշխարհային միջին գործակից դիտարկվում է 2.15-2.2-ը, հետևաբար ՀՀ բնակչության բնական աճի ճգնաժամային վիճակը համարվում է 1993 թ., երբ առաջին անգամ այդ շեմից ցածր գործակից է արձանագրվել[48]:

Թեև նշված գործակցի անհրաժեշտ նվազագույնը բնութագրական է աշխարհի գրեթե 80 երկրների համար և դանդաղ է փոփոխվում, այդուհանդերձ այն ո՛չ ունիվերսալ է և ո՛չ էլ հաստատուն: 20-րդ դարի վերջին նշված գործակցի անհրաժեշտությունը զարգացած երկրների համար կազմել է միջինը 2.15[49], իսկ 21-րդ դարի սկզբին՝ 2.1[50]: Ընդ որում՝ 2007 թ. ՌԴ համար այն 2.12 էր, իսկ Ճապոնիայում՝ նույնիսկ 2.08, թեև նրանց փաստացի գործակիցները նշված թվերից մոտ մեկ երրորդով ցածր էին[51]: Դա պայմանավորված է նախևառաջ մանկամահացության գործակցի և մայրական մահացության դեպքերի՝ տարբեր երկրներում տարբեր լինելու հանգամանքով, այսինքն՝ առողջապահական համակարգի զարգացվա-

---

[48] Տե՛ս **Մանուկյան Ս**., Հայաստանում 2017-2020 թթ. ծնունդների թվաքանակի կանխատեսում, «21-ՐԴ ԴԱՐ», 2017, թիվ 5, էջ 7; *նույնի*՝ Հայաստանի բնակչության քանակի դինամիկան պատմական կոնտեքստում 1827-2018 թթ., «Օրբելի» վերլուծական կենտրոն, պաշտոնական կայք. http://orbeli.am/hy/post/204/2019-05-03/Հայաստանի+բնակչության+քանակի+դինամիկան+պատմական+կոնտեքստում՝+1827-2018+թթ., հասանելի էր՝ 19.08.2023:

[49] Տե՛ս **Капица С**., Гиперболический путь человечества: через демографическую революцию к обществам знаний, Москва, 2009, էջ 60-61:

[50] Տե՛ս **Espenshade Th., Guzman J.C., Westoff Ch**., The Surprising Global Variation in Replacement Fertility, "Population Research and Policy Review", 2003, № 22, էջ 575:

[51] Տե՛ս **Медков В**., Рождаемость, в ежегодном докладе «Демографическая ситуация в РФ: Мониторинг демографической ситуации в Российской Федерации и тенденций ее изменения», под ред. А. Антонова, Москва, 2008, էջ 83; **Антонов А., Борисов В**., Лекции по демографии: учебник для вузов, Москва, 2011, էջ 175:

ծության պարագայում բնակչության պարզ վերարտադրության համար անհրաժեշտ պտղաբերության նվազագույն գործակիցը 2.1-2.15-ից ավելի փոքր է, իսկ հակառակ դեպքում՝ ավելի մեծ:

ՀՀ-ում այդ գործակիցը հաշվարկելու համար օգտագործել ենք հետևյալ մոդելավորումը՝ $TFR_R \approx (1+SRB)/p(A_M)$, որտեղ TFR_R-ը պտղաբերության ընդհանուր գործակիցն է, SRB-ն՝ ծնվածների մեջ երկու սեռերին պատկանող անձանց թվաքանակի հարաբերակցությունը, իսկ $p(A_M)$-ը՝ ծնվածների՝ մինչև պտղատվության տարիք (ներկա վիճակագրությունից ելնելով՝ 25-30 տարեկանի միջակայք) հասնելու հավանականության աստիճանը[52]: Քանի որ 2020 թ. ծնվածների սեռերի հարաբերակցության գործակիցը կազմել է 110 տղա՝ 100 աղջկա հաշվով, 1000 կենդանի ծնունդների հաշվով մինչև մեկ տարեկան մահացածների թիվը 7.3 է, իսկ հղիության հետ կապված բարդություններից, ծննդյան և հետծննդյան ժամանակահատվածում գրանցվել է մայրական մահացության յոթ դեպք (մայրական մահացության գործակիցը կազմել է 19.2 միավոր)[53], ստացվում է, որ ՀՀ-ում բնակչության պարզ վերարտադրության համար անհրաժեշտ պտղաբերության նվազագույն գործակիցը առնվազն 2.2 պետք է լինի, և դա դեռ այն դեպքում, երբ միգրացիայի ազդեցությունը ծնվածների՝ մինչև պտղատվության տարիք հասնելու հավանականության աստիճանի վրա փաստացի չենք դիտարկում: Վերջինս ևս հաշվի առնելու դեպքում կունենանք անհամեմատ ավելի բարձր, բայց խիստ փոփոխական գործակից, սակայն մեթո-

---

[52] Մեթոդը տե՛ս **Preston S., Heuveline P., Guillot M.**, Demography: Measuring and Modeling Population Processes, Oxford, 2001, էջ 115:

[53] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-դեկտեմբերին», էջ 149, 150, 153:

դական տեսանկյունից նման հաշվարկներում միգրացիայի պես անկայուն երևույթը նպատակահարմար չէ դիտարկել, քանի որ, ամեն դեպքում, բնակչության աճի բնական և մեխանիկական (միգրացիոն) բաղադրիչներն առանձին հաշվարկման տիրույթում են:

Ժողովրդագրական անցման արդի փուլում, որ ուսումնասիրողների կողմից անվանվում է ժողովրդագրական անցման հինգերորդ փուլ, իսկ քառափուլ մոդելում՝ չորրորդ, արդեն երկուսուկես տասնամյակ շարունակ աշխարհի շատ երկրներում, այդ թվում՝ ՀՀ-ում և Արցախում, կնոջ պտղաբերության ընդհանուր գործակցի նվազմանը զուգահեռ դիտարկվում է նաև մի երևույթ, որ տևական ժամանակ բնակչության բնական աճը դրական է մնում, քանի որ դեռևս վերարտադրողական (պտղատվության) շրջափուլում են մինչ այդ ծնված ավելի մեծ թվով կանայք: Այլ կերպ ասած՝ քանի դեռ սերունդ տալու հնարավորություն ունեն բնակչության պարզ վերարտադրության համար անհրաժեշտ մակարդակից բարձր պտղաբերության գործակից ունեցած ժամանակահատվածում ծնվածները, և միաժամանակ մահացությունը չի աճում տևական ժամանակ, երբեմն՝ նույնիսկ մինչև 30-35 տարի, տեսականորեն հնարավոր է բնական աճի դրական շարժընթաց: Այս երևույթը կոչվում է «population momentum»[54]: Դրանով արդեն չորս տասնամյակ առաջ անցել են Արևելյան Եվրոպայի երկրները և Գերմանիան, այժմ՝ ՀՀ-ը ևս:

Քննարկենք մի քանի օրինակներ, երբ այս գործընթացը նման հանգուցակետի է հասել: ՌԴ-ն դեռևս խորհրդային տարիներին՝ 1964-1965 թթ., մտել է լատենտ (թաքնված) դեպոպուլյացիայի

[54] Տե՛ս **Blue L., Espenshade Th.**, Population Momentum Across the Demographic Transition, "Population and Development Review", 2011, N 37 (4), էջ 721-747:

փուլ, երբ կնոջ պտղաբերության գործակիցն իջել է անհրաժեշտ նվազագույն շեմից, մինչդեռ դեպոպուլյացիայի բացահայտ փուլը, որը բնորոշվում է բացասական բնական աճով, այսինքն՝ բնական նվազմամբ, սկսվել է 1992 թ.[55]: Փաստորեն, 27-28 տարի ՌԴ բնակչության բնական հավելաճը դեռևս դրական է եղել, իսկ դրանից հետո սկսվել է բացահայտ դեպոպուլյացիայի փուլը, և վիճակը գոնե մասամբ շտկելու և ժողովրդագրական ճգնաժամը հաղթահարելու համար ծախսվել է մի քանի տասնյակ տրիլիոն ռուբլի գումար: Նույն անցումը մոտ երկու անգամ ավելի արագ է ընթացել Լիտվայում, որտեղ աշխատունակ բնակչության զանգվածային արտագաղթը 1990-ական թթ. արագացրել է գործընթացը: 1959-1960 թթ. նույնը կատարվել է Հունգարիայում, որտեղ մահացածների թվաքանակը գերազանցում է ծնվածներին արդեն 1981 թվից[56]: Իսկ ամենից թարմ օրինակը Հարավային Կորեան է, որտեղ 2020 թ. առաջին անգամ գրանցվել է բնակչության բացասական բնական աճ[57], իսկ լատենտ փուլն սկիզբ էր առել դեռևս 1983 թ.[58]: Փաստորեն, եթե Հունգարիայի դեպքում անցումը տևել է 21-22 տարի, Հարավային Կորեայի պարագայում եղել է 37 տարի:

---

[55] Տե՛ս **Белобородов И.**, Депопуляция в России: 15 лет демографической трагедии, «Демографические исследования: сборник», отв. редактор – А. Антонов, Москва, 2009, էջ 131-132: Տե՛ս նաև «Атлас демографического развития России», под ред. Г. Осипова и С. Рязанцева, Москва, 2009, էջ 22-25:

[56] Տե՛ս Hungarian Central Statistical Service, http://www.ksh.hu/docs/hun/xstadat/xstadat_hosszu/h_wdsd001a.html, հասանելի էր՝ 21.08.2023:

[57] Տե՛ս **Chung E., Jeong-Won H.**, Korea marks first-ever decline in registered population, «Korea Joong Ang Daily» in association with «The New York Times», Jan. 3, 2021. https://koreajoongangdaily.joins.com/2021/01/03/national/socialAffairs/population-decline-korea-aging-society/20210103165800619.html, հասանելի էր՝ 21.08.2023:

[58] Տե՛ս **Roser M.**, Fertility Rate. First published in 2014; substantive revision published on Dec. 2, 2017, https://ourworldindata.org/fertility-rate, հասանելի էր՝ 21.08.2023:

Այսպիսով՝ խնդիրը տարբեր երկրներում տարբեր ժամանակահատվածներում է ի հայտ եկել, ինչը պայմանավորված է ոչ միայն վերը նշված գործոններով, այլև բնակչության վերարտադրման ցիկլում ներգրավված հատվածի սեռատարիքային կազմով, որն իր հերթին կարող է փոփոխվել միգրացիոն հոսքերի, աղետների և պատերազմների պատճառով: Բացի այդ՝ որոշ չափով իր դերն է խաղում նախորդ սերնդի պտղաբերության գործակցի ֆենոմենը, երբ դրա ազդեցությամբ ժամանակավորապես նկատվում է ներկայիս գործակցի բարելավում, ինչպես օրինակ՝ 1970-ական թթ. կեսերին տեղի ունեցավ Հունգարիայում, սակայն չորս տարի անց նորից անկում նկատվեց, ընդ որում՝ նախկինից ավելի մեծ տեմպերով:

Ի վերջո, ինչպիսի՞ն են բնակչության բնական աճի միտումները ՀՀ-ում ժողովրդագրական անցման արդի փուլի պայմաններում:

Նախ դիտարկենք վերջին տարիներին նկատված միտումները: ՀՀ-ում ներկայումս վերարտադրության ցիկլ են մտել 1990-ական թթ. ծնվածները, երբ, օրինակ, 1990 թ. շուրջ 80 հազարի կողքին 1993 թ. գրանցվել է ընդամենը 59 հազար ծնունդ: Այդ տարիներից սկսած մինչև այժմ մայրանալու միջին տարիքը շուրջ 25 դիտարկելով՝ ստացվում է, որ 2018 թ. դրությամբ վերարտադրության ցիկլում է 1993 թ. ծնվածների՝ լավագույն դեպքում 61.8%-ը: Ընդ որում՝ տվյալ դեպքում հնարավոր չէ համարել, որ ծնելիությունը, որպես տվյալ ժամանակաշրջանում ծնված աղջիկների վերարտադրողական վարքագծի բացարձակ արտացոլում (այսինքն՝ լոկ վիճակագրական ցուցանիշ), նվազել է 38.2%-ով, քանի որ արտագաղթի բարձր տեմպերի պատճառով նրանց մի մասն իրենց վեր-

արտադրողական վարքագիծը դրևսորում են արտերկրում, այսինքն՝ զավակներ են լույս աշխարհ բերում Սփյուռքում, իսկ այդտեղ հստակ վիճակագրություն կազմելու հնարավորությունները մեթոդապես և առհասարակ, նույնիսկ՝ վարչական գրանցման տեսանկյունից, խիստ սահմանափակ են: Վերադառնալով ՀՀ ներքին ցուցանիշներին՝ նշենք, որ 1998 թ. առաջին անգամ ՀՀ-ում ծնվել է 40 հազարից պակաս երեխա, իսկ 2001 թ. գրանցվել է հակառեկորդային 32.065 ցուցանիշը, ինչն իր երկարաժամկետ ազդեցությունն է թողնում հաջորդող սերունդների վերարտադրության վրա (միջինը՝ նշված տարեթվերից 26 և 55 տարի անց՝ հաշվի առնելով մայրանալու միջին տարիքի աճի տեմպերը 2001 թվից սկսած, իսկ 2010-ական թթ. վերջից ամուսնությունների ցուցանիշների նվազման հարցում այդ տարիներն իրենց վճռորոշ դերն ունեն): 2003 թ. նկատվել է ծնելիության աճի միտում, որը, որոշ շեղումներով, պահպանվել է մինչև 2010-ական թթ. կեսեր, այնուհետև նվազում է գրանցվել. 2018 թ. ծնունդների թիվը 2017 թ. համեմատ 5.3%-ով նվազել է, թեև մահերը ևս նվազել են 5.5%-ով[59]: 2019 թ. գրանցվել են 36.041[60], 2020 թ.՝ 36.353[61], իսկ 2021 թ.՝ 36.585[62] ծնունդներ:

Վերջին տարիների համար ՀՀ-ում ծնունդների թվաքանակի մասին համեմատաբար ամենաճշգրիտ կանխագուշակումը կատարել է Ս. Մանուկյանը, որը 2007 թ. իր հոդվածում կանխատեսել է,

---

[59] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվար-դեկտեմբերին», Երևան, 2019, էջ 141:
[60] Տե՛ս նույն տեղում, էջ 149:
[61] Տե՛ս «Հայաստանը թվերով, 2021», Երևան, 2021, էջ 26:
[62] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-դեկտեմբերին», Երևան, 2022, էջ 157:

որ 2017, 2018, 2019 և 2020 թթ. ծնունդները կլինեն համապատասխանաբար 39.626, 38.609, 37.647 և 36.753[63]: Այս արժեքավոր ուսումնասիրության մեջ, փաստորեն, ներկայացվում է ծնունդների թվաքանակի նվազման միտումը, որը հետագայում հաստատվել է նույնիսկ ավելի զգալի ծավալով՝ համապատասխանաբար 37.700 և 36.502[64], իսկ 2019 թ. առաջին կիսամյակում նույնպես նկատվել է ծնունդների մոտ 1% նվազում[65]: 2019-2020 թթ. ցուցանիշները ևս, փաստորեն, կանխատեսված թվերից քիչ են: Բնական աճի արդի իրավիճակի գնահատականը հետևյալն է Ս. Մանուկյանի ուսումնասիրություններից մեկի եզրակացության մեջ. «Հայաստանում բնական աճի հետ կապված ներկայիս վատ վիճակը և վատթարացման պրոցեսը լիովին կանխորոշված չէ որևէ տեսական մոդելով: Պրոցեսը հնարավոր է կառավարել»[66]: Մոդելավորման բարդությունը պայմանավորված է գործոնների համալիր ամբողջությամբ, որոնք բավականին փոփոխական են ՀՀ պայմաններում:

Մեր կարծիքով՝ մոդելավորման դժվարության կարևոր պատճառներից է գործակիցների վերանայման մեծ հավանականությունը, քանի որ, ինչպես կանխատեսելի էր, 2022 թ. ՀՀ-ում անցկացված մարդահամարի տվյալները մշակելուց հետո վերանայվելու և վերահաշվարկվելու են նախընթաց մի քանի տարիների ծնելիության և մահացության գործակիցները. հաստատուն են դրանց միայն բացարձակ թվով ցուցանիշները, իսկ գործակիցները հաշվարկ-

---

[63] Տե՛ս **Մանուկյան Ս**., Հայաստանում 2017-2020 թթ. ծնունդների թվաքանակի կանխատեսում, էջ 6:
[64] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվար-դեկտեմբերին», էջ 141:
[65] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թ. հունվար-հունիսին», էջ 134:
[66] **Մանուկյան Ս**., Ժողովրդագրական անցման փուլերը Հայաստանում, 18.08.2023:

վում են հազար բնակչի հաշվով կամ տոկոսով: Նման փորձառություն արդեն իսկ նկատվել է, երբ 2011 թ. մարդահամարի արդյունքների հրապարակումից հետո վերահաշվարկվեցին 2001 թ. մարդահամարից հետո ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (այժմ՝ վիճակագրական կոմիտե) ընթացիկ պաշտոնական վիճակագրական հրապարակումներում ներկայացրած գործակիցները, քանի որ ընթացիկ հաշվառմամբ ստացված մշտական բնակչության թվաքանակը նախորդ տարիներին միգրացիայի մնացորդի թերհաշվարկի պատճառով գերազանցում էր մարդահամարի արդյունքով ստացված թվաքանակը շուրջ քառորդ միլիոնով: Թեև հետագայում միգրացիոն մնացորդի հաշվարկման մեթոդաբանությունը բարելավվել է, սակայն թվաքանակի վերանայումը բացառել հնարավոր չէ, մանավանդ՝ միգրացիայի բացասական միտումները շարունակվել են:

ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներով՝ 2018 թ. միգրացիոն մնացորդը բացասական էր՝ -18.500[67], ընդ որում՝ նույնիսկ ուղևորաշրջանառությունն է բացասական եղել՝ -4.588[68]: 2019 թ. միգրացիոն մնացորդը շարունակել է բացասական լինել՝ -16.000, իսկ նախորդ տարվա թիվը վերագնահատվել է 300-ով՝ -18.200[69]: Ռոսստատի տվյալներով՝ 2019 թ. ՀՀ-ՌԴ միգրացիոն մնացորդը ՌԴ համար կազմել է +35.109, այսինքն՝ մեզ համար նույնքան մինուս, իսկ ՀՀ-ից ՌԴ մեկնածների թիվը առանձին՝ 71.984[70]:

---

[67] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվար-դեկտեմբերին», էջ 141:
[68] Տե՛ս նույն տեղում, էջ 148:
[69] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թ. հունվար-դեկտեմբերին», Երևան, 2020, էջ 145:
[70] Տե՛ս Бюллетень «Численность и миграция населения Российской Федерации в 2019 году» - выпуск 2020 г., Таблица 2.6. Международная миграция Российской

2020 թ., կորոնավիրուսային հիվանդության համավարակի պատճառով միգրացիոն սահմանափակումներով պայմանավորված, միգրացիոն հոսքերը նվազել են. արդյունքում հոկտեմբերի 1-ի դրությամբ մնացորդը դեռևս աննշան դրական էր՝ +2.800[71], իսկ 12 ամիսների կտրվածքով՝ +3.300[72]: Միգրացիոն հոսքերի պատճառով բնակչության թվաքանակի մեխանիկական փոփոխությունը բնական աճի և՛ բացարձակ, և՛ հարաբերական ցուցանիշների վրա ուղղակիորեն ազդող գործոններից է:

Ի տարբերություն անկախության տարիներին մոտ երեք անգամ նվազած ծնելիության՝ մահացության ցուցանիշները գրեթե կայուն և միջինից ցածր են եղել: Մահացության համեմատաբար ցածր գործակցի շնորհիվ ՀՀ-ն երբևէ չի բախվել բնակչության ընդհանուր սեղմված վերարտադրության խնդրին, բայց բնական աճի առկա շարժընթացը հուշում է, որ եթե պետական ժողովրդագրական քաղաքականությամբ էականորեն չխթանվի ծնելիության մակարդակի աճը, ապա վերը նշված տարիներին ծնվածների՝ վերարտադրության ցիկլում հիմնական դերակատար դառնալու պարագայում հնարավոր է բնակչության սեղմված վերարտադրություն արդեն 2020-ական թթ. երկրորդ կեսին (մինչև 2020 թ. COVID-19 համավարակը և Արցախյան հերթական պատերազմը հաշվարկները ցույց էին տալիս, որ նման անցում հնարավոր էր 2024-2027 թթ. միջակայքում): Այստեղ հաշվի ենք առնում նաև ամուսնական և մայ-

---

Федерации в 2019 году, https://gks.ru/bgd/regl/b20_107/IssWWW.exe/Stg/2-6.xlsx, հասանելի էր՝ 21.08.2023:

[71] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-սեպտեմբերին», Երևան, 2020, էջ 139:

[72] Տե՛ս նույն տեղում, էջ 149:

ռանալու միջին տարիքների աճը, սեռատարիքային կազմի փոփոխությունները միգրացիայի, պատերազմի և այլ գործոնների հետևանքով, ինչպես նաև բնակչության ծերացման, կորոնավիրուսային համավարակի և պատերազմական գործողությունների պատճառով մահացության գործակցի աճի միտումները վերջին տարիներին: Ընդ որում՝ եթե մինչև 2018-2019 թթ. մահացությունը նվազման միտում ուներ, որովհետև մահանում էին հիմնականում Հայրենական մեծ պատերազմի տարիներին ծնված մարդիկ, որոնք թվաքանակով քիչ էին, ապա առաջիկա տարիներին, հաշվարկային հիմքում ունենալով կյանքի միջին տևողության տվյալները, սպասվում է նույն պատերազմից հետո ծնված մարդկանց շրջանում մահացության աճ: Այդ տարիներին ծնվածների թիվը գերազանցում է պատերազմական տարիների ծնելիությանը, հետևաբար առաջիկայում, ցավոք, պետք է սպասել մահացության մակարդակի որոշ աճ: Սա ժամանակավորապես տեղի չի ունենում, որովհետև կորոնավիրուսային համավարակի պատճառով հավելյալ մահացությունը հիմնականում խլել է տարեցների կյանքերը, ինչի հետևանքով հաջորդող մի քանի տարիներին սպասվող մահացության ցուցանիշները նվազում են, ինչն արդեն իսկ նկատելի է 2023 թ. վիճակագրության մեջ, սակայն չի կարող երկարաժամկետ ազդեցություն ունենալ ժողովրդագրական գործընթացների վրա:

Հատկանշական է, որ ՀՀ առանձին հատվածներում դեռևս մեկ տասնամյակ առաջ արդեն իսկ նկատվել է սեղմված վերարտադրություն, օրինակ՝ Երևանի Նորք-Մարաշ (-0.2%, 2009 թ.) և

Արաբկիր (-0.17%, 2010 թ.) վարչական շրջաններում[73]: Միտումը շարունակական է եղել նաև հաջորդող տարիներին, և միայն 2015-2016 թթ. Արաբկիրում աննշան դրական հավելաճ է գրանցվել[74]: Այդուհանդերձ, Երևանի ցուցանիշները ընդհանուր առմամբ համեմատաբար ավելի լավ են, քան ՀՀ մարզերում:

Բավական մտահոգիչ է պատկերը հատկապես մի քանի մարզերում: 2018 թվականին 2013 թ. համեմատ Արագածոտնի մարզում բնական հավելաճի գործակիցը նվազել է 54%-ով, Արարատի մարզում՝ 26%-ով, Արմավիրի մարզում՝ 36%-ով, Գեղարքունիքի մարզում՝ 28%-ով, Կոտայքի մարզում՝ 33%-ով, Շիրակի մարզում՝ 40%-ով, Վայոց ձորի մարզում՝ 17%-ով, Տավուշի մարզում՝ 86%-ով, մինչդեռ Սյունիքի մարզում տևական նվազումից հետո նկատվել է ժամանակավոր դրական փոփոխություն, իսկ Լոռու մարզում՝ բնական աճը 0.15%-ից դարձել է բացասական՝ -0.04%[75]: Հատկանշական է, որ Տավուշի մարզում 2015 թ. ծնունդների և մահերի թվերը հավասար են եղել, իսկ 2016 թ. մահերը չորսով ավելի են եղել: Խիստ մտահոգիչ են եղել 2019 թ. առաջին կիսամյակի տվյալները.

---

[73] Տե՛ս «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2006-2010», Երևան, 2011, էջ 226-229: Տե՛ս նաև **Մալխասյան Մ**., Ժողովրդագրական գործընթացները Երևանում 21-րդ դարասկզբին (2001-2011 թթ.), «Երևան 3. մայրաքաղաքի հիմնախնդիրներին նվիրված գիտական նստաշրջանի նյութեր», Երևան, 2012, էջ 74-82:

[74] Տե՛ս «ՀՀ մայրաքաղաք Երևանը թվերով 2017», Երևան, 2017, էջ 23-24:

[75] Տե՛ս հետևյալ վիճակագրական ժողովածուները՝ «ՀՀ Արագածոտնի մարզը թվերով 2018», Երևան, 2018, էջ 25; «ՀՀ Արարատի մարզը թվերով 2018», Երևան, 2018, էջ 23; «ՀՀ Արմավիրի մարզը թվերով 2018», Երևան, 2018, էջ 23; «ՀՀ Գեղարքունիքի մարզը թվերով 2018», Երևան, 2018, էջ 23; «ՀՀ Լոռու մարզը թվերով 2018», Երևան, 2018, էջ 22; «ՀՀ Կոտայքի մարզը թվերով 2018», Երևան, 2018, էջ 21; «ՀՀ Շիրակի մարզը թվերով 2018», Երևան, 2018, էջ 22; «ՀՀ Սյունիքի մարզը թվերով 2018», Երևան, 2018, էջ 24; «ՀՀ Վայոց ձորի մարզը թվերով 2018», Երևան, 2018, էջ 24; «ՀՀ Տավուշի մարզը թվերով 2018», Երևան, 2018, էջ 18: Տե՛ս նաև «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվար-դեկտեմբերին», էջ 142:

բնական հավելաճի մոտ 81%-ը բաժին է ընկել Երևանին, մինչդեռ Լոռու, Շիրակի, Վայոց ձորի և Տավուշի մարզերն արդեն դեպոպուլյացիայի գոտում են, իսկ Սյունիքի մարզում ընդամենը 10 մարդ ավել է ծնվել, քան մահացել[76]: Ժողովրդագրական իրավիճակի վատթարացման այս համապատկերում պետք է ուշադրություն դարձնել հատկապես Լոռու մարզի վրա, քանի որ 1988-2019 թթ. նրա տարածքում բնակչության թվաքանակը կրկնակի նվազել է:

COVID-19-ի և 2020 թ. Արցախյան պատերազմի ազդեցությունը բնական աճի վրա: Ժողովրդագրական գործընթացներում նկատվող **ա**ռանց այն էլ բացասական միտումները կորոնավիրուսային համավարակի և պատերազմական գործողությունների պատճառով ավելի ուժգնորեն են արտահայտվել 2020 թ.: Մասնավորապես, Ադրբեջանի սանձազերծած Արցախյան նոր պատերազմը, հայրենազրկումից բացի, ժողովրդագրական աղետի է հանգեցրել: 2020 թ. հոկտեմբերի 24-ին ՀՀ արտգործնախարար Զ. Մնացականյանը հանրայնացրել է, որ Արցախից ժամանակավորապես ՀՀ են տեղափոխվել առնվազն 90 հազար խաղաղ բնակիչներ[77]: Հրադադարի ռեժիմի վերահաստատումից հետո, ՌԴ պաշտպանության նախարարության հաղորդմամբ, մինչև 2020 թ. դեկտեմբերի 31-ը նրանցից 46.998-ը, իսկ 2021 թ. փետրվարի 24-ի դրությամբ՝ արդեն 52.700-ը, վերադարձել է Արցախի՝ ՌԴ խաղաղապահ ուժե-

[76] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թ. հունվար-հունիսին», էջ 134-135:

[77] Տե՛ս «Глава МИД Армении назвал число беженцев из-за ситуации в Карабахе», https://ria.ru/20201024/karabakh-1581290908.html, Հասանելի էր՝ 22.08.2023: Նույն թիվը պատերազմից հետո՝ դեկտեմբերի 18-ին, հայտնվել է ՀՀ միգրացիոն ծառայության կայքում. http://migration.am/news/412, Հասանելի էր՝ 22.08.2023:

րի ներկայության հատված[78], սակայն արդեն իսկ իրողություն էր, որ Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող Հադրութի, Քաշաթաղի և Շահումյանի շրջաններ, Շուշի քաղաք և շրջանի հարավարևելյան մաս, տեղի հայ բնակչությունը չէր կարող վերադառնալ:

Հերոս նահատակների թվաքանակի վերաբերյալ տարբեր տվյալներ են շրջանառվել: 2021 թ. հունվարի 21-ին ՀՀ առողջապահության նախարարը հայտարարել է, որ 3.450 անձի մարմին պատերազմական գոտուց մուտք է արվել նախարարության դատաբժշկական կենտրոն[79], իսկ այդ հայտարարությանը հաջորդած շուրջ մեկ ամսվա ընթացքում Արցախի պաշտպանության նախարարությունը մի քանի անգամ հրապարակել է զոհված զինծառայողների ցուցակներ[80], որոնց հանրագումարը թույլ է տալիս եզրակացնելու նահատակների շուրջ 4.000 թվաքանակի մասին: Հաշվի առնելով այն, որ 2020 թ. ՀՀ բնակչության բնական հավելաճը հոկտեմբերի 1-ի դրությամբ նախնական տվյալներով կազմել էր 5.369 մարդ[81], ծնելիությունը աճի միտումներ չուներ, իսկ մահացությունը բարձր էր նաև կորոնավիրուսի պատճառով, հետևաբար հնարավոր էր կանխատեսել, որ պատերազմի պատճառով մահացության աճի հետևանքով տարին ՀՀ համար կարող էր փակվել նվազմամբ:

---

[78] Տե՛ս ՌԴ ՊՆ պաշտոնական կայք. https://mil.ru/russian_peace-keeping_forces/infograf/archive.htm, հասանելի էր՝ 22.08.2023:
[79] ՀՀ առողջապահության նախարարի 21.01.2021 թ. ելույթը տե՛ս՝ https://www.youtube.com/watch?v=lenephsn75Y, հասանելի էր՝ 22.08.2023:
[80] Տե՛ս օրինակ՝ զոհված 116 զինծառայողների տվյալներ 02.02.2021 թ.՝ https://www.panorama.am/am/news/2021/02/02/%D5%A6%D5%B8%D5%B0%D5%A5-%D6%80-%D5%8A%D4%B2/2445452; 29 զինծառայողների տվյալներ 08.02.2021 թ.՝ https://armdaily.am/?p=125739&l=am, հասանելի էր՝ 22.08.2023:
[81] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-սեպտեմբերին», էջ 139:

2021 թ. հունվարի 14-ին ՀՀ վիճակագրական կոմիտեն հրապարակել է 2020 թ. 11 ամսվա համար ամփոփված նախնական տվյալները՝ 33.425 ծնունդ (+457 կամ +1.39% նախորդ տարվա համեմատ) և 30.976 մահ (+7.194 կամ +30.25%)[82]: Հավելաճը, փաստորեն, կազմել է +2.449 (2019 թ. ցուցանիշից չորս անգամ քիչ): Հրապարակման սոցիալ-ժողովրդագրական հատվածի նախաբանում գրված է. ««2020 թ. վիճակագրական ծրագրով» նախատեսված էր ժողովրդագրական ցուցանիշներն ամփոփել և հրապարակել եռամսյակային պարբերականությամբ: Սակայն, կորոնավիրուսային (COVID-19) համավարակով պայմանավորված, 2020 թ. հունվար-նոյեմբեր ամիսների կտրվածքով որոշ ժողովրդագրական ցուցանիշներ ամփոփվել են շտապ եղանակով և ստորև ներկայացվում են նախնական տվյալները»[83]: Հոկտեմբերին գրանցվել է 3.632 (2019 թ. հոկտեմբերի համեմատ շուրջ երկու անգամ ավելի, COVID-19-ից՝ 360՝ առանց այլ պատճառների), նոյեմբերին՝ 6.060 մահ (շուրջ երեք անգամ ավելի, COVID-19-ից՝ 1.175)[84]:

2021 թ. փետրվարի 5-ին հրապարակվել են նախորդ տարվա սոցիալ-տնտեսական վիճակն արտահայտող ցուցանիշները, այդ թվում՝ ժողովրդագրական իրավիճակը: Ըստ այդմ՝ 2020 թ. ՀՀ-ում գրանցվել են 36.448 ծնունդ և 35.371 մահ[85]: ՀՀ 10 մարզերից 9-ում 2020 թ. գրանցվել են ավելի շատ մահեր, քան ծնունդներ, իսկ աճը, ընդհանուր առմամբ, չնչին դրական է մնացել (նախնական տվյալ-

---

[82] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-նոյեմբերին», Երևան, 2021, էջ 131:
[83] Տե՛ս նույն տեղում:
[84] Տե՛ս նույն տեղում, էջ 131-132:
[85] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-դեկտեմբերին», էջ 149:

ներով) միայն Երևանի դրական հավելաճի շնորհիվ: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա առաջին կիսամյակի բնական աճը բացասական է եղել 10-ից վեց մարզերում: Ծնունդների թվով տարին վեցերորդ վատագույնն էր Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանից սկսած, իսկ մահերի թիվը գրեթե կրկնում է Սպիտակի երկրաշարժով պայմանավորված 1988 թ. հակառեկորդը՝ 35.567: Ստացվում էր, որ 1988 թ. մահերը 196-ով ավելի են եղել, բնական աճն էլ 2020 թ. դրական էր մնացել (+1.077), սակայն մի կողմից համեմատությունը նախևառաջ գործակիցներով են կատարվում, իսկ մյուս կողմից՝ տվյալները նախնական էին, քանի որ աճյունների նույնականացման գործընթացը դեռևս ընթացքի մեջ էր: Ծնելիության գործակիցը 10-րդ վատագույնն էր ստացվում երբևէ, իսկ մահացության գործակիցը՝ առավելագույնը ՀԽՍՀ և ՀՀ պատմության մեջ՝ 11.9, մինչդեռ նախորդ հակառեկորդը եղել է Սպիտակի աղետալի երկրաշարժի տարում՝ 10.3: Բացի այդ՝ 2020 թ. մահերի մեջ այդ պահի դրությամբ հաշվառված էին միայն պատերազմի ժամանակ զոհված լինելու փաստը վերջնականապես ճշտված անձինք, և առաջիկա ամիսներին զոհվածների թվաքանակը վերանայվելու էր, հետևաբար վերահաշվարկվելու էին նաև մահացության ընդհանուր թվաքանակը և գործակիցը: Ի հավելումն նշված վիճակագրությանը՝ 2021 թ. մարտի 5-ին հրապարակվել են 2021 թ. հունվարի ժողովրդագրական ցուցանիշները՝ 2.795 ծնված և 3.295 մահացած (որից 390-ը՝ COVID-19-ից), հետևաբար բնական հավելաճը բացասական էր՝ -500[86]:

[86] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվարին», Երևան, 2021, էջ 117:

Այս ամենից զատ՝ հրապարակված թվերը չէին արտահայտում ժողովրդագրական այն աղետալի գործընթացները, որ տեղի են ունեցել 2020 թ. հենց Արցախում, որը պատերազմ չլինելու պարագայում 2021 թ. պետք է երբևէ առաջին անգամ ունենար 150 հազար հայ բնակչության: Այս տեսանկյունից աղետալի է հատկապես բնակավայրերի կորուստը: Ի կատարումն ՀՀ, ՌԴ և ԱդրՀ ղեկավարների միջև նոյեմբերի 9-ի լույս 10-ի գիշերը ստորագրված եռակողմ հայտարարության՝ 2020 թ. դեկտեմբերի 9-ին հրապարակվել է Արցախի տարածքից Ադրբեջանին հանձնվող բնակավայրերի ցանկը՝ 118 համայնքներ՝ 182 բնակավայրերով (Քաշաթաղի շրջան՝ 50 համայնքներ՝ 92 բնակավայրերով, Շուշիի շրջան՝ երեք համայնքներ՝ նույնքան բնակավայրերով, Շահումյանի շրջան՝ 14 համայնքներ՝ 17 բնակավայրերով, Մարտունու շրջան՝ յոթ համայնքներ՝ նույնքան բնակավայրերով, Մարտակերտի շրջան՝ ութ համայնքներ՝ 13 բնակավայրերով, Հադրութի շրջան՝ 28 համայնքներ՝ 42 բնակավայրերով, Ասկերանի շրջան՝ ութ համայնքներ՝ նույնքան բնակավայրերով)[87]: Նույնիսկ մինչ այդ ՌԴ ՊՆ հրապարակած քարտեզից կարելի էր արդեն եզրակացնել, որ Արցախի բնակավայրերի մեկ երրորդից ավելին, իսկ համայնքային հաշվարկման դեպքում՝ գրեթե կեսը, անցնում են թշնամուն: Արցախի սահմանադրությամբ ամրագրված տարածքում մինչև 2020 թ. պատերազմը ներառված էին 253 համայնքներ, որոնցից Շահումյանի շրջանում 17

[87] Տե՛ս «Ցանկ Ադրբեջանի Հանրապետության հսկողության տակ անցած՝ Արցախի Հանրապետության համայնքների և բնակավայրերի», հրապարակվել է 09.12.2020 թ. Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ֆեյսբուքյան էջում. https://www.facebook.com/permalink.php?story_fbid=187418389712836&id=113512020436807:

համայնքներ չէին գտնվում հայկական կողմի վերահսկողության ներքո[88]: Եթե նկատի ունենանք, որ ՀՀ համայնքները և դրանց կազմում ներառված բնակավայրերը 2020 թ. վերջի դրությամբ համապատասխանաբար 484 և 1.003 են[89], հետևաբար հայկական բնակավայրերի ամբողջ ցանցի՝ ՀՀ և Արցախի համայնքների ընդհանուր թվի շուրջ 16.4%-ը հայաթափվել է 2020 թ. հոկտեմբեր-դեկտեմբերին: Համեմատության համար նշենք, որ ՀՀ Տավուշի և Վայոց ձորի մարզերի բնակավայրերի թիվը հազիվ անցնում է 100-ից, իսկ ՀՀ որևէ մարզում չի հասնում նույնիսկ 140-ի:

Բացի մարդկային կորուստներից և հարկադրված տեղահանությունից՝ 2020 թ. նոյեմբերից սկսած՝ Արցախի ամբողջ բնակչությունը գոյութենական բնույթի ժողովրդագրական անվտանգության սպառնալիքի տակ է հայտնվել, քանի որ հրադադարի հաստատման մասին հայտարարության ստորագրման պահին շփման նոր գծի մեծ մասն անցնում էր նախկին ԼՂԻՄ-ի տարածքի միջով, նույնիսկ՝ առկա բնակչության շուրջ կեսը ներառող մայրաքաղաք Ստեփանակերտից ոչ շատ հեռու: Իրադարձությունների սոցիալ-հոգեբանական ազդեցությունը և տնտեսական հետևանքները լրացուցիչ ներգործություն են ենթադրում Արցախի բնակչության և՛ ծնելիության մակարդակի, և՛ միգրացիոն վարքագծի վրա՝ նվազեցնելով հնարավորությունը, որ Արցախի բնակչության թվաքանակը վերադառնա նախկին՝ մոտ 150 հազարի մակարդակին[90]:

---

[88] Տե՛ս «Արցախի Հանրապետության շրջանները թվերով, 2020 թ.», Ստեփանակերտ, ԱՀ ազգային վիճակագրական ծառայություն, 2020, էջ 11:

[89] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-դեկտեմբերին», էջ 148:

[90] Սույն կոլեկտիվ մենագրությունը հրատարակության է ներկայացվել 2023 թ. օգոստոսի վերջին, և միայն խմբագրական աշխատանքների ժամանակ են ծավալվել

Ստեղծված իրավիճակում Հայաստանում անհրաժեշտ է իրականացնել միջոցառումներ, այդ թվում՝ հանրակրթական վերափոխումներ, որոնք միտված պետք է լինեն նախևառաջ «սերբական սինդրոմ»-ի առաջացումը կանխարգելելուն: Այդ եզրույթը ձևավորվել է 1991 թ. սկիզբ առած և 1999-2008 թթ. առանձնակի սրությամբ արտահայտված ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական այն երևույթների (Հարավսլավական պատերազմում պարտություն, տարածքների կորուստ, փախստականների խնդիրներ, ենթակառուցվածքների կազմաքանդում) հիման վրա, որոնք պայմանավորել են սերբական հասարակության հոգեբանական ընկալումների փոփոխությունները: Դրանց ամենաբացասական դրսևորումներից է ապագայի տեսլականի նկատմամբ թերահավատության պատճառով հասարակության վերարտադրողական և միգրացիոն վարքագծերի փոփոխությունը՝ գլորելով Սերբիան ժողովրդագրական խորը ճգնաժամի մեջ (միայն 1999-2019 թթ. տարեկան միջին՝ գրեթե նույն թվաքանակով շարունակվող մահացության ցուցանիշը շուրջ 30 հազարով գերազանցել է շարունակաբար նվազած ծնունդներին, ընդհանուր՝ մոտ 300 հազար նվազում՝ առանց միգրացիայի հաշվարկի[91]): Սերբական պետական գերատեսչությունները միայն տարիներ անց սկսեցին արձագանքել այս երևույթին, և դժվարությամբ քայլեր են արվել հանրակրթությունից մինչև մեդիատիրույթ հասա-

---

սեպտեմբերի 19-ից սկսված ողբերգական իրադարձությունները, որոնց ժողովրդագրական աղետալի հետևանքները հնարավոր չէր հասցնել ուսումնասիրել և ներառել սույն աշխատության մեջ:

[91] Տե՛ս «Statistics of population», Statistical release SN70, Statistical Office of the Republic of Serbia, Number 172, year LXX, 01/07/2020, https://publikacije.stat.gov.rs/G2020/PdfE/G20201172.pdf, էջ 1-2:

րական բարոյալքումը կանխելու ուղղությամբ: Պետք է անհապաղ նկատի առնվեն սերբական ուշացած քաղաքականության հետևանքները, որպեսզի մեր հասարակությունը խուսափի նման բացասական զարգացումից: Մինչ այժմ հայկական և սերբական փորձառության ընդհանրության եզրերը տեղավորվել են միայն 1991-1993 թթ. տրամաբանության մեջ, երբ մեր, հետխորհրդային և հետսոցիալիստական երկրներում բնակչությունը, որը ժողովրդագրական համակարգ է, կտրուկ անցում է կատարել իր զբաղվածությունը ապահովող սոցիալիստական պլանային տնտեսությունից կապիտալիստական շուկայական տնտեսության՝ կորցնելով զբաղվածության համակարգի կեսից ավելին այնքան կարճ ժամանակահատվածում, որի ընթացքում տնտեսական զբաղվածության նոր համակարգը դժվարությամբ կարող էր ձևավորվել, կայունանալ և զարգանալ: Ի դեպ, այս համատեքստում հանրային դիսկուրսում հնչող պնդումը, թե ՀՀ-ից արտագաղթն անկախության տարիներին իբր պայմանավորված է եղել հիմնականում Արցախյան հիմնախնդրով, չի կարող դիմանալ քննությանը, քանի որ նկատի չի առնվում «ժողովրդագրական համակարգ» երևույթը, որը ՀՀ-ում միգրացիոն ընդհանուր նույն միտումներով է դրսևորել, ինչ սոցիալիստական նախկին ճամբարի գրեթե բոլոր երկրներում[92]:

[92] Այս իմաստով նույնիսկ ՌԴ-ը բացառություն չէ, թեև արտագաղթին զուգահեռ միգրացիոն հոսքեր է ընդունել ԽՍՀՄ նախկին հանրապետություններից: Իսկ ՀՀ և Արցախի մարդկային ընդհանուր կորուստը Արցախյան առաջին պատերազմում կազմել է շուրջ 6.500 մարդ, որոնց տարիքային կազմը զգալիորեն տարբերվել է 2020 թ. պատերազմի զոհերի տարիքային կազմից: Եթե վերջին պատերազմում զոհերի մոտ 98%-ը վերարտադրողական տարիքի տղամարդիկ են, առաջինում, ըստ հրապարակված ցանկի, շուրջ 2/3-ն են զորակոչի տարիքի (տե՛ս «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994» հանրագիտարան, Երևան, 2004, էջ 701-862):

Ժողովրդագրական կայուն համակարգը խախտվել է Արցախի բնակչության պարագայում, քանի որ նրանք հարկադրված են եղել հաշված օրերի ընթացքում լքել իրենց բնակավայրերը: Արցախի մեր հայրենակիցները ցավալիորեն այլևս հնարավորություն չունեն իրենց բնականոն կայուն վերարտադրողական վարքագիծը դրսևորելու սեփական հայրենի բնակավայրերում, իսկ չպետք է մոռանալ, որ Արցախում նախորդ երկու տասնամյակներում ծնելիության միջին մակարդակը սովորաբար բարձր էր լինում ՀՀ միջին գործակցից: Առաջիկա տարիներին և նույնիսկ ամիսներին անխուսափելիորեն նկատվելու է ՀՀ բնակչության վերարտադրողական և միգրացիոն վարքագծերի որոշակի փոփոխություն, հետևաբար անհրաժեշտ է գնահատել այս և մնացած առարկայական բոլոր մարտահրավերները, որոնց գնահատման արդյունքում պետք է վերաշարադրվի ՀՀ ժողովրդագրական քաղաքականությունը: Վերջինիս հետ ուղղակիորեն անհրաժեշտ է կապել կրթության և գիտության ոլորտներում կատարվող ռեֆորմները, որքան էլ դրանց կապը առաջին հայացքից դժվար է տեսնել:

Հարկ է նշել, որ ժողովրդագրության մեթոդաբանության տեսանկյունից անընդունելի է տարածաշրջանային տեսանկյունից ճանապարհային ապաշրջափակումը որպես ժողովրդագրական իրավիճակի բարելավման հնարավորություն դիտարկել, քանի որ ժողովրդագրական համակարգերի վրա նման գործոնի ուղղակի ազդեցություն երբևէ տեսական կամ փորձնական որևէ հիմնադրույթով չի փաստագրվել: Հաղորդակցության ուղիների տարանցման և բազմակողմանի ապահովման առաջատարներից Մերձբալթյան են-

թատարածաշրջանն աշխարհում ամենացածր ծնելիության մակարդակն ունի, բայց դա որևէ կապ չունի ճանապարհների հետ: Ընդհանրապես ՀՀ շրջափակումը և ժողովրդագրական խնդիրներն իրար շաղկապելը չեն կարող հիմնավորվել ժողովրդագրության տեսության և պրակտիկայի որևէ օրինաչափությամբ կամ օրինակով: Դրան զուգահեռ՝ պետության ներքին ենթակառուցվածքների և բնակավայրերի ցանցի փոխկապակցման խնդիրն այլ հարց է, քանի որ վերաբերում է կոնկրետ բնակչության միավորի՝ միասնական ժողովրդագրական համակարգ լինելուն:

Բնական աճի ցուցանիշի առկա իրավիճակն ու միտումները անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն հասարակության զարգացման ժամանակակից փուլում, այլև հեռանկարում՝ կանխատեսելով հավանական վտանգներն ու ռիսկերը: Հաշվի առնելով բնական աճի հիմնախնդրի կարգավորման դժվարությունները և ժամանակային բազմամյա ցիկլերը՝ պահանջվում է նպատակաուղղված գործողությունների հետևողական կենսագործում՝ զգալի ֆինանսական ռեսուրսների կիրառմամբ: Հարկ է նշել, որ բնական աճի հետևանքով ի հայտ եկած ռիսկերը բնակչության զարգացման գործընթացում հանգեցնում են քանակական և որակական բացասական փոփոխությունների, որոնք ուղղակի ազդեցություն են գործում տվյալ երկրի կայուն զարգացման վրա:

ՀՀ բնակչության բնական աճի ցուցանիշների քանակական մեծությունների նվազմանը զուգահեռ կարող է դրսևորվել նաև որակական, հատկապես՝ բնակչության ֆիզիկական, հոգեկան, սոցիալական առողջության բնութագրիչների վատթարացում՝ հան-

գեցնելով հասարակության մտավոր ներուժի նվազման: Վերարտադրողական տարիքի բնակչության շրջանում վաղուց արդեն տարածված է հասարակական այնպիսի մտայնություն, որը նախատեսում է ավելի քիչ թվով երեխաներ, քան անհրաժեշտ է բնակչության ընդլայնված վերարտադրությունն ապահովելու համար, հետևաբար վերարտադրողական վարքագիծը բավարար շեմից ցածր է[93]:

ՀՀ բնակչության բնական աճի միտումները դիտարկելիս ակներև են դառնում կանխատեսվող հետևանքները հասարակական համակարգի, ինստիտուտների և գործընթացների վրա, քանի որ ժողովրդագրական պատկերն ու գործընթացների միտումներն ընդգծում են հասարակության և սոցիալական ինստիտուտների զարգացման տրամաբանությունը: Փաստորեն, ժողովրդագրական գործընթացների արդի միտումները ՀՀ ազգային անվտանգության իրական մարտահրավերների շարքում են:

Ժողովրդագրական խնդիրները և իրավիճակի վատթարացումը մուլտիպլիկատիվ (բազմագործոն) ազդեցություն են ունենում տնտեսության, անվտանգության և հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտների վրա: Հաշվի առնելով, որ ՀՀ զինված ուժերի զինծառայողների համալրումն իրականացվում է պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչի միջոցով, պարզ է դառնում ժողովրդագրական խնդիրների հավանական ազդեցությունը անվտանգության համակարգի վրա: Ժողովրդագրական իրավիճակի վատթարացումն անմիջական ազդեցություն է ունենում

[93] Տե՛ս **Մանուկյան Ս**., Երեխաների պահանջմունքը որպես ծնելիության հիմնական գործոն, «Օրբելի» վերլուծական կենտրոն, պաշտոնական կայք. http://orbeli.am/hy/post/253/2019-07-26/Քաղաքակրթություն+և+ժողովրդագրություն, հասանելի էր՝ 23.08.2023:

սոցիալ-տնտեսական համակարգի, այդ թվում՝ աշխատաշուկայի և մարդկային ռեսուրսների, ըստ այդմ էլ՝ կյանքի որակի վրա: Ժողովրդագրական առկա փոփոխությունները և միտումներն ազդում են նաև բնակչության սեռատարիքային կառուցվածքի վրա՝ հանգեցնելով ավելի դանդաղ աճող և տարեց բնակչության: Բավական է նշել, որ 2020 թ. պատերազմում մի քանի հազար հերոս նահատակները, բացառությամբ փոքր թվով տարեց բնակիչների և կանանց, վերարտադրողական տարիքի էին: Եթե հաշվի առնենք, որ ժամկետային զինծառայության զորակոչված հիմնական տարիքային խումբը կազմում էին 2000-2002 թթ. ծնված տղաները, երբ ՀՀ պատմության մեջ ծնելիության նվազագույն ցուցանիշն է գրանցվել (2000 թ.՝ 18.492, 2001 թ.՝ 17.285, 2000 թ.՝ 17.455)[94], նոր հարվածը մեծ ազդեցություն է թողնելու ամուսնության և ծնելիության հետագա շարժընթացի վրա՝ առաջացնելով ժողովրդագրական վիհ վերարտադրողական ներկա և հաջորդող փուլերում: Այստեղ պետք է հաշվի առնել նաև, որ մի քանի հազար վիրավոր զինծառայողների և խաղաղ բնակիչների մի մասը տևական ժամանակ կարող է ունենալ առողջության տարաբնույթ խնդիրներ, որոնց ազդեցությունը փաստացի անհնար է գնահատել:

Ժողովրդագրության բնագավառում անվտանգությունն արտահայտվում է մի կողմից վերարտադրողական գործընթացներում առկա բացասական միտումների, պատճառների, դրանց հետևանքների առավելագույն նվազեցմամբ, մյուս կողմից՝ դրանց առաջաց-

[94] Պետք է նկատի ունենալ՝ որևէ հաշվարկ բացակայում է, որով պարզ կլիներ, թե նշված թվականներին ծնված տղաներից որքանն են վերարտադրողական տարիքի հասել ՀՀ տարածքում, քանի որ միգրացիայի ազդեցությունը գնահատված չէ:

ման պատճառների բացահայտմամբ և չեզոքացմամբ: Միևնույն ժամանակ «ժողովրդագրական անվտանգություն» հասկացությունը սահմանում ենք որպես կյանքի հիմնական, կարևորագույն ժողովրդավերարտադրողական գործընթացների պաշտպանություն իրական և հավանական վտանգներից մեկը: Հետևաբար ՀՀ ազգային անվտանգության ժողովրդագրական իրական վտանգների թվին է դասվում պտղաբերության ցածր մակարդակը, որը, ինչպես արդեն նշել ենք, երկարամյա հեռանկարում չի ապահովելու բնակչության պարզ վերարտադրություն:

Ժողովրդագրական անվտանգությունը ՀՀ պարագայում ուղղակիորեն հարաբերվում է ռազմական անվտանգության հետ, քանի որ բանակը, լինելով պետության և հասարակության ռազմական անվտանգության ապահովման երաշխիքը, ենթակա է նաև քաղաքական, սոցիալ-տնտեսական (այդ թվում՝ ժողովրդագրական), միջավայրային և տեղեկատվական սպառնալիքների բացասական ազդեցությանը[95]: Ակնհայտ է, որ բնակչության բնական աճի հետագա նվազումը բացասաբար է անդրադառնալու զորակոչի և հանրապետության ռազմապաշտպանական համակարգի վրա:

Բնակչության բնական աճի վրա ազդող գործոնների, այդ թվում՝ կյանքի միջին տևողության աճի, ամուսնությունների ու ամուսնալուծությունների թվերի շարժընթացի և սեռատարիքային կազմի դիսբալանսային իրավիճակի (երեխաների և աշխատունակ բնակչության տեսակարար կշռի նվազում, տղամարդկանց և կանանց թվաքանակի հարաբերակցության փոփոխություն և այլն)

[95] Առավել մանրամասն տե՛ս **Buzan B., Waever O., de Wilde J.**, Security: A New Framework for Analysis, London - Boulder, CO: Lynne Rienner, 1998:

համալիր ուսումնասիրությունն ու մոդելավորումը, որ մեկ ամբողջ ազգային զեկույցի հիմք կարող են լինել, հրատապ անհրաժեշտություն են վերը նշված միտումների պայմաններում: Դրա հիման վրա պետք է կազմվի ժողովրդագրական զարգացման հայեցակարգ, որին էլ պետք է հաջորդեն համալիր միջոցառումներով ազգային ծրագրի մշակումն ու իրագործումը՝ ռազմավարական նպատակների և մարտավարական խնդիրների ձևակերպմամբ, համալիր միջոցառումների ցուցակի, ժամանակացույցի և ծախսերի հստակեցմամբ, ակնկալվող քանակական և որակական արդյունքների հաշվարկմամբ: Այստեղ պետք է հաշվի առնել ոչ միայն տնտեսական, այլ նաև սոցիալ-հոգեբանական գործոնները, այդ թվում՝ ազգային սովորույթներում բազմազավակ ընտանիքի գաղափարի վերարժևորումը հանրակրթական ծրագրերի կամ առնվազն տարաբնույթ միջոցառումների կազմակերպման միջոցով, որտեղ անհատակենտրոն հասարակության մոդելի փոխարեն նախընտրելի է մատուցել կայուն ընտանիքի գաղափարը, ինչը, մեր ավանդական մշակույթի նորմերից, այդ թվում՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պսակի խորհրդից զատ, բխում է նաև ՄԱԿ կայուն զարգացման հայեցակարգային դրույթների գաղափարական արժևորումից: Այս ուղղությամբ միջոցառումները կարող են կոչված լինել նաև հասարակական այնպիսի մտայնությունների ձևավորմանը և ամրապնդմանը, որոնք ազդեցություն կունենան հետագա տարիներին ամուսնալուծությունների կանխմանը, մանավանդ այն պարագայում, երբ ամուսնալուծությունների թիվը վերջին տարիներին շարունակական աճ է գրանցել:

ՀՀ ժողովրդագրական ամփոփ ցուցանիշները 2020-2023 թթ.: ՀՀ ժողովրդագրական գործընթացների ներկա միտումները, փաստորեն, ինչպես վերը քննարկել ենք, բնորոշվում են արևմտյան երկրների մեծ մասին հատուկ ցածր ծնելիությամբ և նույնպես ցածր մահացությամբ, որոնք ժողովրդագրական անցման արդի փուլի գլխավոր բնորոշիչներն են[96]: Ստորև ներկայացնում ենք 2020 թ. ամփոփ ցուցանիշներից մինչև 2023 թ. մայիսի վերլուծությունը:

ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ 2021 թ. փետրվարի 5-ին հրապարակած տվյալներով՝ 2020 թ. ծնվել է 36.448 երեխա՝ 407-ով կամ 1.1%-ով ավելի շատ, քան 2019 թ., բայց 126-ով կամ 0.35%-ով քիչ, քան 2018 թ.[97]: Ծնելիության բացարձակ ցուցանիշը վեցերորդ վատագույնն է եղել ՀՀ պատմության մեջ: Բացի այդ՝ մայրանալու միջին տարիքի և հատկապես ընտանիքի երկրորդ երեխայի մայրական տարիքի դիտարկմամբ պարզ է դառնում, որ ծնունդների աննշան աճը բնական է և նույնիսկ կարող է որոշակի ընդմիջումներով շարունակվել առաջիկա մի քանի տարիներին, քանի որ հիմա երկրորդ երեխան են ունենում 1980-ական թթ. լույս աշխարհ եկած տարեկան միջինը մինչև մոտ 80.000 մարդիկ: Սա ունի նաև նախադեպային պատմություն. 1970-1980-ական թթ. ծնվածների վերարտադրողական վարքագծով կարելի է բացատրել այն, որ 2010 թ. 2001 թ. համեմատ ծնունդների թիվն աճել է 12.760-ով կամ 39.8%-ով: Սակայն միտումը մշտական չէ, և 2021 թ. առանձին ամիսներին գրանցվել է ծնունդների թվաքանակի նվազում, օրինակ՝ 2021 թ.

---

[96] Տե՛ս **Kirk D.,** Demographic Transition Theory. "Population Studies", vol. 50, no. 3, 1996, pp. 361–87. JSTOR, http://www.jstor.org/stable/2174639. Accessed 18 Jun. 2022.
[97] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-դեկտեմբերին», էջ 150:

հունվարին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ ծնելիության մակարդակը նվազել է 1.8%-ով: Նվազման միտումը պայմանավորված է նաև նրանով, որ տասնամյակներ առաջ ծնված մարդկանց մի զգալի մասը անկախության տարիներին լքել է ՀՀ սահմանները և իր վերարտադրողական վարքագիծը դրսևորել այլ պետության տարածքում, հետևաբար երեխաների ծնունդները հաշվառվել են տվյալ պետության վիճակագրության մեջ:

ՀՀ սահմանային անցակետերով իրականացված մուտքերի ու ելքերի հաշվեկշիռը +13.290 էր, ՀՀ փաստաթղթերով՝ -41.682: Հետաքրքիր է, որ ՌԴ քաղաքացիների մուտքերի և ելքերի հաշվեկշիռը նվազել է՝ յոթամսյա +67.608 ցուցանիշից իջնելով +38.840-ի: Զգալի դրական է նաև հետևյալ երկրների հետ ուղևորաշրջանառության հաշվեկշիռը՝ Վրաստան՝ +7.213, ԱՄՆ՝ +2.535, Գերմանիա՝ +1.015, Ֆրանսիա՝ +921, Նիդերլանդներ՝ +614, Ուկրաինա՝ +492, Բելառուս՝ +476, Իրան՝ +378, Միացյալ Թագավորություն՝ +361, Բելգիա՝ +306, Թուրքիա՝ +135, մինչդեռ Հնդկաստան՝ -1.144 և ԱՄԷ՝ -202[141]: Ցուցանիշները ամառային ամիսներով են պայմանավորված, թեև օգոստոսին առանձին երկրների հետ ուղևորաշրջանառության դրական հաշվեկշիռն արդեն մինչև 10 անգամ նվազել է, քանի որ զբոսաշրջային-արձակուրդային շրջանն ամռան վերջին ավարտվում է: Միգրացիոն ներհոսքերի ազդեցությունը, փաստորեն, խիստ ժամանակավոր է և չի կարող երկարաժամկետ ազդեցություն ձևավորել ՀՀ ժողովրդագրական իրավիճակի վրա: Ավելին՝ զավեշտալի ու տարակուսելի է երբեմն «հայրենադարձության» անհարկի պատրանքի ստեղծումը՝ այն դեպքում, երբ ՀՀ քաղաքացիների մուտքելքի հաշվեկշիռը մի ամբողջ Աբովյան կամ Վաղարշապատ քաղաքի բնակչության թվաքանակի չափ բացասական է՝ -41.682:

---

[140] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թ. հունվար-օգոստոսին», Երևան, 2022, էջ 145-146:
[141] Տե՛ս նույն տեղում, էջ 147:

2022 թ. նոյեմբերի 7-ին ՀՀ վիճակագրական կոմիտեն հրապարակել է ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը տարվա առաջին ինը ամիսներին բնութագրող վիճակագրությունը, որի համաձայն՝ հունվար-սեպտեմբերին գրանցվել են 26.511 ծնունդներ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ -1.3%, 2020 թ. համեմատ՝ -0.2%) և 20.597 մահեր (-11.9%, 2020 թ. համեմատ՝ -3.6%): Ծնելիության գործակիցը կազմել է 12, իսկ մահացությանը՝ 9.3: Սեպտեմբերին գրանցվել են տարվա կտրվածքով ամսական ամենաշատ ծնունդները (ավելի քան 3.500), իսկ հուլիսին՝ ամենաքիչ մահերը (1.869): Մահվան դեպքերի 3.8%-ի պատճառը COVID-19 համավարակն է, ընդ որում՝ նախորդ տարվա հունվար-սեպտեմբերի համեմատ վիրուսը 73.3%-ով ավելի քիչ կյանքեր է խլել: Առանց COVID-19-ի պատճառով 2022 թ. հունվար-սեպտեմբերին հարուցված մահվան 777 պաշտոնական դեպքերի (19.820)՝ համավարակի մեկնարկային 2020 թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ, առանց այդ ամիսներին նույն պատճառով մահվան 1.043 դեպքերի (տարբերությունը՝ 20.329), մահացության նվազումը կազմում է 509 մարդ կամ 2.5%: Այսպիսով՝ համավարակի մեկնարկից հետո չորս ամիս շարունակ գրանցվում է մահացության հարաբերական նվազում: Մահացությունը նկատելիորեն նվազել է նախորդ տարվա ապրիլ, մայիս, հունիս, հուլիս և սեպտեմբեր ամիսների համեմատ, ինչը բացատրվում է COVID-19-ի պատճառով մահացության զգալի նվազմամբ: ՀՀ բնակչության բնական հավելաճը հունվար-սեպտեմբերին կազմել է +5.914 մարդ, մինչդեռ 2021 թ. հունվար-սեպտեմբերյան նախագնահատված ցուցանիշը +3.463 էր, իսկ 2020 թ.՝ +5.186:

Այստեղ պետք է նկատի ունենալ, որ 2020 թ. ցուցանիշի մեջ արդեն ներառվում են 2020 թ. պատերազմի առաջին օրերին գրանցված մահվան դեպքերը: Պատահական չէ, որ եթե 2020 թ. նոյեմբերի սկզբին հրապարակված վիճակագրության մեջ հունվար-սեպտեմբերի մահվան դեպքերը 21.284 էին, 2022 թ. նոյեմբերի 7-ին հրապարակված տվյալներում նույն ժամանակահատվածի համար ցուցանիշը 88-ով ավելին է՝ 21.372: Միևնույն ժամանակ պատերազմական և համավարակային երկու տարիների համեմատ փոքր-ինչ բարելավվել է բնական աճի ցուցանիշը ՀՀ գրեթե բոլոր մարզերում, սակայն բացասական է շարունակում մնալ Լոռիում (-69) և աննշան դրական Տավուշում (+18): Ինը ամիսների կտրվածքով՝ 6.5%-ով ավելացել են հիվանդության և մահացության արտաքին պատճառներից, 3.4%-ով՝ շնչառական օրգանների, 2.6%-ով՝ վարակիչ և մակաբուծային հիվանդություններից հարուցված մահվան դեպքերը: 2021 թ. նկատմամբ 12.4%-ով նվազել է մեռելածինների թիվը, իսկ 2020 թ. համեմատ՝ 0.9%-ով: Համավարակի մեկնարկային և հիմնականում նախապատերազմական 2020 թ. հունվար-սեպտեմբերի համեմատ 36.1%-ով ավելացել են ամուսնությունները, սակայն միաժամանակ 39.9%-ով աճել են ամուսնալուծությունների դեպքերը: 2021 թ. հունվար-սեպտեմբերի համեմատ 3.8%-ով նվազել են ամուսնությունները, և 2.5%-ով էլ աճել են ամուսնալուծությունները: 3.64 ամուսնության հաշվով գրանցվել է մեկ ամուսնալուծության դեպք[142]:

ՀՀ սահմանային անցակետերով իրականացված մուտքերի ու ելքերի հաշվեկշիռը +2.959 էր, ՀՀ փաստաթղթերով՝ -48.230՝

[142] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թ. հունվար-սեպտեմբերին», Երևան, 2022, էջ 170-173:

նախորդ տարվա սոսկալի -103.571-ից հետո: ՀՀ քաղաքացիների մուտք-ելքի բացասական հաշվեկշիռը մի ամբողջ Վայոց ձորի մարզի բնակչության թվից շատ է: Հետաքրքիր է, որ ՌԴ քաղաքացիների՝ ՀՀ-ում հաշվառման և հաշվառումից հանվելու հաշվեկշիռը, նախորդ տարվա -397-ի դիմաց, ընդամենը +542 էր[143]:

Հատկանշական է, որ 2022 թ. հոկտեմբերին տեղի է ունեցել ՀՀ պատմության մեջ երրորդ մարդահամարը, որը նախատեսված էր անցկացնել ավելի վաղ՝ 2020 թ. հոկտեմբերի 18-27-ը (ՀՀ կառավարության 2018 թ. հոկտեմբերի 10-ի N 1115-Ն որոշմամբ), սակայն կորոնավիրուսային համավարակի պատճառով հետաձգվեց նախ 2021 թ. հոկտեմբերի 14-23-ին (ՀՀ կառավարության 2020 թ. ապրիլի 23-ի N 624-Ն որոշմամբ), այնուհետև՝ 2022 թ. հոկտեմբերի 13-22-ը (ՀՀ կառավարության 2021 թ. մայիսի 13-ի N 751-Ն որոշմամբ)[144]:

ՀՀ-ում մարդահամար անցկացվել է երեք անգամ՝ 2001, 2011 և 2022 թթ.: Ներկա մարդահամարը, համաձայն ՄԱԿ կողմից դեռ տարիներ առաջ տրված խորհրդատվական ցուցումների, պետք է անցկացվեր 2020 թ., սակայն հետաձգվել է, նախ՝ կորոնավիրուսային համավարակի, այնուհետև՝ պատերազմի պատճառով: «Պաշտոնական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ մարդահամարն անցկացվում է ՀՀ կա-

---

[143] Տե՛ս նույն տեղում, էջ 174-176:

[144] Տե՛ս ՀՀ կառ. որոշում 10.10.2018 թ. N1115-Ն «Հայաստանի Հանրապետությունում 2022 թվականին հերթական մարդահամար անցկացնելու ժամկետներ, 2019 թվականին փորձնական մարդահամար անցկացնելու տարածքներ և ժամկետներ հաստատելու, 2022 թվականի մարդահամարի աշխատանքներին աջակցելու նպատակով հանրապետական, Երևան քաղաքի և մարզային հանձնաժողովներ ստեղծելու և դրանց կազմը հաստատելու մասին» (վերնագիրը փոփ. 23.04.20 N624-Ն, 13.05.21 N751-Ն, 07.04.22 N432-Ն), https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=166605, հասանելի էր՝ 23.08.2023:

ռավարության կողմից հաստատված ծրագրով՝ բնակչության թվաքանակի, կազմի, տարածքային բաշխման, սոցիալ-ժողովրդագրական կառուցվածքի բնութագրիչների, բնակարանային պայմանների, տնային տնտեսությունների և շենքերի վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար: 2022 թ. մարդահամարի համար չորս տարի առաջ ստեղծվել է հանրապետական հանձնաժողով, որի 2018 թ. նոյեմբերի 20-ի որոշմամբ՝ հերթական մարդահամարը պետք է անցկացնել համակցված մեթոդով՝ բնակչության պետական ռեգիստրի և 25% ընտրանքային հետազոտության տվյալների հիման վրա: ՀՀ բնակչության պետռեգիստրում անձի վերաբերյալ կուտակվող տվյալներից մարդահամարի նպատակով օգտագործվում են անհատական ծածկագիրը, հասցեն, կացության կարգավիճակը կամ փախստական լինելը, քաղաքացիությունը, էթնիկ պատկանելությունը, ծննդյան օրը, ամիսը, տարին, ծննդավայրը, սեռը: Տվյալները ստացվում են ընտրանքային եղանակով՝ բնակչության պետական ռեգիստրի հասցեային տվյալներից 25% ընտրված բնակչության հետ հաշվարարների հարցազրույցների միջոցով, ենթադրաբար՝ պլանշետների կիրառմամբ:

Մարդահամարներն անցկացվում են համընդհանուր և ընտրանքային (մասնակի) սկզբունքներով: Օրինակ՝ ՌԴ 2002 թ. մարդահամարը նույնպես անցկացվել է 25% բնակչության ընդգրկվածությամբ, բայց տվյալների համընդհանուր ընդգրկմամբ պետության սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական քաղաքականության հիմնական ուղղությունների ճշգրտման անհրաժեշտությունը ստիպել է պետական գերատեսչություններին, որ 2010 թ. մարդահամա-

ը նախատեսեն համընդհանուր սկզբունքով, երբ հարցման են ենթարկվում բոլորը՝ բացի մեկ տարուց ավելի երկրից բացակայողներից և օտար պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների աշխատակիցներից: Ընդհանուր առմամբ՝ ընտրանքային մոտեցումը մեթոդաբանության հստակեցման պարագայում կարող է իրականությանը մոտ պատկեր տալ: Եվրոպական շատ երկրներ հաճախ ավելի են նախընտրում այս մոտեցումը, քան համընդհանուր սկզբունքը, քանի որ այն ավելի քիչ ծախսեր, տվյալների հավաքման ու մշակման քիչ ժամանակ, ինչպես նաև վարչական վերահսկելիության լայն հնարավորություն է ենթադրում: Բայց դա արվում է այն կանխավարկածով, որ նախորդ տասնամյակներից մեկում արվել է համընդհանուր մարդահամար, որից հետո բոլոր փոփոխությունները, այդ թվում՝ ծնունդները, մահերը, միգրացիոն մուտքերը և ելքերը, մեխանիկական թվային գրանցման են ենթարկվել և ավտոմատացված տեղ գտել տվյալների բազայում: Օրինակ՝ էթնիկ կազմի համար մարդահամարի մասնակի ընտրանքի մեթոդաբանությունը լիարժեք պատկեր չի կարող տալ, որովհետև էթնիկական ինքնագիտակցությունը, որով անձն ինքն է որոշում իր էթնիկ պատկանելությունը, չի կարող մեխանիկորեն հաշվառվող կատեգորիա լինել, քանի որ կարող է փոխվել անգամ միևնույն անձի գիտակցական կյանքի ընթացքում: Այստեղ հարկ է նշել, որ մեթոդը կիրառող երկրներից շատերում հենց այդ հարցը բացակայում է հարցաթերթից, ինչը մեր երկրի դեպքում ճիշտ չի լինի անել:

Մարդահամարի համար սահմանված կարճ՝ 10-օրյա ժամկետը տեղին է: Միջազգային պրակտիկայում առավելագույնը 14-15

օրն օպտիմալ և նպատակային ժամկետ է, քանի որ մարդահամարը խնդիր ունի պարզելու կոնկրետ ժամանակահատվածում որևէ պետության կամ նրա կոնկրետ վարչամիավորի տարածքում բնակչության թվաքանակը: Այլ հարց է, թե որքանով է ՀՀ-ն պատրաստվել այդ ժամկետում հարցումների ամբողջացմանը: ՌԴ նման հսկա պետության վերջին մարդահամարն անցկացվել է երկու շաբաթում:

Մարդահամարի մասին 1999 թ. հոկտեմբերի 12-ին ընդունված ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը սահմանում է, որ մարդահամարն անցկացվում է լիազորված մարմնի կողմից ներգրավված և հրահանգավորված աշխատողների՝ հաշվարարների կողմից[145]: Նրանք պետք է շրջեն բնակելի շինություններով և դրանցում բնակվող յուրաքանչյուր չափահաս անձի անմիջական հարցմամբ պատասխանները գրանցեն մարդահամարի հարցումների փաստաթղթերում: Ուսանողների ներգրավման պրակտիկան նոր չէ և միայն ՀՀ-ում կիրառվող մոտեցում չէ, սակայն ընդգրկելիս պարտադիր պետք է նրանց վերապատրաստել նման աշխատանքի համար՝ բացատրելով մարդահամարի նպատակը և խնդիրները, հարցում անցկացնելու սկզբունքները, հարցաթերթի հարցերի ընդգրկման շրջանակը, ստանդարտ ձևակերպումներից տարբերվող պատասխանների գրանցման հնարավոր տարբերակները, հարցվող բնակիչների հետ հաղորդակցման կանոնները և սկզբունքները: Շատ դեպքերում ապագա հաշվարարների մի մասը փորձ է ձեռք բերում մարդահամարին նախորդող փորձնական մարդահամարի ժամանակ:

---

[145] Տե՛ս ՀՀ օրենքը մարդահամարի մասին, ընդունված է ԱԺ կողմից 12.10.1999 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=631, հասանելի էր՝ 23.08.2023:

Շուրջ կես տարի անց՝ 2023 թ. ապրիլի 28-ին, ՀՀ վիճակագրական կոմիտեն մամուլի երկէջանի հաղորդագրություն հրապարակեց ՀՀ 2022 թ. մարդահամարի նախնական արդյունքների մասին: Ըստ այդմ՝ 2022 թ. հոկտեմբերի 13-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2.928.914 մարդ է, իսկ առկա բնակչության թվաքանակը՝ 2.638.917[146]: Այսպիսով՝ տարբերությունը կազմում է 289.997 մարդ, և սա մշտական և առկա բնակչության թվաքանակների միջև ամենամեծ տարբերությունն է ՀՀ մարդահամարների պատմության մեջ: Այսպես՝ 2011 թ. տարբերությունը կազմում էր 147.083, իսկ 2001 թ.՝ 210.413 մարդ[147]: 2011 թ. 2001 թ. համեմատ տարբերության կրճատումը մասնագիտական գրականության տեսանկյունից կարող էր դրական դիտվել, քանի որ միգրացիոն գործընթացները կայունանալու միտում էին ցուցաբերում, իսկ այժմ պատկերը փոխվել է: Այստեղ կարևոր է նշել, որ առկա բնակչությունը թեև պատկերում է հաշվառման պահին փաստացի բնակվող բնակչությանը, սակայն այն լիարժեք չի կարող բնութագրել ՀՀ

[146] Տե՛ս ՀՀ 2022թ. մարդահամարի նախնական արդյունքների մասին 28.04.2023 թ. ՎԿ մամուլի հաղորդագրությունը, https://www.armstat.am/am/?nid=157&id=904, հասանելի էր՝ 23.08.2023: Այստեղ կարևոր են մեթոդաբանությանը վերաբերող պարզաբանումները, որ տրված են հաղորդագրության առաջին էջում, ըստ այդմ՝ առաջին անգամ մարդահամարն անցկացվել է ոչ թե ավանդական համընդհանուր, այլ ընտրանքային՝ համակցված սկզբունքով, որտեղ հաշվարարների կողմից հավաքված տնային տնտեսությունների 25%-ն ընդգրկող ցուցանիշները համակցվել են սահմանային անցակետերի էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի և պետռեգիստրի տվյալներին: Որքան էլ մեթոդական նման որոշումը հիմնավորվում է ՄԱԿ ցուցումներով, սակայն ՄԱԿ-ը երբևէ չի հանձնարարել իրականացնել պարտադիր 25% ընտրանք: Որոշման միակ ռացիոնալ բացատրությունը կարող էր լինել կորոնավիրուսային համավարակից հետո փոքր ֆինանսական ռեսուրսներով կարճ ժամանակում ամփոփ տվյալների ստացումը: Քանի որ նախորդ երկու մարդահամարներն անցկացվել են համընդհանուր սկզբունքով, հետևաբար տվյալները մեթոդական տեսանկյունից այնքան էլ ճիշտ չէ նույն ձևով համեմատել նախորդների հետ:
[147] Տե՛ս նույն տեղում, էջ 2:

բնակչության իրական շարժը 10-ամյա կտրվածքով, քանի որ նրանում ներառված են ժամանակավոր՝ մինչև մեկ տարի բնակվողները: Եթե հաշվի առնենք, որ մարդահամարի իրականացման ժամանակահատվածում ՀՀ-ն, Ուկրաինական ճգնաժամի պատճառով, դեռևս փետրվարից նկատվող ակտիվ միգրացիոն հոսքերի շրջանում էր, ապա պատկերն էլ ավելի անկայուն է դառնում: Բավական է նշել, որ 2022 թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ սահմանային անցակետերով կատարված մուտքերի և ելքերի ընդհանուր հաշվեկշիռը +25.225 էր, մինչդեռ ՀՀ քաղաքացիներինը՝ -37.435, իսկ ՌԴ քաղաքացիներինը՝ +57.646, Վրաստանի՝ +6562, Բելառուսի՝ +394, Հնդկաստանի՝ +225 և այլն[148]: Սա էլ ժամանակավոր բնակվողների հաշվեկշռի մեջ է, եթե, իհարկե, տվյալներին հավելենք 2021 թ. հոկտեմբերի վերջից սկսած ցուցանիշները, որպեսզի ստանանք մինչև մեկ տարի ժամկետը: Այսպես՝ 2021 թ. հոկտեմբեր-դեկտեմբերի հաշվեկշիռը, համաձայն հունվար-դեկտեմբերի (ՀՀ փաստաթղթերով՝ -73.571, ընդհանուր՝ -43.874) և հունվար-սեպտեմբերի (ՀՀ փաստաթղթերով՝ -103.571, ընդհանուր՝ -67.504)՝ ամսական հրապարակումներից ստացված տարբերությամբ, ՀՀ փաստաթղթերով +30.000 է, իսկ ընդհանուր՝ +23.630: Ստացվում է, որ ՀՀ-ում փաստացի բնակվող ՀՀ քաղաքացիները, ի տարբերություն ՀՀ առկա բնակչության ընդհանուր թվաքանակի, առնվազն շուրջ 7.500-ով ավելի քիչ են, քան հրապարակված 2.638.917-ը, որտեղ արտացոլված է այլ պետությունների քաղաքացիների հաշվին ՀՀ մուտքերի և ելքերի՝ ընդհանուր մոտ +48.900 դրական հաշվեկշիռ մարդահամա-

[148] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թ. հունվար-հոկտեմբերին», Երևան, 2022, էջ 147-148:

ին նախորդող 12 ամիսների ընթացքում: Մի քանի օր հաշվարկից դուրս են մնում, հետևաբար սա լիարժեք ճշգրիտ տվյալ չէ, սակայն ցույց է տալիս, որ ՀՀ քաղաքացիությամբ առկա բնակչությունը ՀՀ-ում 2.6 մլն մարդուց մի փոքր քիչ է, ինչը շուրջ 250 հազարով քիչ է նախորդ մարդահամարի համապատասխան ցուցանիշից:

ՌԴ քաղաքացիների ժամանակավոր կացությունը ՀՀ-ում չի ազդում մշտական բնակչության թվաքանակի վրա, սակայն ազդում է առկա բնակչության թվաքանակի վրա: Այստեղ պետք է ուշադրություն դարձնել այն փաստին, որ ՀՀ-ում գտնվող ՌԴ քաղաքացիների թվաքանակը շատ արագ է փոփոխություններ կրել: ՀՀ-ՌԴ ուղևորաշրջանառության բալանսը, համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների, ՀՀ համար հունվար-հուլիսին եղել է +67.608, իսկ օգոստոսին նվազել 28.768-ով՝ ութ ամսում +38.840 դառնալով: Կարևորն այն է, թե որքան ժամանակ և հաշվառման ինչ կարգավիճակով է բնակվում կոնկրետ անձը ՀՀ-ում: Եթե նրա բնակությունը կարճ ժամկետով է՝ մինչև մեկ տարի, նա ժամանակավոր բնակվող է և հաշվառվում է առկա բնակչության մեջ, ոչ թե հաշվարկվող գլխավոր միավորի՝ մշտական բնակչության: Փոխարենը կստանանք առկա բնակչության խաբուսիկ պատկեր, քանի որ այդտեղ կբացակայեն ՀՀ քաղաքացիություն ունեցող, բայց արտերկրում բնակվող մեր հայրենակիցների տվյալները, իսկ բացը մասամբ կլրացնեն ժամանակավոր բնակվողները: Արդյունքում կեղծ տպավորություն է առաջանում, թե ՀՀ-ից արտագաղթի ծավալները մեղմվել են, մինչդեռ միայն տարվա առաջին ութ ամսում ՀՀ քաղաքացիների ելումուտի հաշվեկշիռը -41.682 է եղել՝ առանց ՌԴ, Ուկրաինա-

յի և այլ երկրների քաղաքացիների թվի: Ավելին՝ ՌԴ քաղաքացիների մեծ մասը, օգտվելով ԵԱՏՄ բազային փաստաթղթերով տրված իրավական արտոնություններից, ինչպես ՀՀ քաղաքացիներն են տարիներ շարունակ օգտվել դրանցից ՌԴ-ում, ՀՀ-ում հաշվառման համար չի դիմել: Տարվա առաջին կիսամյակում, օրինակ, ՌԴ 1.059 քաղաքացիների՝ ՀՀ-ում կացության կարգավիճակի դիմումներ են բավարարվել պատկան մարմինների կողմից: Դա ՀՀ-ում այդ պահին գտնվող ՌԴ քաղաքացիների 2%-ից քիչ է: Դիմումների քառորդ մասը ժամանակավոր կարգավիճակի համար է եղել:

ՌԴ պետական վիճակագրության դաշնային ծառայության տվյալներով՝ 2022 թ. հունվար-սեպտեմբերին ՀՀ հետ միգրացիոն հաշվեկշիռը ՌԴ համար -14.410 էր: Ի դեպ, Վրաստանի դեպքում ցուցանիշն այնքան է նվազել, որ ընդամենը -616 էր, իսկ Ղազախստանում՝ -9.515: ՀՀ-ում ևս նվազում է նկատվել. 2022 թ. հունվար-հուլիսին հաշվեկշիռը -16.530 էր, հետևաբար օգոստոս-սեպտեմբերին նկատվել է ՀՀ-ում ռուսաստանցիների՝ 2.120-ով նվազում: Նախընթաց տարիներին հաշվեկշիռը մեզ համար բացասական է, իսկ այս ժամանակավոր ներհոսքը պայմանավորված է ոչ թե ՀՀ աշխատանքային գրավչությամբ, այլ ուկրաինական ճգնաժամով: Այսու առանձնացրել ենք Ռոսստատի՝ 2003-2021 թթ. (երբ համապատասխան վիճակագրությունը կանոնավոր մշակվում և հրապարակվում է) վիճակագրությունը՝ ՌԴ համար հաշվեկշռով. 2003 թ.՝ +4.026, 2004 թ.՝ +2.403, 2005 թ.՝ +6.961, 2006 թ.՝ +12.263, 2007 թ.՝ +30.023, 2008 թ.՝ +34.184, 2009 թ.՝ +34.770, 2010 թ.՝ +19.192, 2011 թ.՝ +31.791, 2012 թ.՝ +31.998, 2013 թ.՝ +32.294, 2014 թ.՝

+24.006, 2015 թ.՝ +20.533, 2016 թ.՝ +11.993, 2017 թ.՝ +13.999, 2018 թ.՝ +14.358, 2019 թ.՝ +35.549, 2020 թ.՝ -1.844, 2021 թ.՝ +45.234, 2022 թ. հունվար-սեպտեմբեր՝ -14.410[149]: Այսպիսով՝ 2003-2021 թթ. ընդհանուր հաշվեկշիռը կազմում է +403.733 ՌԴ համար, և ՀՀ վատագույն ցուցանիշները եղել են 2019 և 2021 թթ.: Բացի այդ՝ ՌԴ ՆԳՆ միգրացիոն հարցերի գծով գլխավոր վարչության հրապարակած տվյալների համաձայն՝ 2021 թ. գրանցվել է ՀՀ քաղաքացիների կողմից ՌԴ քաղաքացիություն ստանալու ռեկորդային ցուցանիշ՝ 46.931 մարդ: Այդ ցուցանիշով զբաղեցրել ենք չորրորդ տեղը և զիջել միայն ճգնաժամային Ուկրաինային (375.989), Տաջիկստանին (103.681) և մի փոքր էլ Ղազախստանին (49.862): Ռեկորդային միտումը շարունակվել է 2022 թ. առաջին կիսամյակում՝ 22.136 (3-րդ

[149] Տե՛ս «Социально-экономическое положение России, январь 2005 года», Москва, 2005, էջ 274; «Социально-экономическое положение России, январь 2006 года», Москва, 2006, էջ 296; «Социально-экономическое положение России, январь 2007 года», Москва, 2007, էջ 299; «Социально-экономическое положение России, январь 2008 года», Москва, 2008, էջ 303; «Социально-экономическое положение России, январь 2009 года», Москва, 2009, էջ 322; «Социально-экономическое положение России, январь 2010 года», Москва, 2010, էջ 308; «Социально-экономическое положение России, январь 2011 года», Москва, 2011, էջ 320; «Социально-экономическое положение России, январь 2012 года», Москва, 2012, էջ 319; «Социально-экономическое положение России, январь 2013 года», Москва, 2013, էջ 300; «Социально-экономическое положение России, январь 2014 года», Москва, 2014, էջ 313; «Социально-экономическое положение России, январь 2015 года», Москва, 2015, էջ 254; «Социально-экономическое положение России, 2016 год (уточнённые итоги)», Москва, 2017, էջ 311; «Социально-экономическое положение России, январь 2017 года», Москва, 2017, էջ 251; «Социально-экономическое положение России, январь 2018 года», Москва, 2018, էջ 254; «Социально-экономическое положение России, январь 2019 года», Москва, 2019, էջ 257; «Социально-экономическое положение России, январь 2020 года», Москва, 2020, էջ 253; «Демографический ежегодник России, 2021», Москва, 2021, էջ 210-212; «Социально-экономическое положение России, 2021 год», Москва, 2022, էջ 254; «Социально-экономическое положение России, январь 2022 года», Москва, 2022, էջ 260; «Социально-экономическое положение России, январь-октябрь 2022 года», Москва, 2022, էջ 244:

տեղ): Համեմատության համար նշենք նախորդ տարիների ցուցանիշները. 2016 թ.՝ 22.264 (5-րդ տեղ), 2017 թ.՝ 25.144 (4-րդ), 2018 թ.՝ 27.134 (4-րդ), 2019 թ.՝ 24.024 (4-րդ), 2020 թ.՝ 30.538 (4-րդ)[150]:

Մարդահամարի անցկացումից հետո՝ մինչև նախնական արդյունքների մշակման ավարտը, շարունակվել է ընթացիկ վիճակագրության հրապարակումը՝ 2011 թ. մարդահամարի հաշվարկային հիմքով: 2022 թ. դեկտեմբերի 5-ին ՀՀ վիճակագրական կոմիտեն հրապարակել է ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը տարվա առաջին 10 ամիսներին բնութագրող վիճակագրությունը, որի համաձայն՝ 2022 թ. հունվար-հոկտեմբերին գրանցվել են 29.906 ծնունդներ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ -1.4%, 2020 թ. համեմատ՝ -0.8%) և 22.579 մահեր (-15.9%, 2020 թ. համեմատ՝ -12.8%): Մահացության կտրուկ նվազումը բնորոշ է հոկտեմբեր ամսվա վիճակագրությանը՝ 2020 թ. նույն ամսվա ցուցանիշից ավելի քան կրկնակի պակաս, քանի որ 2020 թ. հոկտեմբերին գրանցվել է Արցախյան հերթական պատերազմի զոհերի մեծ մասը, իսկ 2021 թ. նույն ամիսը կորոնավիրուսային համավարակի հետևանքներով է աչքի ընկել (795 մահ, իսկ 2022 թ.՝ 22): Ծնելիության գործակիցը վերջին տասնամյակում կազմել է 12.1, իսկ մահացությանը՝ 9.1: Սեպտեմբերին գրանցվել են տարվա կտրվածքով ամսական ամենաշատ ծնունդները (3.547), իսկ հուլիսին՝ ամենաքիչ մահերը (1.869): Մահվան դեպքերի 3.5%-ի պատճառը COVID-19 համավարակն է, ընդ որում՝ նախորդ տարվա հունվար-հոկտեմբերի համեմատ վիրուսը 78.4%-ով ավելի քիչ կյանքեր է խլել: Առանց

[150] Տե՛ս «Миграционный атлас Российской Федерации», Москва, 2022, էջ 37-38:

COVID-19-ի պատճառով 2022 թ. հունվար-հոկտեմբերին հարուցված մահվան 799 պաշտոնական դեպքերի (23.756)՝ համավարակի մեկնարկային 2020 թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ, առանց այդ ամիսներին նույն պատճառով մահվան 1.404 դեպքերի (նախնական տվյալներով տարբերությունը՝ 23.512), մահացության նվազումը կազմում է 244 մարդ կամ 1.04%: Այսպիսով՝ համավարակի մեկնարկից սկսած՝ վերջին հինգ ամիսներին, ընդհանուր առմամբ, առաջին անգամ գրանցվում է մահացության հարաբերական նվազում, սակայն 2020 թ. ցուցանիշի վերջնական հաշվարկը կարող է զրոյականի հասցնել 2022 թ. հետ տարբերությունը: Մահացությունը նվազել է նախորդ տարվա ապրիլ, մայիս, հունիս, հուլիս, սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների համեմատ, ինչը բացատրվում է COVID-19-ի պատճառով մահացության զգալի նվազմամբ: ՀՀ բնակչության բնական հավելաճը հունվար-հոկտեմբերին կազմել է +7.327 մարդ, մինչդեռ 2021 թ. հունվար-հոկտեմբերյան նախագնահատված ցուցանիշը +3.484 էր, իսկ 2020 թ.՝ +4.245: 2020 թ. մահացության բարձր ցուցանիշը, ինչպես նշել ենք, պայմանավորված է ամբողջ հոկտեմբեր ամսին պատերազմական գործողությունների հանգամանքով: Պատահական չէ, որ եթե 2020 թ. դեկտեմբերի սկզբին հրապարակված վիճակագրության մեջ հունվար-հոկտեմբերի մահվան դեպքերը 24.916 էին, 2022 թ. տարեվերջին հրապարակված տվյալներում նույն ժամանակահատվածի համար ցուցանիշը 986-ով ավելին է՝ 25.902, որովհետև աճյունների նույնականացումը կատարվել է հաջորդող ամիսներին: 10 ամիսների կտրվածքով՝ 18.9%-ով ավելացել են մահացության արտաքին պատճառներից հարուց-

ված մահվան դեպքերը, ինչը բացատրվում է սեպտեմբերի ջերմուկյան մարտերի նահատակների հանգամանքով: 2021 թ. նկատմամբ 13.2%-ով նվազել է մեռելածինների թիվը, իսկ 2020 թ. համեմատ՝ 2.4%-ով: Համավարակի մեկնարկային և պատերազմը հիմնականում ներառող 2020 թ. հունվար-հոկտեմբերի համեմատ 41%-ով ավելացել են ամուսնությունները, միաժամանակ 40.6%-ով աճել են ամուսնալուծությունները: 2021 թ. հունվար-հոկտեմբերի համեմատ 3%-ով նվազել են ամուսնությունները, 2%-ով աճել են ամուսնալուծությունները: 3.73 ամուսնության հաշվով գրանցվել է մեկ ամուսնալուծություն: Ամենաշատ ամուսնություններ գրանցվել են հոկտեմբերին՝ 1.731, իսկ ամուսնալուծություններ՝ օգոստոսին՝ 404[151]:

ՀՀ սահմանային անցակետերով իրականացված մուտքերի ու ելքերի հաշվեկշիռը հունվար-հոկտեմբերին +25.225 էր, ՀՀ փաստաթղթերով՝ -37.435, իսկ ՌԴ՝ +57.646, Վրաստանի՝ +6.562, Բելառուսի՝ +394, Հնդկաստանի՝ +225, Չինաստանի՝ +150, Ուկրաինայի՝ +36, Տաջիկստանի՝ +29, Իրանի՝ -1.088, ԱՄՆ-ի՝ -757, ԱՄԷ-ի՝ -225, Ֆիլիպինների՝ -124, Ղազախստանի՝ -123, Նիդերլանդների՝ -111 և այլն[152]: ՌԴ քաղաքացիների հիմնական հոսքը բաժին է ընկել հոկտեմբեր ամսին, երբ հաշվեկշիռը +14.410-ից հասել է +57.646, այդ թվում՝ ընդունելով ՌԴ քաղաքացիներ Վրաստանից: Այդուհանդերձ, կացության որևէ կարգավիճակով հաշվառման մեջ մտնելու միտումները շարունակում են չափավոր մնալ: Դեկտեմբերի 28-ին ՌԴ պետական վիճակագրության դաշնային ծառայությունը հրա-

[151] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թ. հունվար-հոկտեմբերին», էջ 145-146:
[152] Տե՛ս նույն տեղում, էջ 147-148:

պարակել է տարվա հունվար-հոկտեմբերին ՌԴ միգրացիոն հաշվեկշիռը, ըստ այդմ՝ 2022 թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ հետ միգրացիոն հաշվեկշիռը ՌԴ համար -13.672 է[153], այսինքն՝ այդքան մարդ կամ մնացել է ՀՀ-ում, կամ էլ ՀՀ միջոցով երրորդ երկիր է տեղափոխվել: Ի դեպ, Վրաստանի դեպքում ցուցանիշը մեկ ամսում գրեթե նույնքան է մնացել՝ ընդամենը -629, իսկ Ղազախստանում նվազել է հազարով՝ -8.477: ՀՀ-ում ևս նվազում է նկատվում. 2022 թ. հունվար-սեպտեմբերին հաշվեկշիռը -14.410 էր, հետևաբար 738-ով նվազել է միգրացիոն մնացորդը ՀՀ համար: Հիշեցնեմ, որ, Ռոսստատի տվյալների համաձայն, 2022 թ. օգոստոս-սեպտեմբերին արդեն իսկ նկատվել էր ՀՀ-ում ռուսաստանցիների թվաքանակի՝ 2.120-ով նվազում: Այդուհանդերձ, ՀՀ ժամանածների մեջ մեթոդապես դժվար է հստակ հաշվարկել, թե քանիսն են ՌԴ քաղաքացիությամբ հայերը, քանիսը՝ ռուսները և այլազգիները: ՌԴ միգրացիոն հաշվեկշիռը բալանսավորվել է Տաջիկստանից աննախադեպ՝ 147.172 մարդու ներհոսքով (հաշվեկշիռը՝ +61.565), ինչի շնորհիվ դաշնության ընդհանուր միգրացիոն բացասական մնացորդը նվազել է մինչև -20.557[154] (ցուցանիշի մեջ ներառված չեն փախստականի կարգավիճակ կամ ՌԴ քաղաքացիություն ստացող Ուկրաինայի քաղաքացիները): Ընթացիկ վիճակագրության վրա ազդեցություն ունի նաև սեզոնային աշխատանքային միգրացիայի ցուցանիշը:

2023 թ. հունվարի 10-ին ՀՀ վիճակագրական կոմիտեն հրապարակել է ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը նախորդ տարվա ա-

---

[153] Տե՛ս «Социально-экономическое положение России, январь-ноябрь 2022 года», Москва, 2022, էջ 208:
[154] Տե՛ս նույն տեղում:

ռաջին 11 ամիսներին բնութագրող վիճակագրությունը, որի համաձայն՝ 2022 թ. հունվար-նոյեմբերին գրանցվել են 33.177 ծնունդներ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ -1.3%, 2020 թ. համեմատ՝ -0.5%) և 24.633 մահեր (-21.6%, 2020 թ. համեմատ՝ -23.1%): Մահացության կտրուկ նվազումը բնորոշ է հոկտեմբեր ամսվա վիճակագրությանը՝ 2020 թ. նույն ամսվա ցուցանիշից ավելի քան կրկնակի պակաս, քանի որ 2020 թ. հոկտեմբերին գրանցվել է Արցախյան հերթական պատերազմի զոհերի մեծ մասը, իսկ 2021 թ. նույն ամիսը կորոնավիրուսային համավարակի հետևանքներով է աչքի ընկել (795 մահ, իսկ 2022 թ.՝ 22): Նույն պատճառներով նմանատիպ պատկեր է նաև նոյեմբերի համար. 2020 թ. համեմատ մահացությունը նվազել է 3 անգամ, 2021 թ. համեմատ՝ ավելի քան 2 անգամ (այդ թվում կորոնավիրուսային հիվանդությունից՝ 2020 թ. նոյեմբեր՝ 1.178 մահ, 2021 թ.՝ 1.326, 2022 թ.՝ 4): Այդուհանդերձ, նոյեմբերը տարվա 11 ամիսներից մահացության ցուցանիշով հինգերորդն է եղել: Ծնելիության գործակիցը տասնմեկամսյակում կազմել է 12.2, իսկ մահացությանը՝ 9.1: Սեպտեմբերին գրանցվել են տարվա կտրվածքով ամսական ամենաշատ ծնունդները (3.547), իսկ հուլիսին՝ ամենաքիչ մահերը (1.869): Մահվան դեպքերի 3.3%-ի պատճառը COVID-19 համավարակն է (2021 թ. հունվար-նոյեմբերին՝ 16%), ընդ որում՝ նախորդ տարվա հունվար-նոյեմբերի համեմատ վիրուսը 84%-ով ավելի քիչ կյանքեր է խլել: Առանց COVID-19-ի պատճառով 2022 թ. հունվար-նոյեմբերին հարուցված մահվան 803 պաշտոնական դեպքերի (23.830)՝ համավարակի մեկնարկային 2020 թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ (նոյեմբերը

տարվա վատագույն ցուցանիշն է ունեցել), առանց այդ ամիսներին նույն պատճառով մահվան 2.609 դեպքերի (նախնական տվյալներով տարբերությունը՝ 29.415), մահացության նվազում է նկատվում, որ կազմում է 5.585 մարդ կամ 19%: Հիշեցնեմ, որ համավարակի մեկնարկից սկսած՝ 2022 թ. նախորդ 5 ամիսներին, ընդհանուր առմամբ, առաջին անգամ գրանցվում էր մահացության հարաբերական նվազում 2020 թ. համեմատ շուրջ 1%-ով, սակայն նոյեմբերից հետո կտրուկ տարբերությունը պայմանավորված է պատերազմական գործողությունների հետևանքով զոհերի ցուցանիշով և կորոնավիրուսային հիվանդությունից մահացության կտրուկ նվազմամբ: Մահացությունը նկատելիորեն նվազել է նախորդ տարվա ապրիլ, մայիս, հունիս, հուլիս, սեպտեմբեր, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների համեմատ, ինչը բացատրվում է COVID-19-ի պատճառով մահացության զգալի նվազմամբ: Պետք է նկատի ունենալ նաև այն, որ, ցավոք, 2022 թ. սեպտեմբերին ռազմական բախումների նահատակների թվաքանակը դեռևս հստակ ճշտված չէ վիճակագրության մեջ: ՀՀ բնակչության բնական հավելաճը հունվար-նոյեմբերին կազմել է +8.544 մարդ, մինչդեռ 2021 թ. հունվար-նոյեմբերյան նախագնահատված ցուցանիշը +2.223 էր, իսկ 2020 թ.՝ +1.322: 2020 թ. մահացության բարձր ցուցանիշը, ինչպես նշել ենք, պայմանավորված է հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին պատերազմական գործողություններով: Պատահական չէ, որ եթե 2021 թ. հունվարին հրապարակված վիճակագրության մեջ հունվար-նոյեմբերի մահվան դեպքերը 30.976 էին, մեկ տարի անց վերահաշվարկվել էին 31.580, իսկ երկու տարի անց հրապարակված տվյալներում նույն ժամանա-

կահատվածի համար ցուցանիշը 1.048-ով ավելին է՝ 32.024, որովհետև աճյունների նույնականացումը կատարվել է հաջորդող երկու տարիներին: 11 ամիսների կտրվածքով՝ 17%-ով ավելացել են մահացության արտաքին պատճառներից հարուցված մահվան դեպքերը, ինչը հիմնականում բացատրվում է սեպտեմբերին ջերմուկյան մարտերի նահատակների հանգամանքով, թեև ցուցանիշները դեռևս վերջնական չեն: 2021 թ. նկատմամբ 14.2%-ով նվազել է մեռելածինների թիվը, իսկ 2020 թ. համեմատ՝ 4.5%-ով: Համավարակի առաջին ալիքը և պատերազմը ներառող 2020 թ. հունվար-նոյեմբերի համեմատ 44%-ով ավելացել են ամուսնությունները, սակայն միաժամանակ 43.6%-ով աճել են ամուսնալուծությունների դեպքերը: 2021 թ. հունվար-նոյեմբերի համեմատ 2.5%-ով նվազել են ամուսնությունները, և 1.1%-ով էլ աճել են ամուսնալուծությունները: 3.77 ամուսնության հաշվով գրանցվել է մեկ ամուսնալուծություն: Ամենից շատ ամուսնություններ գրանցվել են հոկտեմբերին՝ 1.731, իսկ ամուսնալուծություններ՝ օգոստոսին՝ 404[155]:

ՀՀ սահմանային անցակետերով իրականացված մուտքերի ու ելքերի հաշվեկշիռը +28.637 էր, ՀՀ փաստաթղթերով՝ -23.458, իսկ ՌԴ՝ +48.527, Վրաստանի՝ +5.918, Հնդկաստանի՝ +1.594, Բելառուսի՝ +399, Թուրքիայի՝ +228, Չինաստանի՝ +181, Ուկրաինայի՝ +51, Ֆիլիպինների՝ +42, Տաջիկստանի՝ +24, ԱՄՆ-ի՝ -1.287, Իրանի՝ -1.228, Ֆրանսիայի՝ -569, Գերմանիայի՝ -351, Նիդերլանդների՝ -213, Բելգիայի՝ -210, ԱՄԷ-ի՝ -160, Մեծ Բրիտանիայի՝ -93, Ղազախստանի՝ -58, Մոլդովայի՝ -45, Իրաքի՝ -26 և այլն: ՌԴ քաղաքացիների

[155] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թ. հունվար-նոյեմբերին», Երևան, 2023, էջ 149-151:

թվաքանակը ՀՀ-ում նվազել է 9.119-ով: Նվազել է նաև Վրաստանի, ԱՄՆ-ի և Իրանի քաղաքացիների թվաքանակը, փոխարենը աճել է հատկապես Հնդկաստանի և Թուրքիայի քաղաքացիների թիվը[156]:

ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից 2022 թ. դեկտեմբերի 15-ին լույս է ընծայվել Հայաստանի՝ նախորդ տարվա ժողովրդագրական ժողովածուն, որում վերանայված են 2020 թ. ժողովրդագրական ցուցանիշները՝ 36.353 ծնունդ և 36.433 մահ, հետևաբար բնական նվազումը կազմել է -80[157]: Այս առնչությամբ գրված է հետևյալ պարզաբանումը. «2020թ. մահացության տարեկան ցուցանիշները վերանայվել են հիմք ընդունելով 2021թ. և 2022թ. հունվար-սեպտեմբերի ընթացքում գրանցված՝ 44-օրյա պատերազմի հետևանքով՝ զինվորական գործողություններով պայմանավորված, մահվան վերաբերյալ քաղաքացական կացության գրանցումները, համապատասխանաբար՝ թվով 855 և 12 դեպք»[158]: Ի դեպ, զինվորական գործողությունների հետևանքով 2020 թ. զոհերի թվաքանակը նույն ժողովածուում նշված է 3.152 (առանց Արցախի հաշվառմամբ զոհերի), այդ թվում՝ 1 կին, իսկ 2021 թ.՝ 25[159]: Դեռևս 2021 թ. սկզբից քանիցս

---

[156] Տե՛ս նույն տեղում, էջ 151-152:

[157] Տե՛ս «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու-2022», էջ 64, 91:

[158] Տե՛ս նույն տեղում, էջ 83:

[159] Տե՛ս նույն տեղում, էջ 91-92: Ի դեպ, ՀՀ պատերազմական կորուստների հստակ թվաքանակը և տարիքային կազմը պարզելու համար հետազոտական խմբի անունից գրավոր դիմել ենք պատկան մարմիններին, որոնք պատասխանել են, որ վիճակագրությունը անհատական տվյալների գաղտնիության տիրույթում է, թեպետ մենք անվանական ցանկ չենք խնդրել: Նրանք կոչ են արել բավարարվելու Զինծառայողների ապահովագրության ազգային հիմնադրամի հրապարակած անվանացանկերով, մինչդեռ վերջիններս ցույց են տալիս տվյալները ոչ թե մահվան իրական օրվա դրությամբ, այլ՝ ըստ պաշտոնական գրանցման ժամանակի, ընդ որում՝ այլևս կոնկրետ օրն էլ տեսանելի չէ կայքում (տե՛ս՝ https://www.zinapah.am/hy/compensation?page=1, հասանելի էր՝ 24.08.2023), հետևաբար ցուցակներում դժվար է առանձնացնել

պնդել ենք, որ 2020 թ. Արցախյան պատերազմում անհայտ կորած զինծառայողների որոնողական աշխատանքների և նահատակված-ների մարմինների նույնականացման գործընթացի շարունակությունը կարող է ցավալի փաստի առաջ կանգնեցնել, որ 2020 թ. մահացության ցուցանիշը գերազանցել է ծնելիությանը (ելնելով վիճակագրության հասանելի բազաների վերլուծությունից՝ վերևում հաշվարկել էինք բնական նվազման հետևյալ ցուցանիշը՝ -67):

Քանի որ ՀՀ ժողովրդագրական ժողովածուն չի ներառում Արցախում հաշվառված մեր հայրենակիցներին, հետևաբար հրապարակված 3.152 զոհերի թվաքանակին պետք է հավելել Արցախի կորուստները: Արցախի ՄԻՊ-ի՝ 28.09.2021 թ. հրապարակած զեկույցի համաձայն՝ Արցախի մշտական բնակչության կորուստները 2020 թ. պատերազմում հետևյալն են. զոհված զինծառայող՝ 742, քաղաքացիական զոհ՝ 80, անհայտ կորած՝ 45[160]: Ստացվում է 822 զոհ, որը մինչև պատերազմը Արցախի մշտական բնակչության թվաքանակի 0.55 %-ն է, այսինքն՝ 5 անգամ ավելի մեծ է տեսակարար կշիռը, քան ՀՀ հաշվառում ունեցող զոհերի պարագայում, որոնք կազմում են ՀՀ մշտական բնակչության 0.11 %-ը: Պատերազմի ընթացքում, հաջորդող օրերին և 2022 թ. օգոստոսին հայրենի հողերի հանձնումից հետո Արցախի մշտական բնակչության ավելի քան 28%-ը (շուրջ 42 հազար մարդ) տեղահանվելով զրկվել է սեփական տանը բնակվելու հնարավորությունից: Ընտանիքի անդամների

2020 թ. սեպտեմբեր-նոյեմբերի զոհերին և կազմել ըստ ծննդավայրի մարզի՝ նրանց ժողովրդագրական քարտեզը:

[160] Տե՛ս «Միջանկյալ զեկույց ադրբեջանական զինված ուժերի կողմից Արցախի քաղաքացիական անձանց սպանության դեպքերի վերաբերյալ (թարմացված առ 27 սեպտեմբերի 2021թ.)», Ստեփանակերտ, 2021, էջ 83:

միջին թվաքանակի հաշվարկով ստացվում է, որ հանձնվել և կորսվել է առնվազն 12 հազար տուն և բնակարան[161]:

2020 թ. պատերազմական կորուստներից բացի՝ ավելացել են նաև 2022 թ. սեպտեմբերի 13-14-ի ադրբեջանական հարձակման հետևանքները, որոնց վերաբերյալ հրապարակվել է ՀՀ ՔԿ-ի հետևյալ հաղորդագրությունը. «Քննությամբ ձեռք բերված տվյալների համաձայն՝ Ադրբեջանի կողմից իրականացրած ագրեսիայի հետևանքով հայկական կողմից զոհվել է 224 անձ, այդ թվում՝ 3 քաղաքացիական անձ, անհայտ է 3 զինծառայողի գտնվելու վայրը»[162]: Փաստորեն, միայն 2022 թ. սեպտեմբերյան մարտերի զոհերի թվաքանակը երեք անգամ ավելի շատ է 2016 թ. ապրիլյան մարտերի զոհերից:

Ցավով պետք է նշենք, որ 2020 թ. պատերազմի նահատակների աճյունների նույնականացման գործընթացը դեռևս ամբողջությամբ չի ավարտվել, և առաջիկա ամիսներին ժողովրդագրական վիճակագրական ժողովածուներում նկատելի են լինելու որոշակի լրամշակումներ, որոնք չեն վրիպի միայն մասնագետների աչքից: Իսկ այժմ շարունակենք ընթացիկ վիճակագրության վերլուծությունը՝ որոշակի ուշադրություն դարձնելով ժողովրդագրական անցման

---

[161] Ստացված թիվը մոտարկմամբ ենք հաշվարկել, մինչդեռ Արցախի Հանրապետության իշխանությունները վստահաբար կունեան իրական ամբողջական վիճակագրությունը: Տարհանվածների մասին վիճակագրական լրացուցիչ տվյալների համար տե՛ս «Տարհանված ընտանիքների կենսապայմանների ընտրանքային հետազոտություն. վիճակագրական-վերլուծական զեկույց», Ստեփանակերտ, 2022:

[162] Տե՛ս «46 քրեական վարույթ, շուրջ 540 փորձաքննություն, 16 մեղադրյալ. ամփոփում՝ 2022թ. սեպտեմբերի 13-ին ՀՀ-ի նկատմամբ ադրբեջանական ռազմական ագրեսիայի փաստերի քննության վարույթներով», ՀՀ ՔԿ պաշտոնական կայք, 24.01.23 https://www.investigative.am/news/46-qreakan-varvouyth-shvourj-540-phvordzaqnnvouthyvoun-16-meghadryal-amphvophvoum-2022th-septemberi-13-in-hh-i-nkatmamb-adrbejanakan-razmakan-agresiayi-phasteri-qnnvouthyan-varvouythnervov, հասանելի էր՝ 24.08.2023:

արդի փուլի ներկա ենթափուլում կորոնավիրուսային համավարակի և պատերազմի հետևանքների ազդեցությանը:

2023 թ. փետրվարի 6-ին ՀՀ վիճակագրական կոմիտեն հրապարակել է ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը նախորդ տարվա 12 ամիսներին բնութագրող վիճակագրությունը, որի համաձայն՝ 2022 թ. հունվար-դեկտեմբերին գրանցվել են 36.353 ծնունդներ (2021 թ. համեմատ՝ -0.7%, 2020 թ. ճիշտ նույն ցուցանիշը) և 26.805 մահեր (-22.1%, 2020 թ. համեմատ՝ -26.4%): Մահացության կտրուկ նվազումը բնորոշ է հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների վիճակագրությանը, քանի որ 2020 թ. այդ ամիսներին նույնականացվել և գրանցվել է Արցախյան հերթական պատերազմի զոհերի մեծ մասը, իսկ 2020 և 2021 թթ. նույն ամիսները կորոնավիրուսային համավարակի մահացության բարձր մակարդակով են աչքի ընկել: Ծնունդների թվաքանակը, փաստորեն, 2018-2022 թթ. գրեթե նույնն է, սակայն զգալիորեն զիջում է 2017 թ. (37.700) և նախորդող տարիների ցուցանիշներին, իսկ մահվան դեպքերի թվաքանակը գրեթե վերադարձել է մինչպատերազմական և մինչհամավարակային ցուցանիշներին (օրինակ՝ 2019 թ.՝ 26.252): Ի դեպ, պատերազմին և համավարակին նախորդող 2019 թ. ևս բնական հավելաճը 10.000-ից քիչ է եղել՝ +9.879, իսկ օրինակ 2016 թ. գրանցվել է +12.509 բնական հավելաճ: Ծնելիության գործակիցը 2022 թ. կազմել է 12.2, իսկ մահացությանը՝ 9: Սեպտեմբերին գրանցվել են 2022 թ. ամսական ամենաշատ ծնունդները (3.547), իսկ հուլիսին՝ ամենաքիչ մահերը (1.869): Մահվան դեպքերի 3%-ի պատճառը COVID-19 համավարակն է (2021 թ.՝ 15.9%), ընդ որում՝ 2021 թ. համեմատ վիրուսը

85.1%-ով ավելի քիչ կյանքեր է խլել: Առանց COVID-19-ի պատճառով 2022 թ. հարուցված մահվան 812 պաշտոնական դեպքերի (25.993)՝ համավարակի մեկնարկային 2020 թ. նկատմամբ (նոյեմբերը և դեկտեմբերը տվյալ տարվա՝ համապատասխանաբար առաջին և երկրորդ վատագույն ցուցանիշն են ունեցել), առանց այդ տարվա՝ նույն պատճառով մահվան 3.545 դեպքերի (նախնական տվյալներով տարբերությունը՝ 32.888), մահացության նվազում է նկատվում, որ կազմում է 6.895 մարդ կամ 26.5%: Եթե նկատի ենք ունենում պատերազմական գործողությունների հետևանքով զոհերի թվաքանակը (ըստ ՀՀ ՎԿ 2022 թ. ժողովրդագրական ժողովածուի՝ ՀՀ հաշվառմամբ 3.152 մարդ), ապա, առանց համավարակի և պատերազմի ուղիղ ազդեցության ցուցանիշների, մահացության բացարձակ ցուցանիշի նվազումը կազմում է 3.743 մարդ կամ 11.39%: Այստեղ 2020-2021 թթ. համավարակի երկրորդային ազդեցության և մահացած անձի համար նախօրոք չիրականացված թեստերի մասին կարելի է խոսել, բայց դրանց թվաքանակը վիճակագրորեն հստակ հաշվառել հնարավոր չէ: Ընդհանուր առմամբ՝ ՀՀ բնակչության բնական հավելաճը 2022 թ. կազմել է +9.548 մարդ, մինչդեռ 2021 թ. վերագնահատված ցուցանիշը +2.235 էր, իսկ 2020 թ.՝ -80: 2022 թ. 15.7%-ով ավելացել են մահացության արտաքին պատճառներից հարուցված մահվան դեպքերը, ինչը բացատրվում է սեպտեմբերին ջերմուկյան մարտերի 238 նահատակների հանգամանքով (2021 թ. պատերազմական գործողությունների հետևանքով մահերը 25-ն էին՝ 9.5 անգամ քիչ): Վիճակագրական տխուր ցուցանիշների համայնապատկերում մի փոքր սփոփիչ փաստ է, որ 2022 թ. ՀՀ որևէ

մարզում բնակչության բնական նվազում չի գրանցվել, իսկ այդպիսին չէր պատկերը նույնիսկ նախապատերազմական 2019 թ.: Այդուհանդերձ, դրական հավելաճը շարունակում է շատ փոքր լինել՝ միայն Երևանում, Արարատի, Արմավիրի, Կոտայքի և Գեղարքունիքի դեպքում գերազանցելով +1.000-ը, իսկ Լոռում լինելով ընդամենը +42[163]: Հատկանշական է, որ ՀՀ-ում ոչ թե աճում է ծնելիությունը, այլ նվազում է մահացությունը, ինչը բնորոշ է կորոնավիրուսային համավարակի մեծագույն ալինքներից հետո աշխարհի երկրների մեծ մասին, քանի որ համավարակը խլել է գերազանցապես տարեց մարդկանց կյանքեր, որոնց վաղաժամ մահը նվազեցրել է հաջորդող տարիներին, այդ թվում՝ 2022 թ. կանխատեսվող պոտենցիալ ցուցանիշները: Հետևաբար պարզամիտ է պնդումը, թե ՀՀ-ում բնական հավելաճի ցուցանիշի բարելավումը իբր պատկան մարմինների կողմից ծնելիության խրախուսման ժողովրդագրական քաղաքականության ուղիղ արդյունք է: Բավական է նշել, որ միայն ՌԴ-ում կենսաթոշակառուների թվաքանակը նվազել է 2021 թ. շուրջ 1 միլիոնով[164], նախնական տվյալներով առնվազն 3 միլիոնով՝ Եվրամիությունում[165]: Ընդհանուր առմամբ՝ 2022 թ. բնակչության բնական հավելաճը մեր և հարևան պետություններում հետևյալ պատկերն է ու-

---

[163] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թ. հունվար-դեկտեմբերին», Երևան, 2023, էջ 174-176:

[164] Տե՛ս «На учете в ПФР стало на 1 млн меньше пенсионеров», 16.03.2022, РБК: https://www.rbc.ru/economics/16/03/2022/623075089a7947e33e9f29c0?from=copy, հասանելի էր՝ 24.08.2023:

[165] Տե՛ս «EU population increases again after two years decrease», 11.07.2023, Eurostat, https://ec.europa.eu/eurostat/web/products-eurostat-news/w/edn-20230711-1, հասանելի էր՝ 24.08.2023: Մանրամասները տե՛ս «Population and Demography Database: Selected datasets», https://ec.europa.eu/eurostat/web/population-demography/demography-population-stock-balance/database, հասանելի էր՝ 24.08.2023:

նեցել. Իրան՝ +600.000 (+0.72%), Թուրքիա՝ +530.956 (+0.63%), Ադրբեջան՝ +62.036 (+0.60%), Վրաստան՝ -6.799 (-0.18%), ՀՀ՝ +9.548 (+0.32%): ՀՀ ցուցանիշի մեջ ընդգրկված չէ Արցախը, որտեղ 2022 թ. տարեկան ժողովրդագրական վիճակագրություն չի հրապարակվել: Կորոնավիրուսի համավարակից հետո ժողովրդագրական ցուցանիշները փոքր-ինչ կարգավորվում են բոլոր պետություններում, ինչը կանխատեսելի էր հետազոտողների համար:

Անդրադառնանք 2022 թ. ՀՀ ժողովրդագրական այլ ցուցանիշների ևս: 2021 թ. նկատմամբ 13.2%-ով նվազել է մեռելածինների թիվը, իսկ 2020 թ. համեմատ՝ 3.8%-ով: Համավարակի առաջին ալիքը և պատերազմը ներառող 2020 թ. համեմատ 37,9%-ով ավելացել են ամուսնությունները, սակայն միաժամանակ 43.4%-ով աճել են ամուսնալուծությունների դեպքերը: 2021 թ. համեմատ 2.2%-ով նվազել են ամուսնությունները, և 2.1%-ով էլ աճել են ամուսնալուծությունները: 3.71 ամուսնության հաշվով գրանցվել է մեկ ամուսնալուծության դեպք: Ամենից շատ ամուսնություններ գրանցվել են հոկտեմբերին՝ 1.731, իսկ ամուսնալուծություններ՝ դեկտեմբերին՝ 410[166]:

ՀՀ սահմանային անցակետերով իրականացված մուտքերի ու ելքերի հաշվեկշիռը 2022 թ. +38.732 է (2021 թ.՝ -43.874), սակայն ՀՀ փաստաթղթերով՝ -27.941 (2021 թ.՝ -73.571): ՀՀ-ում կացության կարգավիճակ է ստացել ՌԴ ընդամենը 8.562 քաղաքացի, ընդ որում՝ նրանցից 6.665-ը՝ ժամանակավոր և միայն 1.897-ը՝ մշտական: Համեմատության համար՝ 2021 թ. ՌԴ-ից նման կարգավիճակ ՀՀ-ում ստացել է 766 մարդ (11 անգամ քիչ)՝ համապատասխանաբար

[166] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թ. հունվար-դեկտեմբերին», էջ 174, 178-179:

115 (58 անգամ քիչ) և 651 (մոտ 3 անգամ քիչ) քաղաքացիներ: Ահռելի մեծ է, փաստորեն, ժամանակավոր կացության կարգավիճակ ստացածների թվաքանակի տարբերությունը, սակայն ՌԴ բնակչության թվաքանակի տեսանկյունից սրանք աննշան թվեր են: Հաջորդող տեղերում են Հնդկաստանի (2.212, ավելի քան 2 անգամ շատ 2021 թվից), Իրանի (1.607, մոտ 4 անգամ շատ), Ուկրաինայի (385, ավելի քան 2 անգամ շատ), Վրաստանի (372, ավելի քան 2 անգամ շատ), Լիբանանի (295, մոտ 2 անգամ շատ), Սիրիայի (229, ավելի քան 2 անգամ շատ), Բելառուսի (224, մոտ 9 անգամ շատ) քաղաքացիները: Շարունակում է պահպանվել Ադրբեջանի հետ սահմանակից մարզերից բնակչության՝ հաշվառումից դուրս գալու միտումը: Հաշվառման անցնելու և դրանից դուրս գալու բացասական հաշվեկշիռ է եղել Սյունիքում (-655), Գեղարքունիքում (-170), Վայոց ձորում (-109) և Տավուշում (-93), ինչպես նաև նշված սահմանի հետ կապ չունեցող Շիրակում (-461) և Լոռիում (-167)[167]:

Միևնույն ժամանակ Ռոսստատը հրապարակել է ՌԴ միջազգային միգրացիայի ցուցանիշները, ըստ այդմ՝ ՀՀ հետ միգրացիոն մնացորդը 2022 թ. կազմել է -10.703, իսկ 2021 թ.՝ +45.235, ընդ որում՝ ՀՀ-ն լքողների թվաքանակը շատ քիչ է նվազել՝ 2022 թ. կազմել է 59.533՝ 2021 թ. 70.078-ի համեմատ, պարզապես 2.8 անգամ աճել է ՀՀ ժամանածների թվաքանակը՝ 70.236 մարդ՝ նախորդ տարվա 24.843-ի փոխարեն[168]:

---

[167] Տե՛ս նույն տեղում, էջ 179-181:

[168] Տե՛ս «Социально-экономическое положение России, январь 2023 года», Москва, 2023, էջ 213:

2023 թ. առաջին կիսամյակում աստիճանաբար նկատվում է բնական աճի կայունացում՝ ծնելիության կայուն ցուցանիշներով և մահացության նվազմամբ, ինչը պայմանավորված է հետհամավարակային իրողություններով. համաշխարհային պատմության մեջ խոշոր համաճարակներին միշտ հաջորդել են մահացության կտրուկ նվազումը և ծնելիության կտրուկ աճը, սակայն վերջինս տեղի չի ունենում ժողովրդագրական անցման արդի փուլի պայմաններում, թեպետ դրսևորվում է առաջինը՝ մահացության որոշակի անկումը: Այս միտումները դրսևորվում են տարվա ընթացիկ ցուցանիշների մեջ: ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թ. հունվարին բնութագրող պաշտոնական վիճակագրության համաձայն՝ ամսվա ընթացքում գրանցվել են 3.229 ծնունդներ (2022 թ. համեմատ՝ +12.6%, 2021 թ.՝ +13.2%, 2020 թ.՝ +17.4%) և 2.487 մահեր (2022 թ. համեմատ՝ -10.8%, 2021 թ.՝ -17.5%, իսկ նախակորոնավիրուսային 2020 թ. համեմատ՝ -6.3%): Ծնելիության գործակիցը 2023 թ. հունվարին կազմել է 12.8, իսկ մահացությանը՝ 9.9: Մահացության կտրուկ նվազումը պայմանավորված է կորոնավիրուսային համավարակի նահանջով (2023 թ. հունվարին պաշտոնապես ֆիքսվել է 3 դեպք, այսինքն՝ ընդհանուր մահացության 0.1%-ը, նախորդ տարվա հունվարի համեմատ՝ -96.4%): Հիվանդությունից մահացությունը 2022 և 2021 թթ. հունվարին կազմել է համապատասխանաբար 84 և 336 մարդ (ընդհանուր մահացության՝ համապատասխանաբար 3 և 11.1%-ը): Ժողովրդագրական վիճակագրությունը, փաստորեն, վերադարձել է մինչպատերազմական և մինչհամավարակային ցուցանիշներին (օրինակ՝ 2019 թ. հունվարին՝ 3.020 ծնունդ և 2.707 մահ):

Այդուհանդերձ, համավարակի երկրորդային ազդեցությունը և մահացած անձի համար թեստի բացակայությունը վիճակագրության մեջ որևէ կերպ գնահատված չէ, մանավանդ վերջին շրջանում թեստավորման պրակտիկան չափազանց սահմանափակվել է: Ընդհանուր առմամբ՝ ՀՀ բնակչության բնական հավելաճը 2023 թ. հունվարին կազմել է +742 մարդ, մինչդեռ 2022 թ. ցուցանիշը +79 էր, 2021 թ.՝ -160, իսկ 2020 թ.՝ +96: 2023 թ. հունվարին 16%-ով ավելացել են մահացության արտաքին պատճառներից հարուցված մահվան դեպքերը, ինչը, ի թիվս այլ պատճառների, բացատրվում է հունվարի 19-ին զորամասերից մեկում 15 ողջակիզված նահատակների հանգամանքով: 7.8%-ով աճել են շնչառական օրգանների, 8.3%-ով՝ վարակիչ և մակաբուծային, 4.6%-ով՝ մարսողական օրգանների հիվանդություններից մահացության դեպքերը: 2022 թ. հունվարի նկատմամբ 3.3%-ով նվազել է մեռելածինների թիվը, իսկ 2021 թ. համեմատ՝ 25.6%-ով: 2022 թ. հունվարի համեմատ 18.4%-ով ավելացել են ամուսնությունները, և 9.7%-ով նվազել են ամուսնալուծությունները: 2021 թ. համեմատ 16.7%-ով աճել են ամուսնությունները, սակայն 24.1%-ով աճել են ամուսնալուծությունները: 3.9 ամուսնության հաշվով գրանցվել է մեկ ամուսնալուծության դեպք[169]:

ՀՀ սահմանային անցակետերով իրականացված մուտքերի ու ելքերի հաշվեկշիռը 2023 թ. հունվարին +6.267 էր (2022 թ. հունվարին՝ -5.789), սակայն ՀՀ փաստաթղթերով՝ +17.808 (2022 թ. հունվարին՝ +5.933), իսկ ՌԴ քաղաքացիությամբ՝ -10.569, Վրաստանի՝ +2.169, Հնդկաստանի՝ +232, Բելառուսի՝ +112, Իրանի՝ -895,

[169] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թ. հունվարին», Երևան, 2023, էջ 135-136:

Ֆրանսիայի՝ -331, Գերմանիայի՝ -276, Նիդերլանդների՝ -259, Իրաքի՝ -220, ԱՄԷ-ի՝ -163, Իտալիայի՝ -150, Եգիպտոսի՝ -136, Բելգիայի՝ -128, Կիպրոսի՝ -118, Շվեդիայի՝ -116, Մեծ Բրիտանիայի՝ -116, Հունաստանի՝ -108, ԱՄՆ-ի՝ -106 և այլն[170]:

Վիճակագրական կոմիտեն 2023 թ. ապրիլի 5-ին հրապարակել է ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը հունվար-փետրվարին բնութագրող վիճակագրությունը, որի համաձայն՝ նշված ամիսներին գրանցվել են 5.867 ծնունդներ (2022 թ. համեմատ՝ +9.3%, 2021 թ.՝ +6%, 2020 թ.՝ +10.8%) և 4.543 մահեր (2022 թ. համեմատ՝ -23.2%, 2021 թ.՝ -16.4%, իսկ նախակորոնավիրուսային 2020 թ. հունվար-փետրվարի համեմատ՝ -10.7%): Ծնելիության գործակիցը 2023 թ. հունվար-փետրվարին կազմել է 12.2, իսկ մահացությանը՝ 9.5: Մահացության կտրուկ նվազումը պայմանավորված է կորոնավիրուսային համավարակի նահանջով (2023 թ. հունվար-փետրվարին պաշտոնապես ֆիքսվել է 9 դեպք, այսինքն՝ ընդհանուր մահացության 0.2%-ը, նախորդ տարվա հունվար-փետրվարի համեմատ՝ -98.1%): Հիվանդությունից մահացությունը 2022 և 2021 թթ. հունվար-փետրվարին կազմել է համապատասխանաբար 465 և 490 մարդ (ընդհանուր մահացության՝ համապատասխանաբար 7.9 և 9%-ը): Ժողովրդագրական վիճակագրությունն աստիճանաբար վերադառնում է մինչպատերազմական և մինչհամավարակային ցուցանիշներին (օրինակ՝ 2019 թ. հունվար-փետրվարին՝ 5.501 ծնունդ և 4.954 մահ): Ընդհանուր առմամբ՝ ՀՀ բնակչության բնական հավելաճը հունվար-փետրվարին կազմել է +1.324 մարդ, մինչդեռ 2022 թ. ցու-

[170] Տե՛ս նույն տեղում, էջ 137-138:

ցանիշը -549 էր, 2021 թ.՝ +102, իսկ 2020 թ.՝ +205: 2023 թ. հունվար-փետրվարին 7.6%-ով ավելացել են մահացության արտաքին պատճառներից հարուցված մահվան դեպքերը, ինչը, ի թիվս այլ պատճառների, բացատրվում է զինված ուժերում կորուստների հանգամանքով: 4%-ով էլ աճել են վարակիչ և մակաբուծային հիվանդություններից մահացության դեպքերը: 2022 թ. հունվար-փետրվարի նկատմամբ 22%-ով աճել է մեռելածինների թիվը, իսկ 2021 թ. համեմատ՝ նվազել 24.7%-ով: 2022 թ. հունվար-փետրվարի համեմատ 1.3%-ով ավելացել են ամուսնությունները, և 10.7%-ով նվազել են ամուսնալուծությունները: 2021 թ. համեմատ 7.3%-ով նվազել են ամուսնությունները, և 14.2%-ով էլ աճել են ամուսնալուծությունները: 4 ամուսնության հաշվով գրանցվել է ամուսնալուծության մեկ դեպք[171]:

ՀՀ սահմանային անցակետերով իրականացված մուտքերի ու ելքերի հաշվեկշիռը 2023 թ. հունվար-փետրվար ամիսներին -412 էր (2022 թ. հունվար-փետրվարին՝ -7.612), սակայն ՀՀ փաստաթղթերով՝ +11.471 (2022 թ. հունվար-փետրվարին՝ +981), իսկ ՌԴ քաղաքացիությամբ՝ -11.584, Վրաստանի՝ +2.693, Հնդկաստանի՝ +651, Իրանի՝ -967, Ուկրաինայի՝ -365[172]: Միևնույն ժամանակ մայիսի 3-ին Ռոսստատը հրապարակել է ՌԴ միջազգային միգրացիայի ցուցանիշները, ըստ այդմ՝ ՀՀ հետ միգրացիոն մնացորդը 2023 թ. հունվար-փետրվարին կազմել է +1.292, իսկ 2022 թ. նույն ամիսներին՝ -6.938, ընդ որում՝ ՀՀ-ն լքողների թվաքանակը քիչ է նվազել՝ 2023 թ. կազմել է 7.485՝ 2022 թ. 8.400-ի համեմատ (-10.9%), և 2.5

[171] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թ. հունվար-փետրվարին», Երևան, 2023, էջ 146-147:
[172] Տե՛ս նույն տեղում, էջ 148-149:

անգամ նվազել է ՌԴ-ից ՀՀ ժամանածների թվաքանակը՝ 6.193 մարդ՝ նախորդ տարվա նույն ամիսների 15.338-ի փոխարեն[173]:

ՀՀ վիճակագրական կոմիտեն 2023 թ. մայիսի 5-ին հրապարակել է ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թ. հունվար-մարտին բնութագրող վիճակագրությունը, որի համաձայն՝ նշված ամիսներին գրանցվել են 8.756 ծնունդներ (2022 թ. համեմատ՝ +7.8%, 2021 թ.՝ +1.6%, 2020 թ.՝ +17%) և 6.763 մահեր (2022 թ. համեմատ՝ -21.3%, 2021 թ.՝ -18.2%, իսկ 2020 թ. հունվար-մարտի (համավարակի առաջին զոհը պաշտոնապես գրանցվել է 2020 թ. մարտի 26-ին, և մարտի 26-31-ը համավարակից մահացությունը կազմել է ընդհանուր 1 մահ) համեմատ՝ -8.3%): Ծնելիության գործակիցը 2023 թ. հունվար-մարտին կազմել է 11.9, իսկ մահացությանը՝ 9.2: Ծնելիության գործակիցը ամենաբարձրը եղել է Վայոց ձորի մարզում՝ 16.9, ամենացածրը՝ Երևանում՝ 9.2: Մահացությունը ամենաբարձրը Լոռիում է՝ 12.2, ամենացածրը՝ Երևանում, Արմավիրում և Գեղարքունիքում՝ 8.5: Բոլոր մարզերում ծնելիությունը, բարեբախտաբար, գերազանցել է մահացությանը, սակայն 5 մարզերում տարբերությունը 100 մարդուց պակաս է եղել՝ Տավուշում (+19), Լոռիում (+31), Շիրակում (+82), Վայոց ձորում (+84), Սյունիքում (+89): Ի տարբերություն նախորդ տարիների՝ զարմանալիորեն Երևանում բնական հավելաճի բացարձակ ցուցանիշն ավելի ցածր է եղել (+195), քան Արարատի (+395), Արմավիրի (+347), Կոտայքի (+314), Գեղարքունիքի (+224), Արագածոտնի (+213) մարզերում: Մահացության կտրուկ նվազումը շարունակում է պայմանավորված մնալ

[173] Տե՛ս «Социально-экономическое положение России, январь-март 2023 года», Москва, 2023, էջ 199:

առաջին հերթին կորոնավիրուսային համավարակի նահանջով (2023 թ. հունվար-մարտին պաշտոնապես ֆիքսվել է 32 դեպք, այսինքն՝ ընդհանուր մահացության 0.5%-ը, նախորդ տարվա հունվար-մարտի համեմատ՝ -95.1%): Փաստորեն, մարտին նկատվել է հիվանդացության կտրուկ աճ՝ 23 դեպք նախորդ երկու ամիսների հանրագումարային 9-ի փոխարեն: Հիվանդությունից մահացությունը 2022 և 2021 թթ. հունվար-մարտին կազմել է համապատասխանաբար 657 և 893 մարդ (ընդհանուր մահացության՝ համապատասխանաբար 7.6 և 10.8%-ը): Ժողովրդագրական վիճակագրությունը, փաստորեն, վերադարձել է մինչպատերազմական և մինչհամավարակային ցուցանիշներին (օրինակ՝ 2019 թ. հունվար-մարտին՝ 7.952 ծնունդ և 7.307 մահ), նույնիսկ նկատվում է ծնելիության մի փոքր աճ և մահացության փոքր-ինչ նվազում: Վերջինս պայմանավորված է համավարակի երկրորդային ազդեցությամբ, որովհետև համավարակների ժամանակ քրոնիկ հիվանդություններ ունեցող կենսաթոշակային տարիքի մարդկանց մահացության մեծ ցուցանիշները նվազեցնում են համավարակից հետո մահացության դինամիկան. այդպես է եղել միշտ՝ համաշխարհային պատմության մեջ գրեթե բոլոր գրիպային համավարակներից, այդ թվում՝ իսպանկայից հետո: Ընդհանուր առմամբ՝ ՀՀ բնակչության բնական հավելաճը 2023 թ. հունվար-մարտին կազմել է +1.993 մարդ, մինչդեռ 2022 թ. ցուցանիշը -474 էր, 2021 թ.՝ +351, իսկ 2020 թ.՝ +289: 2023 թ. հունվար-մարտին 1.7%-ով ավելացել են մահացության արտաքին պատճառներից հարուցված մահվան դեպքերը, որոնց մեջ ներառվում են զինված ուժերում կորուստները: 6.8%-ով էլ աճել են տարբեր հիվան-

դություններից մահացության դեպքերը: 2022 թ. հունվար-մարտի նկատմամբ 8%-ով աճել է մեռելածինների թիվը, իսկ 2021 թ. համեմատ՝ նվազել 23.4%-ով: 2022 թ. հունվար-մարտի համեմատ 4.1%-ով ավելացել են ամուսնությունները, և 6.3%-ով նվազել են ամուսնալուծությունների դեպքերը: 2021 թ. համեմատ 5%-ով նվազել են ամուսնությունները, և 12.9%-ով էլ աճել են ամուսնալուծությունները: 3.8 ամուսնության հաշվով գրանցվել է ամուսնալուծության մեկ դեպք[174]:

ՀՀ սահմանային անցակետերով իրականացված մուտքերի ու ելքերի հաշվեկշիռը 2023 թ. հունվար-մարտին -11.911 է (2022 թ. հունվար-մարտին՝ -2.441), մինչդեռ ՀՀ փաստաթղթերով՝ +510 (2022 թ. հունվար-մարտին՝ -8.140): Հաշվառման մեջ մտնելու և հաշվառումից դուրս գալու հաշվեկշիռը շարունակում է բացասական մնալ Սյունիքի (-55), Գեղարքունիքի (-45), Շիրակի (-27) մարզերում: Փաստորեն, 2020 թ. պատերազմից հետո ավելի քան երկու տարի տևած միտումը, որ զանգվածաբար հաշվառումից դուրս էին գալիս սահմանամերձ դարձած բնակավայրերն ընդգրկող գյուղերի բնակիչները, արդեն զգալիորեն մեղմվել է՝ երկու տարում կազմելով շուրջ -10.000 հաշվեկշիռ: ՌԴ-ՀՀ դեպքում ՀՀ-ում քաղաքացիների հաշվառման հաշվեկշիռը +856 է՝ նախորդ տարվա առաջին եռամսյակի +87-ի փոխարեն: Դրական է հաշվեկշիռը նաև Վրաստանի դեպքում՝ +373՝ նախորդ տարվա +31-ի փոխարեն[175]: Մայիսի 31-ին հրապարակված ՌԴ պաշտոնական տվյալներով՝ 2023 թ. առաջին եռամսյակում ՀՀ-ՌԴ միգրացիոն հաշվեկշիռը ՌԴ համար կազմել է

[174] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թ. հունվար-մարտին», Երևան, 2023, էջ 186-188:
[175] Տե՛ս նույն տեղում, էջ 189-191:

+2.542 (ՀՀ-ից ժամանածները՝ 12.694, ՀՀ մեկնածները՝ 10.152)[176], հետևաբար ՀՀ համար աստիճանաբար վերականգնվում է ավանդական բացասական հաշվեկշիռը ՌԴ հետ միգրացիոն հոսքերում:

Հունիսի 5-ին հրապարակվել է ՀՀ մշտական բնակչության թվաքանակը՝ 2011 թ. մարդահամարի հաշվարկային հիմքով, ըստ այդմ՝ ապրիլի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակը կազմել է 2.9812 մլն մարդ[177], իսկ հունվարի 1-ի դրությամբ՝ 2.9771 մլն[178]: Երևանի բնակչության թվաքանակը շարունակում է ավելին լինել, քան ՀՀ գյուղական բնակչությունը կամ քաղաքային բոլոր բնակավայրերի բնակչության հանրագումարը: Մշտական բնակչության ընթացիկ ցուցանիշը, անշուշտ, հետագայում վերանայվելու է՝ նկատի ունենալով 2022 թ. մարդահամարի արդյունքները:

ՀՀ վիճակագրական կոմիտեն 2023 թ. հունիսի 5-ին նաև հրապարակել է ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թ. հունվար-ապրիլին բնութագրող վիճակագրությունը, որի համաձայն՝ նշված ամիսներին գրանցվել են 11.379 ծնունդներ (2022 թ. համեմատ՝ +6.5%, 2021 թ.՝ -1.1%, 2020 թ.՝ +10.6%) և 8.714 մահեր (2022 թ. համեմատ՝ -17.7%, 2021 թ.՝ -24.5%, իսկ 2020 թ. հունվար-ապրիլի (համավարակի առաջին զոհը պաշտոնապես գրանցվել է 2020 թ. մարտի 26-ին և մարտի 26-31-ը կազմել ընդհանուր 1 մահ, ապրիլին՝ 24 դեպք) համեմատ՝ -8.6%): Ծնելիության գործակիցը 2023 թ. հուն-

---

[176] Տե՛ս «Социально-экономическое положение России, январь-апрель 2023 года», Москва, 2023, էջ 241:

[177] Տե՛ս «ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2023 թ. ապրիլի 1-ի դրությամբ», Երևան, 2023, էջ 4:

[178] Տե՛ս «ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2023 թ. հունվարի 1-ի դրությամբ», Երևան, 2023, էջ 4:

վար-ապրիլին կազմել է 11.6, իսկ մահացությանը՝ 8.9: Վերջին 3 ամիսներին մահացությունը զիջել է նախորդ 2 տարիների ցուցանիշներին, իսկ ծնելիությունը մի փոքր ավելին է եղել, քան անցած տարի, սակայն զիջել է 2021 թ. ցուցանիշներին: Մահացության կտրուկ նվազումը շարունակում է պայմանավորված մնալ առաջին հերթին կորոնավիրուսային համավարակի նահանջով (2023 թ. հունվար-ապրիլին պաշտոնապես գրանցվել է 34 դեպք, այսինքն՝ ընդհանուր մահացության 0.4%-ը, նախորդ տարվա հունվար-ապրիլի համեմատ՝ -95%): Մարտին նկատվել է հիվանդացության կտրուկ աճ՝ 23 դեպք նախորդ երկու ամիսների հանրագումարային 9-ի փոխարեն, իսկ ապրիլին՝ ընդամենը 2 դեպք: Հիվանդությունից մահացությունը 2022 և 2021 թթ. հունվար-ապրիլին կազմել է համապատասխանաբար 674 և 1.666 մարդ (ընդհանուր մահացության՝ համապատասխանաբար 6.4 և 14.4%-ը): Ժողովրդագրական վիճակագրությունը, փաստորեն, շարունակում է վերադառնալ մինչպատերազմական և մինչհամավարակային ցուցանիշներին (օրինակ՝ 2019 թ. հունվար-ապրիլին՝ 10.543 ծնունդ և 9.510 մահ), նույնիսկ նկատվում է ծնելիության մի փոքր աճ և մահացության փոքր-ինչ նվազում: Վերջինս պայմանավորված է նրանով, որ, ինչպես նշել ենք, համավարակների ժամանակ քրոնիկ հիվանդություններ ունեցող կենսաթոշակային տարիքի մարդկանց մահացության մեծ ցուցանիշները նվազեցնում են համավարակից հետո մահացության դինամիկան: Ընդհանուր առմամբ՝ ՀՀ բնակչության բնական հավելաճը 2023 թ. հունվար-ապրիլին կազմել է +2.665 մարդ, մինչդեռ 2022 թ. ցուցանիշը +100 էր, 2021 թ.՝ -44, իսկ 2020 թ.՝ +733: 2023 թ. հունվար-ապրիլին

9.2%-ով ավելացել են մահացության արտաքին պատճառներից հարուցված մահվան դեպքերը, որոնց մեջ ներառվում են զինված ուժերում կորուստները: 13.7%-ով էլ աճել են տարբեր հիվանդություններից մահացության դեպքերը: 2022 թ. հունվար-ապրիլի նկատմամբ 5.7%-ով աճել է մեռելածինների թիվը, իսկ 2021 թ. համեմատ՝ նվազել 22.8%-ով: 2022 թ. հունվար-ապրիլի համեմատ 0.7%-ով ավելացել են ամուսնությունները, և 4.8%-ով նվազել են ամուսնալուծությունները: 2021 թ. համեմատ 4.9%-ով նվազել են ամուսնությունները, և 9.5%-ով աճել են ամուսնալուծությունները: 3.7 ամուսնության հաշվով գրանցվել է ամուսնալուծության մեկ դեպք[179]:

ՀՀ սահմանային անցակետերով իրականացված մուտքերի ու ելքերի հաշվեկշիռը 2023 թ. հունվար-ապրիլին -22.743 է (2022 թ. հունվար-ապրիլին՝ -6.055), մինչդեռ ՀՀ փաստաթղթերով՝ -18.250 (2022 թ. հունվար-ապրիլին՝ -21.299), ինչպես նաև ՌԴ քաղաքացիությամբ՝ -10.684, Իրանի՝ -801, Ուկրաինայի՝ -767, Կիպրոսի՝ -218, Ֆիլիպինների՝ -115, իսկ Վրաստանի՝ +4.095, Հնդկաստանի՝ +2.148, ԱՄՆ-ի՝ +389, Լեհաստանի՝ +341, Ֆրանսիայի՝ +329, Նիդերլանդների՝ +267, Բելառուսի՝ +166, Չինաստանի՝ +145[180]: Ռոստատի տվյալներով՝ 2023 թ. հունվար-ապրիլին ՌԴ համար ՀՀ հետ միգրացիոն հաշվեկշիռը կազմել է +3.540 մարդ (ժամանած՝ 17.424, մեկնած՝ 13.884), այսինքն՝ ՀՀ համար՝ -3.540[181]:

---

[179] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թ. հունվար-ապրիլին», Երևան, 2023, էջ 142-143:
[180] Տե՛ս նույն տեղում, էջ 144-145:
[181] Տե՛ս «Социально-экономическое положение России, январь-май 2023 года», Москва, 2023, էջ 188:

ՀՀ վիճակագրական կոմիտեն հուլիսի 6-ին հրապարակել է ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թ. հունվար-մայիսին բնութագրող վիճակագրությունը, որի համաձայն՝ գրանցվել են 14.227 ծնունդներ (2022 թ. համեմատ՝ +4.6%, 2021 թ.՝ -0.9%, 2020 թ.՝ +11.2%) և 10.699 մահեր (2022 թ. համեմատ՝ -15.7%, 2021 թ.՝ -24.3%, իսկ 2020 թ. հունվար-մայիսի (համավարակից մահվան վիճակագրությունը 2020 թ. մարտի 26-31-ը՝ 1, ապրիլին՝ 24, մայիսին՝ դեպք 93) համեմատ՝ -8.1%): Ծնելիության գործակիցը 2023 թ. հունվար-մայիսին կազմել է 11.5, իսկ մահացությանը՝ 8.7: Մահացության նվազումը շարունակում է պայմանավորված մնալ առաջին հերթին կորոնավիրուսային համավարակի նահանջով (2023 թ. հունվար-մայիսին պաշտոնապես գրանցվել է 35 դեպք, այսինքն՝ ընդհանուր մահացության 0.3%-ը, նախորդ տարվա հունվար-մայիսի համեմատ՝ -94.9%): Մարտին նկատվել է հիվանդացության աճ՝ 23 դեպք՝ նախորդ երկու ամիսների հանրագումարային 9-ի փոխարեն, իսկ ապրիլին և մայիսին՝ ընդամենը 2 և 1 դեպք համապատասխանաբար: Հիվանդությունից մահացությունը 2022 և 2021 թթ. հունվար-մայիսին կազմել է համապատասխանաբար 682 և 2.085 մարդ (ընդհանուր մահացության՝ համապատասխանաբար 5.3 և 14.7%-ը): Ժողովրդագրական վիճակագրությունը շարունակում է վերադառնալ մինչպատերազմական և մինչհամավարակային ցուցանիշներին (օրինակ՝ 2019 թ. հունվար-մայիսին՝ 13.322 ծնունդ և 11.316 մահ), նույնիսկ նկատվում է ծնելիության մի փոքր աճ և մահացության նվազում: Վերջին 4 ամիսներին մահացությունը զիջել է նախորդ 2 տարիների ցուցանիշներին, իսկ ծնելիությունը մի փոքր ավելին է

եղել, քան անցած տարի, սակայն զիջել է 2021 թ. ցուցանիշներին: Ընդհանուր՝ ՀՀ բնակչության բնական հավելաճը 2023 թ. հունվար-մայիսին կազմել է +3.528 մարդ, մինչդեռ 2022 թ. ցուցանիշը +916 էր, 2021 թ.՝ +127, 2020 թ.՝ +1.163: 2023 թ. հունվար-մայիսին 13.7%-ով աճել են տարբեր հիվանդություններից մահացության դեպքերը: 2022 թ. հունվար-մայիսի նկատմամբ 1.2%-ով աճել է մեռելածինների թիվը, 2021 թ. համեմատ՝ նվազել 16.5%-ով: 2022 թ. հունվար-մայիսի համեմատ 0.1%-ով նվազել են ամուսնությունները, և 3.5%-ով էլ՝ ամուսնալուծությունները: 2021 թ. համեմատ 3.9%-ով նվազել են ամուսնությունները, 8.8%-ով աճել են ամուսնալուծությունները: 3.6 ամուսնության հաշվով գրանցվել է ամուսնալուծության մեկ դեպք[182]:

ՀՀ սահմանային անցակետերով իրականացված մուտքերի ու ելքերի հաշվեկշիռը -12.363 է (2022 թ. հունվար-մայիսին՝ -7.993), ՀՀ փաստաթղթերով՝ -21.378 (2022 թ. հունվար-մայիսին՝ -31.963), ՌԴ քաղաքացիությամբ՝ -1.948, Ուկրաինայի՝ -817, Կիպրոսի՝ -335, ԱՄԷ-ի՝ -146, Եգիպտոսի՝ -142, Իրաքի՝ -125, Հունաստանի՝ -121, Ֆիլիպինների՝ -117, Լիտվայի՝ -100, իսկ Վրաստանի՝ +5.138, Հնդկաստանի՝ +3.009, ԱՄՆ-ի՝ +2.038, Գերմանիայի՝ +588, Իրանի՝ +360, Չինաստանի՝ +242, Բելառուսի՝ +165, Միացյալ Թագավորության՝ +130[183]: Ռոսստատի կողմից հրապարակված վիճակագրության համաձայն՝ հունվար-մայիսին միգրացիոն հաշվեկշիռը ՀՀ հետ ՌԴ համար կազմել է +5.018 (2022 թ. հունվար-մայիսին՝ -13.807)[184]:

---

[182] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թ. հունվար-մայիսին», Երևան, 2023, էջ 161-162:
[183] Տե՛ս նույն տեղում, էջ 163-164:
[184] Տե՛ս «Социально-экономическое положение России, январь-июнь 2023 года», Москва, 2023, էջ 199:

ՀՀ վիճակագրական կոմիտեն օգոստոսի 7-ին հրապարակել է ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թ. հունվար-հունիսին բնութագրող վիճակագրությունը, որի համաձայն՝ նշված ամիսներին գրանցվել են 16.939 ծնունդներ (2022 թ. համեմատ՝ +2.6%, 2021 թ.՝ -1.8%, 2020 թ.՝ +7.2%) և 12.472 մահեր (2022 թ. համեմատ՝ -15%, 2021 թ.՝ -24%, իսկ 2020 թ. հունվար-հունիսի (համավարակի առաջին ամիսների մահացության դինամիկան պաշտոնապես՝ 2020 թ. մարտի 26-31-ը՝ 1, ապրիլին՝ 24, մայիսին՝ 93, հունիսին՝ 365 դեպք) համեմատ՝ -14%): Ծնելիության գործակիցը հունվար-հունիսին կազմել է 11.5, իսկ մահացությանը՝ 8.4: Մահացության կտրուկ նվազումը շարունակում է պայմանավորված մնալ կորոնավիրուսային համավարակի նահանջով (2023 թ. հունվար-հունիսին պաշտոնապես գրանցվել է 35 դեպք, այսինքն՝ ընդհանուր մահացության 0.3%-ը, նախորդ տարվա հունվար-հունիսի համեմատ՝ -94.9%): Մարտին նկատվել է հիվանդացության կտրուկ աճ՝ 23 դեպք՝ նախորդ երկու ամիսների հանրագումարային 9-ի փոխարեն, ապրիլին՝ 2, մայիսին՝ 1, իսկ հունիսին՝ ոչ մի դեպք: Հիվանդությունից մահացությունը 2022 և 2021 թթ. հունվար-հունիսին կազմել է համապատասխանաբար 687 և 2.185 մարդ (ընդհանուր մահացության՝ համապատասխանաբար 4.7 և 13.3%-ը)[185]: Ժողովրդագրական վիճակագրությունը

[185] ՀՀ ՎԿ-ն, հիմք ընդունելով մահվան բժշկական վկայականների հիմքով կազմված քաղաքացիական կացության մահվան վերաբերյալ ակտերի գրանցումները, հրապարակել է COVID-19 վիրուսից մահվան դեպքերի հետևյալ տվյալները. 2020 թ.՝ 3.545, 2021 թ.՝ 5.486, 2022 թ.՝ 812, 2023 թ. առաջին կիսամյակ՝ 35, ընդհանուր՝ 9843: Այստեղ ներառված չեն վիրուսի առկայությամբ, բայց այլ պատճառով մահվան դեպքերը, որոնց թիվը 2022 թ. հունիսի 5-ից հետո չի հրապարակվել (այդ օրվա դրությամբ՝ 1.684 դեպք համավարակի սկզբից, տե՛ս «Կորոնավիրուսային հիվանդության իրավիճակը Հայաստանում», ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ, 06.06.2022, https://ncdc.am/%d-

շարունակում է վերադառնալ մինչպատերազմական և մինչհամավարակային ցուցանիշներին (օրինակ՝ 2019 թ. հունվար-հունիսին՝ 16.021 ծնունդ և 13.724 մահ), նկատվում է ծնելիության մի փոքր աճ և մահացության փոքր-ինչ նվազում: Վերջին 6 ամիսներին մահացությունը զիջել է նախորդ 2 տարիների ցուցանիշներին, իսկ ծնելիությունն առաջին 4 ամիսներին մի փոքր ավելին է եղել, քան անցած տարի, սակայն զիջել է 2021 թ. ցուցանիշներին (բացի հունվար ամսից), մայիս-հունիսին նույնիսկ զիջել է նախորդ տարվա ցուցանիշներին: Առավելագույն ծնունդներ գրանցվել են հունվարին (3.229) և մարտին (2.888), իսկ մահեր՝ նույնպես հունվարին (2.487) և մարտին (2.220): Թեպետ նկատվում է մոր երրորդ և չորրորդ երեխաների ծնունդների աճ, սակայն 7-րդ տարին անընդմեջ նվազում են երկրորդ երեխաների ծնունդները: Ընդհանուր առմամբ՝ ՀՀ բնակչության բնական հավելաճը 2023 թ. հունվար-հունիսին կազմել է +4.467 մարդ, մինչդեռ 2022 թ. ցուցանիշը +1.832 էր, 2021 թ.՝ +846, իսկ 2020 թ.՝ +1.293: Զրոյականին մոտ է բնական աճը Տավուշում (+19 կամ 0.04%) և Լոռիում (+94 կամ 0.09%): 2023 թ. հունվար-հունիսին 10.2%-ով աճել են էնդոկրին համակարգի և 12.8%-ով էլ՝ տարբեր հիվանդություններից մահացության դեպքերը: 2022 թ. հունվար-հունիսի նկատմամբ 6.8%-ով նվազել է մեռելածինների թիվը, 2021 թ. համեմատ՝ 14.2%-ով: Սակայն նկատվում է 0-1 և 1-4 տարեկան երեխաների մահացության աճ՝ 2022 թ. համեմատ՝ 4.1 և 46.7%, իսկ 2021 թ. համեմատ՝ 12.5 և 10%: 2022 թ. հունվար-հունիսի համե-

---

5%af%d5%b8%d6%80%d5%b8%d5%b6%d5%a1%d5%be%d5%ab%d6%80%d5%b8%d6%82%d5%bd%d5%a1%d5%b5%d5%ab%d5%b6-%d5%b0%d5%ab%d5%be%d5%a1%d5%b6%d5%a4%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%a1%d5%b6-%d5%ab%d6%80%d5%a1%d5%be-770/, հասանելի էր՝ 24.08.2023):

մատ 1.5%-ով նվազել են ամուսնությունները, 1.6%-ով՝ ամուսնալուծությունները: 2021 թ. համեմատ 4%-ով նվազել են ամուսնությունները, և հակառակը՝ 8.5%-ով աճել են ամուսնալուծությունները: 3.6 ամուսնության հաշվով գրանցվել է ամուսնալուծության մեկ դեպք: Ամենից շատ ամուսնություններ (1.411) և ամուսնալուծություններ (407) գրանցվել են մարտին: Առաջին կիսամյակի բոլոր ամիսներին, բացի հունվարից, ամուսնությունների դեպքերն ավելի քիչ են եղել, քան նախորդ երկու տարիների նույն ամիսներին: Ամուսնալուծությունները հակառակը՝ մարտ, մայիս և հունիս ամիսներին գերազանցել են նախորդ երկու տարիների ցուցանիշները[186]:

ՀՀ սահմանային անցակետերով իրականացված մուտքերի ու ելքերի հաշվեկշիռը 2023 թ. առաջին կիսամյակում +18.235 է (2022 թ. հունվար-հունիսին՝ +16.486), սակայն ՀՀ փաստաթղթերով՝ -26.020 (2022 թ. հունվար-հունիսին՝ -39.833): ՀՀ փաստաթղթերով տեղաշարժերի բացասական հաշվեկշիռը, փաստորեն, 2020 թ. պատերազմից հետո անշեղորեն պահպանվում է: Հաշվառման մեջ մտնելու և դուրս գալու հաշվեկշիռը ՌԴ հետ կազմել է +1.720, Վրաստանի՝ +882, Սիրիայի՝ +193, Իրանի՝ +143, Լիբանանի՝ +96, Ուկրաինայի՝ +25, Ֆրանսիայի՝ -132, Գերմանիայի՝ -67, ԱՄՆ-ի՝ -28: Ըստ մարզերի՝ տխուր է պատկերը հատկապես Լոռիում (-373), Գեղարքունիքում (-332), Շիրակում (-317): Զարմանալիորեն 2020 թ. պատերազմից հետո առաջին անգամ դրական միտում է նկատվում Սյունիքում (+1.404), Վայոց ձորում (+585) և Տավուշում (+638): ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակ են ստացել ՌԴ

[186] Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թ. հունվար-հունիսին», Երևան, 2023, էջ 171-174, 188-191:

4.308, Հնդկաստանի՝ 382, Իրանի՝ 334 քաղաքացիներ: Ընդհանուր առմամբ՝ հունիսի 30-ի դրությամբ ՀՀ-ում կացության վավեր կարգավիճակ ունեին ՌԴ 8.476, Հնդկաստանի՝ 715, Իրանի՝ 677, Բելառուսի՝ 169, Չինաստանի՝ 120, Ուկրաինայի՝ 93 քաղաքացիներ[187]:

Ի դեպ, օգոստոսի 7-ին հրապարակվել է ՀՀ մշտական բնակչության թվաքանակը հուլիսի 1-ի դրությամբ՝ 2011 թ. մարդահամարի հաշվարկային հիմքով. 2.9851 մլն, որից 1.9023 մլն քաղաքային և 1.0828 գյուղական, ընդ որում՝ Երևանում բնակվում է 1.1016 մլն մարդ[188]: Այդուհանդերձ, ինչպես արդեն նշել ենք, 2022 թ. մարդահամարի ցուցանիշների հիման վրա կատարվելու է ընթացիկ վիճակագրության վերագնահատում, հետևաբար առաջիկայում սպասվում է 2022-2023 թթ. վիճակագրության վերահաշվարկված ցուցանիշների հրապարակում: Դրանցում վերագնահատված են լինելու ոչ միայն բացարձակ ցուցանիշները, այլև գործակիցները, հետևաբար առաջիկայում ժողովրդագրական անցման արդի փուլի ներկա ենթափուլի լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտություն է առաջանալու:

---

[187] Տե՛ս նույն տեղում, էջ 176-178, 183-185:

[188] Տե՛ս «ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2023 թ. հուլիսի 1-ի դրությամբ», Երևան, 2023, էջ 4:

Գլուխ Գ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ԵԿԵՂԵՑԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Դեռևս 20-րդ դարի կեսերից սկսած՝ Արևմտյան Եվրոպայում, ԱՄՆ-ում, Կանադայում և Ավստրալիայում հանրային դիսկուրսը սևեռված էր հղիության արհեստական ընդհատման կամ ամուսնալուծության խնդիրների կրոնաբարոյագիտական կողմի վրա: Այդ ժամանակ Խորհրդային Միությունը և մասնավորապես Խորհրդային Հայաստանը դեռևս չունեին բնական աճի այն մտահոգիչ միտումները, որ այժմ ունեն: Բացի այդ՝ երբ Խորհրդային Ռուսաստանը, այնուհետև՝ ԽՍՀՄ-ը դարձավ աշխարհում առաջին երկիրը, որ օրինականացրեց հղիության արհեստական ընդհատումը, դրված չէր չծնված երեխայի կյանքի իրավունքի հարցը, մինչդեռ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցին, Ուղղափառ և բողոքական տարբեր եկեղեցիներ ու հարանվանություններ հանրային քննարկման թեմա էին դարձրել այն հարցադրումը՝ արդյոք սաղմը պետք է դիտարկել որպես լիակատար անհատականություն, թե ոչ: Այդ նույն ժամանակ ԽՍՀՄ-ում ո՛չ Ռուս Ուղղափառ և ո՛չ էլ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կարծիքը նման հարցերի քննարկման ժամանակ պետական ժողովրդագրական քաղաքականության մշակման համատեքստում չէր դիտարկվելու:

Եթե հղիության արհեստական ընդհատման օրինականացումը նոր երևույթ էր, ապա ամուսնալուծությունը հարյուրամյակներ շարունակ նորմավորման գործընթաց է անցել՝ հաղթահարելով սովորութային նորմատիվային դաշտից իրավականացման և ինստիտուցիոնալացման երկար ճանապարհ: Ամուսնությունը ժողովրդագրության մեջ վերարտադրողական վարքը պայմանավորող և հաջորդող սերունդի վերարտադրությունն ապահովող առաջնային պայման է դիտարկվում ավանդական ընկալումների համատեքստում, հետևաբար ազգային-արժեքային ընկալումներում ընտանիքի ինստիտուտը չափազանց կարևոր նշանակություն ունի: Խորհրդային տարիներին Եկեղեցու կողմից Պսակի անքակտելի խորհրդի մեկնաբանությունը հանրային դիսկուրս չի թույլատրվել ներմուծել, ուստի երևույթի հստակ իրավակարգավորումը պետք է հաշվի առնել ամուսնալուծությունների ցուցանիշների աճի պարագայում, թեպետ սովորույթի ուժով խորհուրդը շարունակել է ընկալվել արդեն որպես ոչ թե կրոնական, այլ ազգային գաղափար:

Հատկանշական է ամուսնալուծության նկատմամբ պետության և եկեղեցու մոտեցումների միջև տարբերությունը: Եթե պետության տեսանկյունից սա հստակ ընթացակարգով կարգավորվող սովորական իրավական գործընթաց է՝ ամուսնության պետական գրանցում և, ըստ ցանկության, դրա լուծում, օրինակ՝ դատական կարգով, ապա Եկեղեցին դարեր շարունակ փորձել է արմատական մոտեցում ցուցաբերել վերջին երևույթի նկատմամբ: Պսակի խորհրդով ձևավորված անքակտելի միության վերաբերյալ քրիստոնեական մեկնաբանությունները կառուցվում են Հիսուս Քրիստո-

սի այն խոսքերի վրա, որ այր և կին ամուսնությամբ մեկ մարմին են դառնում, հետևաբար Աստծո կողմից միավորվածը մարդը չպետք է բաժանի (Մատթ. ԺԹ 5-6): Առհասարակ քրիստոնեությունը՝ որպես համաշխարհային կրոն, գրեթե ամբողջապես բացառում է ամուսնալուծության գաղափարը[189]:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու յոթ խորհուրդների շարքում Պսակը (ամուսնությունը) հաջորդում է չորս պարտադիր խորհուրդներին՝ Մկրտությանը, Դրոշմին, Ապաշխարությանը և Հաղորդությանը: Միջնադարում այս խորհրդի լուծման հարցը բազմիցս դարձել է եկեղեցական ժողովների քննարկման առարկա՝ միաժամանակ կասկածի տակ չդնելով խորհրդի անքակտելիությունը: Պսակալուծության կիրառման հնարավորության և միաժամանակ նախընտրելի չլինելու հիմք դիտարկվել է, օրինակ, Քրիստոսի՝ լեռան վրա քարոզի ժամանակ հնչեցրած հետևյալ միտքը. «Առաջուց ասուեց, թէ ով որ իւր կնոջ արձակի, թող նրան արձակման թուղթ տայ: Բայց ես ձեզ ասում եմ, ով որ իւր կնոջ կարձակի առանց պոռնկութեան պատճառի, նա նրան շնութիւն է անել տալիս, և ով որ արձակուած կին է առնում, շնութիւն է անում» (Մատթ. Ե 27-32)[190]: Սբ. Պողոս առաքյալը նույն խնդրի առնչությամբ գրում է. «ինչպէս որ ամուսնացած կինը օրէնքով կապուած է իր մարդուն, քանի դեռ սա կենդանի է. Իսկ եթէ մարդը մեռնի, իր մարդուն կապող օէնքից արձակուած է» (Հռոմ. Է 2): Փաստորեն, քանի դեռ ողջ

---

189 Տե՛ս **Պապայան Ռ.**, Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները, Ս. Էջմիածին, 2002, էջ 166-167:

190 Տե՛ս նաև **Ներսես վրդ. Մելիք-Թանգեան**, Հայոց եկեղեցական իրավունքը, վերահրատարակություն, Ս. Էջմիածին, 2011, գիրք Բ, էջ 826-832:

են ամուսինները, Պսակն անխզելի է՝ բացառությամբ անհավատարմության դեպքերի[191]:

Միջնադարում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ժամանակ առ ժամանակ անդրադարձել է ամուսնությանն առնչվող տարբեր խնդիրների, մանավանդ՝ նախադեպային իրավիճակներն ստիպել են երբեմն լրամշակումներ կատարել Պսակը թույլատրելու կամ նման այլ հարցերի պարագայում, և հարցը կարգավորվել է, օրինակ, եկեղեցական ժողովների որոշումներով: Այս առումով, իհարկե, անկյունաքարային են դիտվել Սուրբգրային խրատները, որոնց արժեբանական ընկալումների վրա ընդունվել են որոշումները: Հաշվի է առնվել Եկեղեցու կողմից մշակված հոգևոր-իրավական նորմատիվային դաշտը՝ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն՝ իր լրամշակումներով[192], ինչպես նաև զարգացած միջնադարում ի հայտ եկած Դատաստանագիրք մատյանները[193]:

1905 թ. Ներսես վրդ. (հետագայում՝ արքեպիսկոպոս) Մելիք-Թանգյանը, ի մի բերելով ամուսնալուծության շուրջ Հայոց Եկեղեցում ավելի քան մեկ և կես հազարամյակում ձևավորված նորմատիվային մոտեցումները, հանգել է այն եզրակացության, որ, քննա-

---

[191] Տե՛ս «Հայ մատենագիրները Սուրբ Պսակի խորհրդի մասին (Ե.-ԺԸ. դարեր)», կազմեց՝ Յ. Քէօսէեան, Ս. Էջմիածին, 2022, էջ 18:

[192] Տե՛ս «Կանոնագիրք Հայոց», աշխ.՝ Վ. Յակոբեանի, «Մատենագիրք Հայոց», Է. հատ., Ը. դար, Անթիլիաս, 2007, էջ 175-707; «Կանոնագիրք Հայոց», հատ. Բ, աշխ.՝ Վ. Յակոբեանի, «Մատենագիրք Հայոց», ԺԶ. հատոր, ԺԱ. դար, Երևան, 2012, էջ 729-1051; «Համաբարբառ Կանոնագիրք Հայոց», կազմեց՝ Ա. Մարտիրոսյան, Ս. Էջմիածին, 2020, էջ 678-767:

[193] Տե՛ս «Դաւիթ վարդապետ Ալաւկայ որդի, որ գրեաց զկանոնական աւրենսդրութիւնս գեղեցկայարմարս եւ պիտանացուս ի խնդրոց քահանայի միոջ, որում անունն էր Արքայութիւն՝ ի քաղաքէն Գանձակայ», աշխ.՝ Ա. Աբրահամյանի, «Մատենագիրք Հայոց», ԺԶ. հատոր, էջ 679-723; **Մխիթար Գոշ,** Գիրք Դատաստանի, աշխ.՝ Խ. Թորոսյանի, Երևան, 1975:

կան գործերի վճռումը փոխանցելով Կաթողիկոսի տնօրինմանը և վերջնական տնօրենությունը վերագրելով ընդհանուր ազգային ժողովի իրավասությանը, Եկեղեցին թույլատրում է ամուսնալուծությունը անհավատարմության (շնության), մարմնական արատի և յոթ տարի անհայտ բացակայության դեպքերում[194]:

Խնդրին անդրադարձել է նաև անվանի հայագետ և աստվածաբան Արշակ Տեր-Միքելյանը, երբ 1900 թ. համակարգված ներկայացրել է Հայ Առաքելական Եկեղեցու դավանաբանական համակարգի բազմադարյան ընթացքը: Ներկայացնելով ամուսնալուծության թույլատրման բացառիկ դեպքերի կանոնադրումը՝ նա առանձնացնում է երկու հիմնական կարգեր: Առաջինին են վերաբերում Պսակի այն դեպքերը, որոնք չեն կայացել անվավերության պատճառով. «Այդպիսի պատճառներն են. 1. չհասութիւն, 2. անբուժելի տկարութիւն կամ անկարողութիւն, 3. բռնութեամբ կայացածը, 4. պոռնկութիւն պսակից առաջ, 5. մարմնաւոր անհաւասարութիւն, 6. օտարահաւատութիւն: Այսպիսի ամուսնութիւնները լուծւում են և կարող ամուսիններն ապաշխարելով թոյլտուութիւն են ստանում օրինաւոր ամուսնութեան մէջ մտնելու»[195]: Այնուհետև նա ներկայացնում է երկրորդ կարգի դեպքերը, երբ ամուսիններից մեկը մահացած է «բնականապէս կամ բարոյապէս», այսինքն՝ «1. Ուխտաւորութեան

---

[194] Տե՛ս **Ներսես վրդ. Մելիք-Թանգեան**, նշվ. աշխ., էջ 826-832:

[195] Տե՛ս **Տէր-Միքէլեան Ա.**, Հայաստանեայց Սուրբ Եկեղեցու Քրիստոնեականը. դաւանաբանութեան ձեռնարկ, Բ. հրատ., Թեհրան, 2003, էջ 426-427: Ի դեպ, Արշակ Տեր-Միքելյանը հեղինակել է նաև «Պսակի Ս. խորհուրդ» աշխատությունը, որտեղ մանրամասն քննում է խորհրդի նշանակությունը և կանոնակարգման պատմությունը՝ համեմելով ոչ միայն Սուրբգրային մեջբերումներով և Եկեղեցու Հայրերի մեկնաբանություններով, այլև Շահապիվանի, Դվինի, Սսի և եկեղեցական այլ ժողովների որոշումների համապատասխան մեկնաբանություններով:

ու կրօնաւորութեան նուիրուելով՝ երկուսն էլ կրօնաւորւում են, 2. Երբ մէկ անհաւատ է, այսինքն՝ մերժում է Հայաստանեայց ս. Եկեղեցու հաւատը, 3. Խելագարութիւն, այսահարութիւն և անբուժելի անկարողութիւն, 4. Անբուժելի գոդութիւն (բորոտութիւն – Ա.Մ.) և նոյնպիսի հիւանդութիւններ, 5. Անդարձ անջատում կամ աքսոր, 6. Կորստական պոռնկութիւն և մահ»[196]:

Ներսես վրդ. Մելիք-Թանգյանի և Ա. Տեր-Միքելյանի գրքերը լույս են տեսել 20-րդ դարասկզբին, իսկ խորհրդային ժամանակաշրջանում խնդրի եկեղեցական կանոնակարգման կարևորությունը ներհասարակական հարաբերություններում հետին պլան է մղվել: Հետխորհրդային շրջանում Ռուս Ուղղափառ Եկեղեցին մշակել և ընդունել է հղիության արհեստական ընդհատմանը և վերարտադրողական խնդիրներին առնչվող տարաբնույթ նոր երևույթների նկատմամբ հստակ վերաբերմունք արտահայտող որոշումներ, որոնք բխում են 2000 թ. հաստատված «Ռուս Ուղղափառ Եկեղեցու սոցիալական հայեցակարգի հիմունքները» փաստաթղթից: Ըստ այդմ՝ իրենց մոտ դատապարտվում է, օրինակ, փոխնակ (սուրոգատ) մայրության օժանդակ վերարտադրողական տեխնոլոգիան (որի կիրառման ժամանակ կնոջ հղացմանը և երեխայի ծնունդին, ըստ էության, մասնակցում են երեք անձինք), սակայն ծնողների ապաշխարության և լրացուցիչ այլ պայմանների պարագայում թույլատրում է երեխայի մկրտությունը, քանի որ մանուկը ծնողների որոշման համար պատասխանատվություն չի կրում և պետք է մկրտությամբ քրիստոնյա դառնալու և դրա միջոցով հոգու փրկու-

[196] Տե՛ս նույն տեղում, էջ 427:

թյան հնարավորությունից չպիտի զրկվի[197]: Ռուս Ուղղափառ Եկեղեցու դիրքորոշումը և համայնքների հետ բարոյախրատական աշխատանքը կարևոր նշանակություն են ունեցել ՌԴ-ում նաև հղիության արհեստական ընդհատման ցուցանիշները մի քանի անգամ նվազեցնելու գործում, սակայն դեռևս թույլ ազդեցություն ունեն ամուսնալուծությունների նվազեցման հարցում:

Ազգային-պահպանողական կառույցի նորմատիվ ավանդույթների ժառանգությունը գաղափարական տեսանկյունից հնարավոր է դիտարկել պետական ժողովրդագրական քաղաքականության տարբեր ուղղությունները, մասնավորապես՝ ժողովրդագրական զարգացման ազգային ծրագրի սոցիալ-հոգեբանական միջոցառումները մշակելիս և իրագործելիս: Կարևորագույն նշանակություն ունի այն հանգամանքը, որ Հայոց Եկեղեցում Պասկի սրբազան խորհրդի արժևորումը կանխարգելիչ (պրևենտիվ) նշանակություն ունի ամուսնության հնարավոր լուծման ճանապարհին, քանի որ այն բացառում է նման որոշման կամայականությունը, սահմանում է միայն բացառիկ դեպքեր, որոնք իրենց հերթին բացառում են ամուսնական զույգի՝ բաժանության միտված կամայական քմահաճությունը: Քրիստոնեական բարոյականությունը պահանջում է տղամարդու և կնոջ կողմից փոխադարձ պարտավորություններ, ընդ որում՝ անառարկելի պարտավորություն է ամուսնական հավատարմությունը[198]: Հատկանշական է, որ ամուսնության նպատակը որդե-

---

[197] Տե՛ս «Выбор родителей: деторождение или контрацепция? О современных репродуктивных технологиях», Допущено к распространению Издательским советом Русской Православной Церкви, Москва, 2017, էջ 149-160:

[198] Տե՛ս «Հայ մատենագիրները Սուրբ Պասկի խորհրդի մասին (Ե.-ԺԸ. դարեր)», էջ 24:

ծնությունն է[199], այսինքն՝ Եկեղեցու տեսանկյունից Պսակը կնոջ և տղամարդու ինքնանպատակ միություն չէ, այլ ունի հստակ նպատակ, որն ուղղակիորեն կապված է ժողովրդագրության հետ՝ միտված է ապահովելու բնակչության վերարտադրությունը, հետևաբար սույն գաղափարը հնարավոր է պետական ժողովրդագրական քաղաքականության քարոզչա-դաստիարակչական միջոցառումներում կիրառել: Նույն նպատակով կարելի է օգտագործել նաև այն դրույթները, որոնցով երեխաների իրավունքները ստանում են նաև բարոյական պաշտպանություն, որովհետև քրիստոնեական բարոյագիտությունը ներառում է ծնողի կողմից դաստիարակչական պարտավորություններ, որոնց միջոցով, ինչպես պատգամում էր Պողոս առաքյալը, պետք է գոհացվեն երեխայի ֆիզիկական, հոգեմտավոր և կրոնաբարոյական կարիքները[200]: Կարևոր է նաև այն, որ քրիստոնեական բարոյագիտության մեջ խրատներն ուղղված են թե՛ ծնողներին և թե՛ երեխաներին, հետևաբար սահմանվում են փոխադարձ պարտականություններ և իրավունքներ, այսինքն՝ ստեղծվում է ընտանեկան ներդաշնակության միջավայր, որը նաև հոգևոր և հոգեբանական իմաստով առողջ հասարակության կարևորագույն գրավական է: Այդ իսկ պատճառով, հաշվի առնելով Սուրբգրային խրատները, Եկեղեցու Հայրերի պատգամները, Ժողովական և Կանոնագրային սահմանումները, ինչպես նաև հասարակության ներդաշնակության կարևորությունը՝ կարծում ենք, որ ՀՀ ժողովրդագրական քաղաքականության սոցիալ-հոգեբանական միջոցառումների մշակման մեջ Եկեղեցու դերը պետք է նկատի առնվի:

---

[199] Տե՛ս նույն տեղում, էջ 25:
[200] Տե՛ս նույն տեղում:


Մշտական բնակչության թվաքանակն ըստ տարիների 1990-2023թ. (1000 մարդ)
4,000
3,500
3,000
2,500
2,000
1,500
1,000
500
3,515 3,575 3,633 3,464 3,357 3,260 3,249 3,246 3,238 3,232 3,227 3,215 3,213 3,208 3,191 3,174 3,156 3,137 3,117 3,097 3,077 3,055 3,035 3,019 3,021 3,027 3,017 3,011 2,999 2,986 2,973 2,965 2,960 2,963 2,961 2,977
2,417 2,474 2,503 2,359 2,275 2,166 2,149 2,138 2,123 2,112 2,096 2,076 2,066 2,063 2,049 2,035 2,021 2,005 1,992 1,976 1,959 1,942 1,925 1,911 1,913 1,918 1,914 1,913 1,907 1,901 1,896 1,895 1,892 1,896 1,892 1,898
1,098 1,101 1,130 1,105 1,082 1,094 1,100 1,108 1,115 1,121 1,131 1,139 1,147 1,146 1,142 1,139 1,135 1,131 1,126 1,122 1,118 1,114 1,110 1,108 1,109 1,109 1,103 1,098 1,092 1,085 1,077 1,070 1,068 1,068 1,069 1,079
1990 1991 1992 1993 1994 1995 1996 1997 1998 1999 2000 2001 2001¹ 2002* 2003* 2004* 2005* 2006* 2007* 2008* 2009* 2010* 2011* 2011¹ 2012 2013 2014 2015 2016 2017 2018 2019 2020 2021 2022 2023
Ընդամենը բնակչություն
Քաղաքային բնակչություն
Գյուղական բնակչություն


Քաղաքային և գյուղական բնակչությունը 1990-2023թ.
(տոկոսով՝ ընդամենի նկատմամբ)
80
75
70
65
60
55
50
45
40
35
30
68.8 69.2 68.9 68.1 67.8 66.4 66.2 65.9 65.6 65.3 64.9 64.6 64.3 64.3 64.2 64.1 64 63.9 63.9 63.8 63.7 63.5 63.4 63.3 63.3 63.3 63.4 63.5 63.6 63.7 63.8 63.9 63.9 64.0 63.9 63.8
31.2 30.8 31.1 31.9 32.2 33.6 33.8 34.1 34.4 34.7 35.1 35.4 35.7 35.7 35.8 35.9 36 36.1 36.1 36.2 36.3 36.5 36.6 36.7 36.7 36.7 36.6 36.5 36.4 36.3 36.2 36.1 36.1 36.0 36.1 36.2
1990 1991 1992 1993 1994 1995 1996 1997 1998 1999 2000 2001 2001¹ 2002* 2003* 2004* 2005* 2006* 2007* 2008* 2009* 2010* 2011* 2011¹ 2012 2013 2014 2015 2016 2017 2018 2019 2020 2021 2022 2023
Քաղաքային բնակչություն (տոկոսով՝ ընդամենի նկատմամբ)
Գյուղական բնակչություն (տոկոսով՝ ընդամենի նկատմամբ)





	1991	1992	1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002*	2003*	2004*	2005*	2006*	2007*	2008*	2009*	2010*	2011*	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
ՀՀ բնակչություն,	15.1	12.6	9.2	8.0	7.4	7.1	6.1	5.0	3.8	3.1	2.5	2.1	3.1	3.7	3.5	3.3	4.3	4.4	5.5	5.5	5.1	4.9	4.8	5.1	4.6	4.1	3.5	3.6	3.4	0.1	0.8	3.3
Քաղաքային բնակչություն,	13.2	10.9	7.2	6.0	5.7	6.0	5.2	4.3	3.2	2.8	2.2	2.0	2.8	3.5	3.2	2.9	4.0	4.2	5.2	5.0	4.7	5.0	4.9	5.4	4.9	4.3	3.8	4.0	3.6	0.3	-0.3	1.1
Գյուղական բնակչություն,	19.4	16.3	13.5	12.2	10.7	9.3	8.4	6.0	5.1	4.1	3.0	2.3	3.5	4.2	3.9	3.8	4.3	4.3	5.2	5.5	4.8	4.8	4.7	4.6	4.1	3.8	3.1	3.0	2.8	-0.4	2.7	7.1


ՀՀ բնական հավելաճ ըստ բնակավայրի տիպի, 1991-2022
ՀՀ բնակչություն
Քաղաքային
Գյուղական


Ծնելության, մահացության և բնական հավելաճի գործակից
(1000 բնակչի հաշվով, ‰)
Ծնելիության գործակից
Մահացության գործակից
Բնական հավելաճի գործակից


Ծնելության, մահացության և բնական հավելաճի գործակից.
քաղաքային բնակչություն (1000 բնակչի հաշվով,‰)
Քաղաքային բնակչություն, Ծնելիության գործակից
Քաղաքային բնակչություն, Մահացության գործակից
Քաղաքային բնակչություն, Բնական հավելաճի գործակից
25.0
20.0
15.0
10.0
5.0
-
(5.0)
1991 1992 1993 1994 1995 1996 1997 1998 1999 2000 2001 2002* 2003* 2004* 2005* 2006* 2007* 2008* 2009* 2010* 2011* 2012 2013 2014 2015 2016 2017 2018 2019 2020 2021 2022
19.5 18.1 15.2 13.5 13.5 13.7 12.6 11.6 10.7 10.3 9.8 10.1 11.1 11.5 11.5 11.5 12.3 12.6 13.6 13.6 13.2 14.2 14.0 14.6 14.2 13.9 13.0 12.8 12.5 13.4 12.1 10.4
6.3 7.2 8.0 7.5 7.8 7.7 7.4 7.3 7.5 7.5 7.6 8.1 8.3 8.0 8.3 8.6 8.3 8.4 8.4 8.6 8.5 9.2 9.1 9.2 9.3 9.6 9.2 8.8 8.9 13.2 12.4 9.3
13.2 10.9 7.2 6.0 5.7 6.0 5.2 4.3 3.2 2.8 2.2 2.0 2.8 3.5 3.2 2.9 4.0 4.2 5.2 5.0 4.7 5.0 4.9 5.4 4.9 4.3 3.8 4.0 3.6 0.3 -0.3 1.1


Ծնելության, մահացության և բնական հավելաճի գործակից.
գյուղական բնակչություն (1000 բնակչի հաշվով,‰)
Գյուղական բնակչություն, Ծնելիության գործակից
Գյուղական բնակչություն, Մահացության գործակից
Գյուղական բնակչություն, Բնական հավելաճի գործակից
30.0
25.0
20.0
15.0
10.0
5.0
-
(5.0)
1991 1992 1993 1994 1995 1996 1997 1998 1999 2000 2001 2002* 2003* 2004* 2005* 2006* 2007* 2008* 2009* 2010* 2011* 2012 2013 2014 2015 2016 2017 2018 2019 2020 2021 2022
26.3 23.8 21.7 19.5 18.1 17.0 15.3 13.3 12.5 11.4 10.3 10.0 11.5 12.2 11.9 12.0 12.6 12.9 13.9 14.1 13.4 13.8 13.6 13.8 13.4 13.0 12.1 11.5 11.5 10.3 12.9 15.6
6.9 7.5 8.2 7.3 7.4 7.7 6.9 7.3 7.4 7.3 7.3 7.7 8.0 8.0 8.0 8.2 8.3 8.6 8.7 8.6 8.6 9.0 8.9 9.2 9.3 9.2 9.0 8.5 8.7 10.8 10.2 8.5
19.4 16.3 13.5 12.2 10.7 9.3 8.4 6.0 5.1 4.1 3.0 2.3 3.5 4.2 3.9 3.8 4.3 4.3 5.2 5.5 4.8 4.8 4.7 4.6 4.1 3.8 3.1 3.0 2.8 -0.4 2.7 7.1



	1991	1992	1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002*	2003*	2004*	2005*	2006*	2007*	2008*	2009*	2010*	2011*	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
ՀՀ բնակչություն,	21.6	19.9	17.3	15.5	15.0	14.8	13.5	12.2	11.3	10.6	10.0	10.1	11.3	11.8	11.9	12.0	12.9	13.3	14.5	14.7	14.3	14.0	13.8	14.3	13.9	13.5	12.6	12.3	12.2	12.3	12.4	12.3
Քաղաքային բնակչություն,	19.5	18.1	15.2	13.5	13.5	13.7	12.6	11.6	10.7	10.3	9.8	10.1	11.1	11.5	11.5	11.5	12.3	12.6	13.6	13.6	13.2	14.2	14.0	14.6	14.2	13.9	13.0	12.8	12.5	13.4	12.1	10.4
Գյուղական բնակչություն,	26.3	23.8	21.7	19.5	18.1	17.0	15.3	13.3	12.5	11.4	10.3	10.0	11.5	12.2	11.9	12.0	12.6	12.9	13.9	14.1	13.4	13.8	13.6	13.8	13.4	13.0	12.1	11.5	11.5	10.3	12.9	15.6



	1991	1992	1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002*	2003*	2004*	2005*	2006*	2007*	2008*	2009*	2010*	2011*	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
ՀՀ բնակչություն,	6.5	7.3	8.1	7.5	7.6	7.7	7.4	7.2	7.5	7.5	7.5	8.0	8.2	8.1	8.4	8.7	8.6	8.9	9.0	9.2	9.2	9.1	9.0	9.2	9.3	9.4	9.1	8.7	8.8	12.3	11.6	9.0
Քաղաքային բնակչություն,	6.3	7.2	8.0	7.5	7.8	7.7	7.4	7.3	7.5	7.5	7.6	8.1	8.3	8.0	8.3	8.6	8.3	8.4	8.4	8.6	8.5	9.2	9.1	9.2	9.3	9.6	9.2	8.8	8.9	13.2	12.4	9.3
Գյուղական բնակչություն,	6.9	7.5	8.2	7.3	7.4	7.7	6.9	7.3	7.4	7.3	7.3	7.7	8.0	8.0	8.0	8.2	8.3	8.6	8.7	8.6	8.6	9.0	8.9	9.2	9.3	9.2	9.0	8.5	8.7	10.8	10.2	8.5


ՀՀ քաղաքային բնակչության ծնելիության և մահացության բանակական ցուցանիշները
55,000
50,000
45,000
40,000
35,000
30,000
25,000
20,000
15,000
10,000
5,000
48,439
43,972
35,316
29,958
29,131
29,388
26,904
24,535
22,458
21,390
20,328
20,804
22,629
23,628
23,762
23,793
25,519
26,176
28,260
28,263
27,613
27,123
26,798
27,874
27,124
26,474
24,611
24,259
23,704
25,341
22,860
19,666
15,777
17,431
18,555
16,725
16,763
16,481
15,783
15,474
15,834
15,682
15,654
16,737
16,870
16,531
17,128
17,689
17,213
17,451
17,433
17,838
17,832
17,603
17,393
17,647
17,743
18,257
17,418
16,687
16,908
24,923
23,513
17,612
1991
1992
1993
1994
1995
1996
1997
1998
1999
2000
2001
2002*
2003*
2004*
2005*
2006*
2007*
2008*
2009*
2010*
2011*
2012
2013
2014
2015
2016
2017
2018
2019
2020
2021
2022
քաղաքային ծնելիություն
քաղաքային մահացություն


ՀՀ գյուղական բնակչության ծնելիության և մահացության քանակական ցուցանիշները 1991-2022թթ
գյուղական ծնելիություն
գյուղական մահացություն
35,000
30,000
25,000
20,000
15,000
10,000
5,000
29,386
26,609
23,725
21,185
19,829
18,746
17,025
14,831
14,044
12,886
11,737
11,425
13,164
13,892
13,737
13,846
14,586
15,009
16,153
16,562
15,727
15,357
14,992
15,157
14,639
14,118
13,089
12,315
12,337
11,012
13,763
16,709
7,648
8,393
8,945
7,927
8,079
8,455
8,202
7,736
8,253
8,343
8,349
8,817
9,144
9,148
9,251
9,513
9,617
9,961
10,127
10,083
10,131
9,996
9,803
10,067
10,135
9,969
9,739
9,064
9,278
11,510
10,875
9,080
1991
1992
1993
1994
1995
1996
1997
1998
1999
2000
2001
2002*
2003*
2004*
2005*
2006*
2007*
2008*
2009*
2010*
2011*
2012
2013
2014
2015
2016
2017
2018
2019
2020
2021
2022


ՀՀ բնակչության ծնելիության քանակական ցուցանիշներն ըստ գյուղ./քաղաք. բաշխվածության 1991-2022թթ.
ՀՀ բնակչություն ծնելիություն
քաղաքային ծնելիություն
գյուղական ծնելիություն
75,000
65,000
55,000
45,000
35,000
25,000
15,000
5,000
77,825 70,581 59,041 51,143 48,960 48,134 43,929 39,366 36,502 34,276 32,065 32,229 35,793 37,520 37,499 37,639 40,105 41,185 44,413 44,825 43,340 42,480 41,790 43,031 41,763 40,592 37,700 36,574 36,041 36,353 36,623 36,375
48,439 43,972 35,316 29,958 29,131 29,388 26,904 24,535 22,458 21,390 20,328 20,804 22,629 23,628 23,762 23,793 25,519 26,176 28,260 28,263 27,613 27,123 26,798 27,874 27,124 26,474 24,611 24,259 23,704 25,341 22,860 19,666
29,386 26,609 23,725 21,185 19,829 18,746 17,025 14,831 14,044 12,886 11,737 11,425 13,164 13,892 13,737 13,846 14,586 15,009 16,153 16,562 15,727 15,357 14,992 15,157 14,639 14,118 13,089 12,315 12,337 11,012 13,763 16,709
1991 1992 1993 1994 1995 1996 1997 1998 1999 2000 2001 2002* 2003* 2004* 2005* 2006* 2007* 2008* 2009* 2010* 2011* 2012 2013 2014 2015 2016 2017 2018 2019 2020 2021 2022


ՀՀ բնակչության մահացության բանակական ցուցանիշներն ըստ գյուղ./քաղաք. բաշխվածության 1991-2022թթ.
ՀՀ բնակչություն մահացություն
քաղաքային մահացություն
գյուղական մահացություն
45,000
40,000
35,000
30,000
25,000
20,000
15,000
10,000
5,000
1991 1992 1993 1994 1995 1996 1997 1998 1999 2000 2001 2002* 2003* 2004* 2005* 2006* 2007* 2008* 2009* 2010* 2011* 2012 2013 2014 2015 2016 2017 2018 2019 2020 2021 2022
23,425 25,824 27,500 24,652 24,842 24,936 23,985 23,210 24,087 24,025 24,003 25,554 26,014 25,679 26,379 27,202 26,830 27,412 27,560 27,921 27,963 27,599 27,196 27,714 27,878 28,226 27,157 25,751 26,186 36,433 34,388 26,692
15,777 17,431 18,555 16,725 16,763 16,481 15,783 15,474 15,834 15,682 15,654 16,737 16,870 16,531 17,128 17,689 17,213 17,451 17,433 17,838 17,832 17,603 17,393 17,647 17,743 18,257 17,418 16,687 16,908 24,923 23,513 17,612
7,648 8,393 8,945 7,927 8,079 8,455 8,202 7,736 8,253 8,343 8,349 8,817 9,144 9,148 9,251 9,513 9,617 9,961 10,127 10,083 10,131 9,996 9,803 10,067 10,135 9,969 9,739 9,064 9,278 11,510 10,875 9,080


Ամուսնության միջին տարիքը ՀՀ-ում 2012-2022
33.0
32.0
31.0
30.0
29.0
28.0
27.0
26.0
25.0
29.7
30.2
30.8
30.7
30.8
31.1
31.3
31.7
31.6
32.4
32.7
25.9
26.5
27.3
27.1
27.2
27.5
27.7
28.0
27.9
28.7
28.9
2012
2013
2014
2015
2016
2017
2018
2019
2020
2021
2022
Տղամարդ
Կին


Առաջին անգամ մայրանալու միջին տարիքը ՀՀ-ում,
ըստ բնակավայրի տիպի, 2012-2022թթ.
27.0
26.0
25.0
24.0
23.0
22.0
24.5
24.8
25.0
25.2
25.4
25.6
25.9
25.9
26.3
26.4
26.8
23.8
24.1
24.3
24.4
24.7
24.8
25.1
25.2
25.6
25.7
25.9
22.4
22.7
22.9
22.9
23.2
23.2
23.3
23.5
23.6
24.2
24.8
2012
2013
2014
2015
2016
2017
2018
2019
2020
2021
2022
ՀՀ
Քաղաքային
Գյուղական


Մայրանալու միջին տարիքը ՀՀ-ում, ըստ բնակավայրի տիպի,
2012-2022թթ.
30.0
29.0
28.0
27.0
26.0
25.0
24.0
26.1
26.5
26.8
27.1
27.4
27.7
28.0
28.3
28.6
29.1
29.6
25.5
25.8
26.1
26.4
26.8
27.0
27.3
27.6
28.0
28.4
28.7
24.4
24.7
24.9
25.1
25.5
25.7
25.9
26.3
26.6
27.3
27.7
2012
2013
2014
2015
2016
2017
2018
2019
2020
2021
2022
ՀՀ
Քաղաք
Գյուղ


ՀՀ-ում գրանցված ամուսնություններ ու ամուսնալուծություններ, 1996-2022թթ.
25,000
20,000
15,000
10,000
5,000
-
14,234 12,521 11,365 12,459 10,986 12,302 13,682 15,463 16,975 16,624 16,887 18,145 18,465 18,773 17,984 19,706 19,063 18,363 18,912 17,603 16,294 15,214 14,822 15,561 12,179 17,165 16,795
2,604 2,317 1,612 1,253 1,343 1,776 1,684 1,820 1,968 2,466 2,797 2,931 3,031 2,829 2,997 3,188 3,250 3,756 4,496 3,670 3,648 3,940 3,820 3,880 3,155 4,434 4,525
1996 1997 1998 1999 2000 2001 2002* 2003* 2004* 2005* 2006* 2007* 2008* 2009* 2010* 2011* 2012 2013 2014 2015 2016 2017 2018 2019 2020 2021 2022
Ամուսնության ակտ
Ամուսնալուծության ակտ


ՀՀ-ում և Երևանում ամուսնալուծությունների հարաբերակցությունը ամուսնություններին, 1996-2022թթ. (%)
40%
35%
30%
25%
20%
15%
10%
5%
0%
ՀՀ (%)
Երևան (%)
31% 29% 23% 15% 19% 21% 19% 18% 17% 20% 21% 19% 20% 18% 21% 21% 21% 23% 24% 22% 24% 26% 29% 29% 31% 34% 38%
18% 19% 14% 10% 12% 14% 12% 12% 12% 15% 17% 16% 16% 15% 17% 16% 17% 20% 24% 21% 22% 26% 26% 25% 26% 26% 27%
1996 1997 1998 1999 2000 2001 2002* 2003* 2004* 2005* 2006* 2007* 2008* 2009* 2010* 2011* 2012 2013 2014 2015 2016 2017 2018 2019 2020 2021 2022





